



www.osi.am



www.shirakcentre.org

«ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ»

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԿ



ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԱՆՕԹԵՎԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

ԶԵԿՈՒՅՑ

2010-2011

**Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած
ընտանիքներին պետական աջակցությամբ բնակարանների հատկացման
գործընթացի մոնիտորինգի զեկույց (2010-2011 թթ.)**

**Քաղաքական մշակույթի և համաձայնությունների
զարգացման «Շիրակ կենտրոն» ՀԿ**

Շիրակի մարզ, 3104, Գյումրի,
Վարպետաց 176, 301
Հեռ. +(374 312) 6 -69-92
+(37 91) 45-13-37

E-mail: info@shirakcentre.org
Վեբ կայք. www.shirakcentre.org

Բնակարանների բաշխման գործընթացի մոնիտորինգ աղետի գոտում: Ձեկույց

Քաղաքական մշակույթի և համաձայնությունների զարգացման «Շիրակ կենտրոն»
ՀԿ, 2011 թ., 92 էջ

Ձեկույցն արտացոլում է «Շիրակ կենտրոնի» կողմից 2010 թ. դեկտեմբերից մինչև 2011 թ. նոյեմբեր ամիսը, «Աղետի գոտու անօթևանների իրավունքների պաշտպանություն, 2010-2011 թթ. բնակարանաշինության և բնակարանների բաշխման գործընթացում հրապարակականության ապահովում և մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում, Գյումրիում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին պետական աջակցությամբ բնակարանների հատկացման գործընթացի դիտարկման արդյունքները:

Ծրագիրն իրականացվել է

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստանի դրամաշնորհային օժանդակությամբ: Արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել օժանդակող կազմակերպության դիրքորոշման հետ:

Ձեկույցը ազատորեն, թղթային կամ էլեկտրոնային եղանակով, կարող է բազմացվել, տարածվել և օգտագործվել ոչ առևտրային նպատակով, միայն այն պայմանով, որ օգտագործելիս, որպես աղբյուր, հղում կատարվի հեղինակին՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ-ին:

Ձեկույցը պատրաստել են

*Ծրագրի ղեկավար՝ Վահան Թումասյան
Ծրագրի համակարգող՝ Աիդա Խաչատրյան
Խմբագիր՝ Գեղամ Մկրտչյան
Աշխատանքային խումբ՝
Նարեկ Թումասյան, Լիլիթ Գրիգորյան,
Անի Դավթյան*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....	6
2. Մեթոդաբանություն.....	8
3. Օրենսդրություն.....	10
4. Բնակարանաշինություն.....	18
5. Բնակբաշխման պրակտիկան.....	21
6. Դիտարկումների արդյունքներ.....	25
6.1 2011 թվականին բնակարանային գործերի շարժի թվային աղյուսակներ.....	37
7. Եզրակացություն.....	42
7.1 Ձեռքբերումներ.....	45
7.2 Առաջարկություններ.....	49
8. Նամակներ, դիմում - ուղերձներ, հայտարարություններ և պատասխաններ.....	52
9. ԶԼՄ լուսաբանումներ.....	81
10. Օգտագործված գրականության ցանկ.....	94

1. Ներածություն

«Շիրակ կենտրոնը» ՀՀ կառավարության կողմից աղետի գոտում երկրաշարժից անօթևան ընտանիքներին բնակարանների հատկացման երկրորդ փուլում՝ 2010-2011 թթ. ևս իրականացրեց բնակարանների բաշխման գործընթացի մոնիտորինգ:

Ի տարբերություն նախորդ՝ 2009-2010 թթ. բնակբաշխման գործընթացի, 2011 թվականին նման ծրագիր իրականացնելը մի կողմից դյուրին էր. ունեինք համապատասխան փորձ և տեղեկատվական բազա, մյուս կողմից էլ առավել դժվար էր, քանի որ ընթացիկ տարում հատկացվեց 700-ով ավելի՝ 1756 բնակարան:

Բնակարանների հատկացման 2-րդ փուլում ՀՀ կառավարությունը մի շարք փոփոխություններ կատարեց աղետի գոտու երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքների բնակարանային ապահովման կարգը սահմանող որոշումներում: Փոփոխություններից մեկով բացակա անդամ ունեցող անօթևան ընտանիքներին թույլատրվեց բացակա անդամի փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության մասին նոտարական կարգով հաստատված գրավոր հայտարարությամբ մասնակցել բնակբաշխման գործընթացին: Սակայն որոշումից կարճ ժամանակ անց նման խնդիրներ ունեցող տասնյակ ընտանիքներ բողոքեցին մարզի նոտարական գրասենյակների կողմից այդ հայտարարությունների վավերացման խոչընդոտներ ստեղծելու վերաբերյալ: Անհրաժեշտ ուսումնասիրություններ կատարելուց հետո մեր կողմից հնչեցվեց հրապարակային ահազանգ՝ բաց նամակի տեսքով, ուղղված ՀՀ բարձրագույն իշխանություններին: Հրապարակումից հետո նոտարական գրասենյակները փոխեցին իրենց գործելակերպը և սկսեցին առանց որևէ խոչընդոտի վավերացնել անօթևան ընտանիքների բացակա անձանց վերաբերյալ հայտարարությունները:

Բնակարանների բաշխման գործընթացին անօթևանների մասնակցությանը ևս մեկ խոչընդոտ էլ ստեղծել էր ՀՀ պետկադաստրը: Վերջինս, պատճառաբանելով իրենց տեղեկատվական բազայի թերի լինելը, ընտանիքների անդամների մասին տալիս էր սխալ տեղեկանքներ, որոնց համաձայն իբր թե անօթևաններից շատերը նույնիսկ մի շարք բնակարաններ ունեին ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության այլ քաղաքներում: Նման տեղեկանքների տրամադրման պատճառով անօթևան ընտանիքները ներքաշվում էին քաջքշուկի և թղթարարության մեջ: Նրանք ինքնուրույն պետք է կարողանային ապացուցել, որ իրենք բնակարաններ չունեն, հակառակ դեպքում կգրկիվեին բնակարան ստանալու իրենց իրավունքից: Մեր բազմաթիվ բողոքների և ՀՀ բարձրագույն իշխանություններին ուղղված դիմում-ուղերձների արդյունքը եղավ այն, որ սեփականություն ունենալու մասին տվյալների ճշգրտումը սկսեց իրականացնել ՀՀ քաղաքաշինության նախարարությունը պետկադաստրի հետ միասին:

ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում կատարված փոփոխություններից մեկով էլ անօթևան ընտանիքների փաստաթղթերի հանձնման վերջնաժամկետ սահմանվեց 2011 թվականի նոյեմբերի 1-ը: Որոշումը կայացնելու ժամանակ դեռևս 1400 ընտանիքների փաստաթղթային փաթեթները ամբողջովին համալրված չէին: Ուստի մենք որոշեցինք հոկտեմբեր ամիսը հայտարարել անօթևան ընտանիքներին աջակցելու և իրազեկելու լայնածավալ գործողությունների ամիս, ընդգրկելով Գյումրիում գործող ՁԼՄ-ների ու քաղաքացիական հասարակության այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ:

Որպես եզրակացություն նշենք, որ մոնիտորինգն իրականացնելիս թեև լուրջ խոչընդոտների չհանդիպեցինք, սակայն ակնհայտ էր մի բան. Հայաստանում՝ հասարակական մասնակցության ավանդույթի բացակայության պայմաններում, հանրային նշանակության աշխատանքներին քաղաքացիական կառույցների մասնակցությունն իշխանությունները սովորաբար ընկալում են իբրև իրենց վերահսկելու փորձ և ոչ ամենևին որպես աջակցություն:

Մի դիտարկում ևս: Բնակրաշխման գործընթացի օրինական ճանապարհով ընթանալուն ուղղված յուրաքանչյուր քայլից հետո ականա մեզ մեղավոր էինք զգում, որ նախկինում չենք փորձել մասնակցություն ունենալ և նպաստել, որպեսզի անցած տարիներին իրականացված բնակրաշխումներում տեղ չգտնեին այնպիսի աղաղակող օրինախախտումներ, որոնց մասին մինչև օրս Գյումրիում խոսում են: Ի դեպ, եթե բնակարանները նախկինում հատկացվեին արդարացի, ներկայումս անհամեմատ պակաս թվով անօթևաններ կունենայինք: Էլ չենք խոսում անօթևաններին բնակրաշխման յուրաքանչյուր փուլում հասցված հոգեբանական հարվածի ու հիասթափության մասին:

Առհասարակ պետական ու տարածքային նման լայնամասշտաբ ծրագրերում հասարակական մասնակցության և առավելագույն հրապարակայնության ապահովումը լավագույն նախապայմաններից մեկն է դրանցում կոռուպցիոն դրսևորումների բացառման կամ առավելագույնս նվազեցման համար: Թերևս այդ նպատակով դիտարկումից բացի բնակրաշխման գործընթացում ապահովեցինք առավելագույն հրապարակայնություն, լուսաբանեցինք բնակրաշխման գործընթացի շրջանակներում տեղի ունեցած բոլոր գործողությունները, ընդունված որոշումները, հրամանները: ՀՀ «Տեղեկատվության ազատության» մասին օրենքի կիրառմամբ ՏԻՄ, մարզային և ՀՀ իշխանություններից ստանալով աղետի գոտու բնակարանների բաշխման գործընթացի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունները, մեր կողմից պատրաստված այլ նյութերի հետ մեկտեղ տարածեցինք՝ տրամադրելով ՋԼՄ-ներին, միջազգային և տեղական կազմակերպություններին, ինչպես նաև ամբողջովին տեղադրեցինք մեր կայքում:

Հաշվի առնելով, որ մեր շահառուների գերակշիռ մասը համացանցից օգտվելու հնարավորություն չունի, նախաձեռնեցինք «Օթևան» անվանումը կրող ամենամսյա տեղեկագրի տպագրումը: Այդ քայլը շահառուներին իրազեկելու գործողություններն առավել դյուրին դարձրեց: Տեղեկագրի բոլոր համարների էլեկտրոնային տարբերակները նույնպես տեղադրված են մեր՝ www.shirakcentre.org վեբ կայքում:

Ծրագրի շրջանակներում պատրաստված բոլոր նյութերը տեխնիկապես հնարավոր չէր ընդգրկել զեկույցի մեկ գրքում, ուստի մենք ներառել ենք դրանց ընդամենը մի մասը՝ առավել կարևորները:

«Շիրակ կենտրոն» ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր աջակցեցին ծրագրի հաջող իրականացմանը:

2. Մեթոդաբանություն

Որպես մոնիտորինգի ենթակա հիմնական փաստաթուղթ մենք ընդունեցինք «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հանձնաժողովի» 2011 թվականի նիստերի արձանագրությունները, յուրաքանչյուր նիստից հետո մանրագնին դիտարկման ենթարկելով Գյումրու և Ախուրյան համայնքի անօթևանների հերթացուցակում հաշվառված և տվյալ նիստում քննարկված անձանց գործերը:

Դիտարկման հիմնական մեթոդոլոգիան հետևյալն էր. բնակարան ստանալու հավակնորդ ընտանիքների ցուցակներում հաշվառված անձանց տվյալների համեմատում նախկինում բնակարան ստացած ընտանիքների ցուցակներում առկա տվյալների հետ՝ պարզելու համար, թե բնակբաշխման ներկա փուլով բնակարան ստանալու հավակնորդ ընտանիքների անդամներից որևէ մեկը արդյո՞ք նախկինում չի օգտվել պետության կողմից բնակարան ստանալու իր իրավունքից: Դիտարկման արդյունքներով առանձնացրինք որոշակի խնդիրներ ունեցող ընտանիքների ցուցակները, ապա այդ ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության հարցումներ հղեցինք ՀՀ քաղաքաշինության նախարարին: Թեև մեր կողմից առանձնացված և բնակարան ստանալու հավակնորդ ճանաչված այդ ընտանիքների վերաբերյալ ստացել ենք անհրաժեշտ տեղեկատվություն և պարզաբանումներ, սակայն զերծ ենք մնում այդ տեղեկությունների հրապարակումից, քանի որ դրանցում առկա են նաև գուտ անձնական տվյալներ:

Մենք իրականացրինք նաև Գյումրու անօթևանների հերթացուցակի ամբողջական դիտարկում նախքան բնակարանների հատկացման մասին ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանագրերի հրապարակումը, հետևյալ մեթոդաբանությամբ.

1. Գյումրու անօթևանների հերթացուցակում առանձնացվեցին այն ընտանիքները, որոնք նախորդ տարի Մուշ-2 թաղամասում բնակարան էին ստացել,
2. բնակարան ստանալու հավակնորդ ընտանիքների նախկին հասցեները համեմատեցինք երկրաշարժից հետո մինչև 2008 թ. ներառյալ բնակարան ստացած անձանց ցուցակում առկա ընտանիքների հասցեների հետ և առանձնացվեցին բոլոր այն անձանց անուն-ազգանունները, որոնց փլված բնակարանների դիմաց նախկինում արդեն բնակարանային փոխհատուցում էր եղել,
3. Գյումրու անօթևանների հերթացուցակում հատուկ նշում կատարեցինք այն անձանց անուն-ազգանունների դիմաց, որոնք նախորդ տարի բնակարաններ են ստացել, սակայն մեկ կամ մի քանի ամիս հետո ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանով չեղյալ են հայտարարվել նրանց բնակարան հատկացնելու որոշումները,
4. անօթևանների հերթացուցակում նշում կատարեցինք նաև այն անձանց անուն-ազգանունների դիմաց, որոնք բնակարան ստանալու խնդիրներով դիմել էին մեզ,
5. բնակարան ստանալու հավակնորդ անձանց կողմից երկրաշարժի պահին տնօրինվող բնակարանների հասցեները համեմատեցինք երկրաշարժին փլված շենքերի հասցեների հետ, որոշակի կասկածներ առաջացրած անձանց գործերը առանձնացվեցին և ներկայացվեցին բնակբաշխման հանձնաժողովին:

Աղետի գոտում նախորդ տարիներին իրականացված բնակբաշխման փորձը ցույց է տալիս, որ կոռուպցիոն ռիսկեր պարունակում է հատկապես բնակարանների հատկացման վերջնական փուլը: Նույնիսկ 2010 թվականին, երբ բնակարանները բաշխվեցին հրապարակային վիճակահանություններով, մի շարք շահառուների շրջանում կար մտահոգություն դրանց ընթացքի արդարացիության վերաբերյալ: Նման մտավախությունները բնակարան ստանալու հավակնորդ ընտանիքների շրջանում առկա են հատկապես այս փուլում, քանի որ ի տարբերություն 2009 թ.-ի՝ ընթացիկ տարում Գյումրիում երկրաշարժից անօթևան ընտանիքների համար բնակելի շենքերը կառուցվել են երկու տարբեր՝ Մուշ-2 և Անի թաղամասերում: Իսկ շահառուների մեծ մասը ձգտում են բնակարաններ ստանալ Անի թաղամասից, որն առավել հին թաղամաս է, համեմատաբար ավելի մոտ է քաղաքին և ունի կենսապահովման պայմաններ:

Բազմաթիվ անօթևաններ էլ, այցելելով մեր գրասենյակ, իրենց մտահոգությունները հայտնեցին, թե իբր Անի թաղամասում շահագործման հանձնվելիք բնակարանների տերերն ի սկզբանե հայտնի են: Այդ մարդկանց պնդմամբ՝ շատ պաշտոնյաներ բնակարան ստանալու հավակնորդ իրենց հարազատներին և մերձավորներին խոստացել են միջամտել, որ նրանք բնակարաններ ստանան Անի թաղամասից:

Ուստի բնակբաշխման վիճակահանություններում առավել երաշխավորված արդարություն և օրինականություն ապահովելու, շահառուների մեջ առկա մտավախությունը փարատելու և գործընթացի նկատմամբ վստահություն ներշնչելու նպատակով ՀՀ քաղաքաշինության նախարարությանն առաջարկեցինք բնակարանների բաշխման վիճակահանությունների կարգը փոփոխել, դրանք կազմակերպել հետևյալ տարբերակներից մեկով. բնակարանները վիճակահանություններով բաշխել ոչ թե շենք առ շենք, այլ երկու թաղամասում կառուցված շենքերը միասին, ըստ սենյակների թվի՝ 1 սենյականոցները միասին, երկուսները միասին և այդպես շարունակ:

Մենք մեր պատրաստակամությունը հայտնեցինք նաև աջակցելու, որ բնակարանների բաշխման վիճակահանություններն ընթանան թափանցիկ, և այդ նպատակով սեփական տեխնիկական ու ֆինանսական միջոցներով նկարահանելու ու www.shirakcentre.org վեբ կայքում տեղադրելու ենք 2011 թվականին Գյումրիում բնակարանների բաշխման վիճակահանությունների ամբողջ ընթացքի տեսաձայնագրությունները: Մեր առաջարկությունը ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից ընդունվեց:

Այս ծրագրի շրջանակներում մենք ուսումնասիրեցինք նաև բնակարան հատկացնելու մասին ՀՀ քաղաքաշինության նախարարի նախորդ՝ 2010 թ. հրամաններում կատարած փոփոխությունները, այդ ուսումնասիրության արդյունքները ներկայացված են զեկույցի «Դիտարկումների արդյունքներ» բաժնում:

3. Օրենսդրություն

«Մարդու պատշաճ բնակարան ունենալու իրավունքը»*

Ներածություն

Չնայած այն հանգամանքին, որ բնակարանի հետ առնչվող իրավունքները շատ լայն ճանաչում են ստացել միջազգային, տարածաշրջանային և ազգային իրավական համակարգերում, այնուամենայնիվ սակավ են այն իրավունքները, որոնք խախտվում են նույնքան և նույն ուժգնությամբ, որքան մարդու պատշաճ բնակարանի իրավունքը: Թեև դեռ դժվար է ճշգրիտ որոշել, թե ինչ ծավալներ ունեն այս իրավունքից զրկելու դեպքերը, սակայն Միավորված ազգերի կազմակերպության կողմից պարբերաբար հրապարակվող թվերը վկայում են, որ աշխարհում ավելի քան մեկ միլիարդ մարդ չի բնակվում պատշաճ բնակարանում, ևս մեկ միլիոն մարդ առհասարակ անօթևան է: Իրավիճակը տարեցտարի էլ ավելի է վատթարանում, քանի որ մի շարք երկրներում միլիոնավոր մարդիկ բռնի վտարվում են իրենց տներից և հողերից, ինչն ավելի է սաստկացնում բնակարանային իրավունքների ճգնաժամն ամբողջ աշխարհում:

Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության բնակարանային իրավունքների հարցերով նախկին հատուկ զեկուցող Ջաստիս Ռաջինդար Սաչարի՝ բնակարանային իրավունքներին նվիրված վերջին զեկույցի (1995 թ.)՝ բնակարանային իրավունքները պետք է դիտարկվեն և մեկնաբանվեն, ամենաընդհանուր իմաստով, հետևյալ կերպ. ա) նման պարտավորությունները պաշտոնապես ընդունելուն պես պետությունը կփորձի բոլոր հնարավոր միջոցներով բոլորի համար ապահովել այնպիսի բնակարանային ռեսուրսների մատչելիությունը, որոնք բավարար կլինեն առողջության, բարօրության և անվտանգության համար, ինչպես նաև՝ համահունչ կլինեն մարդու այլ իրավունքներին, բ) հասարակությունից կարելի է խնդրել կամ պահանջել, որ տրամադրի կամ մատչելի դարձնի բնակարանային ռեսուրսներն այն դեպքում, երբ մարդը հայտնվել է անօթևան, առանց պատշաճ կացարանի իրավիճակում կամ առհասարակ անկարող է ձեռք բերել բնակարանային իրավունքներին առնչվող իրավունքների փաթեթը և գ) պետությունն իրավական պարտավորություններ ստանձնելուն պես կձեռնարկի մի շարք միջոցներ, որոնց շնորհիվ կցուցադրվի քաղաքական և օրենսդրական ճանաչումը տվյալ իրավունքի յուրաքանչյուր բաղադրիչի նկատմամբ:

Բնակարանային իրավունքների համապատասխան չափանիշները

Պատշաճ բնակարան ունենալու իրավունքը բացահայտ ճանաչում է ստացել մի շարք միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (25-րդ հոդվածի 1-ին կետ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում (ՍՍՄԻՄԴ, 11-րդ հոդվածի 1-ին կետ), Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայում (5-րդ հոդվածի e կետի (iii) ենթակետ), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում (27-րդ հոդված), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում (14-րդ հոդվածի 2-րդ կետ) և Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայում (21-րդ հոդված): Կարելի է նաև հիշատակել Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 115

հանձնարարականը աշխատողների բնակարանի մասին և Աշխատանքի Միջազգային կազմակերպության թիվ 117 կոնվենցիան սոցիալական քաղաքականության մասին (հիմնական չափանիշներ և նպատակներ): Ավելին՝ ըստ մի քանի լրացուցիչ չափանիշների ճանաչում են ստացել նաև միգրանտ աշխատողները, հաշմանդամները, ծերերը և բնիկ ժողովուրդները:

Մարդու իրավունքների տարածաշրջանային համակարգում, որպես բնակարանային իրավունքների մասին կարևոր իրավական աղբյուր, աչքի է ընկնում 1996 թ. վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի (ԵՄԽ) բուն սկզբնական տարբերակը դրույթներ է պարունակում միայն ընտանիքների (16-րդ հոդված), միգրանտ աշխատողների (19-րդ հոդվածի 4-րդ կետ) և ծերերի (ԵՄԽ-ի լրացուցիչ արձանագրության 4-րդ հոդված) բնակարանային իրավունքների վերաբերյալ:

Պետության պարտավորությունները

SUՄԻՄԴ-ի 11-րդ հոդվածի 1-ին կետը լայն ճանաչում է ստացել որպես պատշաճ բնակարանի իրավունքին առնչվող կարևորագույն իրավական աղբյուրներից մեկը: Այն բուռն քննարկումների առարկա է դարձել՝ որոշելու, թե արդյոք բնակարանի իրավունքները հիմնավորված են մարդու իրավունքների գծով միջազգային իրավունքի դրույթներով: SUՄԻՄԴ-ի 11-րդ հոդվածի 1-ի կետում ասվում է հետևյալը.

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ իր ու իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակ, այդ թվում՝ բավարար սննդի, հագուստի ու բնակարանի, կենսապայմանների շարունակական բարելավման իրավունքը: Մասնակից պետությունները կձեռնարկեն պատշաճ միջոցներ այդ իրավունքի իրականացումն ապահովելու համար՝ այս կապակցությամբ ընդունելով ազատ կամքի արտահայտության վրա հիմնված միջազգային համագործակցության կարևոր նշանակությունը:

Եվրոպական սոցիալական խարտիա

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան (1996թ.) ներառում է մի նոր և հստակ հոդված, որն անդրադառնում է բնակարանի իրավունքին: 31-րդ հոդվածն ասում է.

Բնակարանի իրավունք

Բնակարանի իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել՝ ուղղված.

- 1. պատշաճ չափանիշներով բնակարանների մատչելիության խթանմանը,*
- 2. անօթևանության կանխմանն ու կրճատմանը՝ այն աստիճանաբար վերացնելու նկատառումով*
- 3. բնակարանի գինը բավարար միջոցներ չունեցողների համար մատչելի դարձնելուն:*

Եզրակացություններ

Վերջերս տեղի ունեցած շատ ձեռքբերումներ ամրապնդել են բնակարանային նորմերը և դրանց հաղորդել նոր նպատակ ու ներուժ: Սակայն այդ ձեռքբերումները վտանգվեցին մի գործընթացով, որը 1996 թվականի կեսին հանգեցրեց Ստամբուլում

անցկացված Հաբիթաթ 2 համաժողովին: Հանդիպմանը նախորդող երկու տարիների ընթացքում Միացյալ Նահանգները ջանքեր էր գործադրում՝ դիմադրելով բնակարանի իրավունքի բուն գոյությանը:

Այս հակադրությունը բավական տարօրինակ էր, եթե հաշվի առնենք 1949 թ. Բնակարանային ակտը, որում որպես նպատակ ամրագրված է «հնարավորինս շուտ պատշաճ տուն և հարմար կենսապայմաններ ստեղծել յուրաքանչյուր ամերիկյան ընտանիքի համար»: Հասարակական կազմակերպությունների, ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների և մի շարք պետությունների մեծ ջանքերից հետո ԱՄՆ-ի՝ բնակարանային իրավունքները վիժեցնելու փորձերը խափանվեցին, և Հաբիթաթի օրակարգի ամբողջ տեքստում տեղ գտան բնակարանի իրավունքի սպառիչ մեջբերումներ:

Թեպետև բնակարանային իրավունքները պաշտպանելու այս նախաձեռնությունը նշանակալի դեր ունեցավ, այնուամենայնիվ այն լոկ մի օրինակ է միջազգային ասպարեզում այս իրավունքը սատարելու այլ ջանքերի շարքում: ՄԱԿ-ի մի շարք մարմինների կողմից բազմաթիվ բանաձևեր ընդունվեցին, որոնցում հետևողականորեն վերահաստատվեց պատշաճ բնակարանի իրավունքը՝ որպես մարդու հիմնարար իրավունք:

Զգալի կրճատումներով արտատպված է «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ» դասագրքից, Երևան 2009 թ., հեղինակ՝ Սկոտ Լեյկ

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948) հոդված 25-ի համաձայն «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում՝ ապահովելու իրավունք»:

Եվրոպական սոցիալական խարտիայի (1996) հոդված 31-ի համաձայն բնակարանի իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել՝ ուղղված պատշաճ չափանիշներով բնակարանների մատչելիության խթանմանը, անօթևանության կանխմանն ու կրճատմանը՝ այն աստիճանաբար վերացնելու նկատառումով, բնակարանի գինը բավարար միջոցներ չունեցողների համար մատչելի դարձնելուն:

ՀՀ Սահմանադրության հոդված 34-ի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար»:

Ադետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը սահմանված է ՀՀ Կառավարության 1999 թ. N 432 որոշմամբ, որի համաձայն՝

13. Պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանները բաշխում և «հատկացնում է Հայաստանի Հանրապետության

քաղաքաշինության նախարարը» համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաստատված հերթացուցակների համաձայն՝ դրանցում ընդգրկված քաղաքացիների հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանության արդյունքներով:

15. Բնակարանների բաշխման հրապարակայնությունն ապահովելու նպատակով քաղաքացիներին բնակարան հատկացնելու մասին որոշումները հրապարակվում են տեղական մամուլում:

16. Բնակելի տարածությունները քաղաքացիներին հատկացվում են սույն կետով սահմանված նորմաների սահմաններում, սակայն վարձակալի և նրա ընտանիքի անդամների կողմից նախկինում զբաղեցված բնակարանի սենյակների թվից ոչ ավելի:

Բնակելի տարածությունը հատկացվում է՝

1-սենյականոց բնակարանը՝ միննույն սեռի կամ տարբեր սեռի երկու մարդուց բաղկացած ընտանիքին, եթե երեխան ինը տարեկանից փոքր է, ինչպես նաև ամուսիններին.

2-սենյականոց բնակարանը՝ ինը տարեկանից մեծ տարբեր սեռի երկու մարդուց (բացի ամուսիններից) և երեք մարդուց բաղկացած ընտանիքին.

3-սենյականոց բնակարանը՝ չորս-հինգ մարդուց բաղկացած ընտանիքին.

4-սենյականոց բնակարանը՝ վեց-յոթ մարդուց բաղկացած ընտանիքին:

4 և 5-սենյականոց բնակարան կորցրած քաղաքացիներին, որոնց ընտանիքները բնակարանի հատկացման պահին բաղկացած են ութ և ավելի մարդուց, կարող է հատկացվել 2 բնակարան: Ընտանիքներին մեկից ավելի բնակարան հատկացվելու դեպքում դրանք, հնարավորության դեպքում, տրվում են նույն մուտքում և նույն հարկում:

Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարանների հատկացման գործընթացն իրականացվում և համապատասխան հանձնաժողովն աշխատում է ՀՀ կառավարության N 432, N 1337 և N 1402 որոշումներով ու դրանցով սահմանված կանոնակարգերով:

2009-2010 թթ. աղետի գոտում իրականացված բնակարանաշինության և բնակարանների բաշխման գործընթացում, անօթևան ընտանիքների բնակարաններ ստանալու համար պահանջվող փաստաթղթերի փաթեթների ձևավորման և հատկապես բազմանդամ ընտանիքների ժամանակավոր կացարանների քանդման ու տարածքների ազատման հարցում ի հայտ եկան մի շարք խնդիրներ, որոնց լուծումները պարզապես անհնար էին առանց վերոհիշյալ որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու:

«Շիրակ կենտրոն» ՀԿ-ն շահառուների առաջարկությունների և դիմում-բողոքների հիման վրա վերջին մեկ տարվա ընթացքում ՀՀ բարձրագույն իշխանություններին բազմաթիվ դիմում-ուղերձներ և առաջարկություններ է հղել աղետի գոտու բնակարանների բաշխման գործընթացը կանոնակարգող որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Մեր դիտարկումներով՝ դեռ անցած տարի Գյումրիում շահագործված, սակայն մինչև օրս ամբողջովին չբնակեցված Մուշ-2 թաղամասի բնակեցման դանդաղ ընթացքի հիմնական պատճառներից մեկն էլ հենց այդ որոշումներով սահմանված այն պարտադրանքն էր, որի համաձայն բնակարան ստացած ընտանիքները պետք է

քանդելին իրենց տնակները և ազատելին տարածքները: Չնայած երկրաշարժից անցած 23 տարիների ընթացքում աղետի գոտու անօթևան ընտանիքների կազմը զգալի փոփոխությունների է ենթարկվել՝ հիմնականում նրանց և՛ անդամների քանակն է ավելացել, և՛ ընտանիքի ներսում նոր ընտանիքներ են ավելացել, սակայն անօթևան ընտանիքներին հատկացվում է նույնքան սենյականոց բնակարան, որքան իրենք կորցրել են երկրաշարժին (իհարկե՝ եթե ընտանիքների անդամների թիվը չի պակասել): Նման ընտանիքները տնակը քանդելու և տարածքն ազատելու դեպքում չեն կարող ամբողջովին տեղավորվել ստացած նոր, տարածքով արդեն իրենց չբավականացնող բնակարանում:

Մեր դիմում-ուղերձներից մեկն էլ վերաբերում էր բնակարան ստացած բազմանդամ ընտանիքներին առանց տնակները հանձնելու բնակարանի սեփականաշնորհման հնարավորություն տալուն (http://shirakcentre.org/images/stories/pdfdocuments/harcupatasxan/linqnakam_karuycneriorikanacmanmasin.pdf):

ՀՀ կառավարությունը 2011 թ. ապրիլի 14-ին կայացած իր նիստում վերջապես անդրադարձավ այդ խնդրին և փոփոխություններ կատարեց իր 1999 թ. հունիսի 10-ի N 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2009 թ. նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման մեջ:

Փոփոխությունները բաղկացած էին երկու կետից.

առաջինը վերաբերում է բնակարանաշինությանը, որով որոշակի դեպքերում՝ «վերանախագծման (վերահատակագծման) անհրաժեշտություն առաջանալու պարագայում», կառուցապատողին հնարավորություն տրվեց փոփոխել ՀՀ կառավարության մեկ այլ որոշմամբ սահմանված բնակմակերեսի չափերը:

Իսկ որոշման երկրորդ կետը վերաբերում է բնակարան ստացած բազմանդամ ընտանիքների տնակների քանդման և տարածքների ազատման խնդրին: Այդ փոփոխություններով՝ աղետի գոտու բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած բազմանդամ ընտանիքներին հնարավորություն տրվեց մեկից ավելի ոչ հիմնական շինություններ զբաղեցնելու դեպքում բնակությունից չազատել և չքանդել դրանցից միայն մեկը, եթե բնակարան ստացած ընտանիքի անդամների թիվը կազմում է՝

ա. 1-սենյականոց բնակարան ստանալու դեպքում՝ 5 և ավելի անձ.

բ. 2-սենյականոց բնակարան ստանալու դեպքում՝ 7 և ավելի անձ.

գ. 3-սենյականոց բնակարան ստանալու դեպքում՝ 8 և ավելի անձ:

Չքանդվող ոչ հիմնական շինության ընտրությունը կատարվում է տվյալ ընտանիքի չափահաս անդամների կողմից համապատասխան մարզպետին ներկայացված դիմումի համաձայն՝ ելնելով քաղաքաշինական նպատակահարմարությունից, հաշվի առնելով նաև զբաղեցրած ոչ հիմնական շինությունների տեխնիկական վիճակը:

Մենք, կրկին ի նկատի ունենալով աղետի գոտու բնակարանների բաշխման գործընթացում նախորդ տարիների փորձը, ՀՀ իշխանություններին հղած նամակներում և հրապարակված հոդվածներում բազմիցս ահազանգ ենք հնչեցրել, որ կոռուպցիոն ռիսկերով հղի է նաև տնակներից տարածքների ազատման փուլը: Մեր դիմում-ուղերձներից մեկում էլ առաջարկել ենք ստեղծել բնակարաններ ստացած

ընտանիքների կողմից ժամանակավոր կացարանների ազատման հարցերն ուսումնասիրող հանձնաժողով: Եվ միայն այդ հանձնաժողովի ուսումնասիրությունների ու որոշումների հիման վրա շահառուներին տրամադրվեն տնակներից տարածքների ազատման մասին տեղեկանքները: Մենք ակնկալել ենք, որ նման հանձնաժողով ստեղծելու դեպքում դրանում ՀՀ քաղաքաշինության նախարարության, մարզային ու ՏԻՄ իշխանությունների ներկայացուցիչներից բացի կընդգրկվեն նաև աղետի գոտում գործող ՁԼՄ և ՀԿ ներկայացուցիչներ: Սակայն ՀՀ կառավարության նոր որոշմամբ սահմանված է, որ բնակարան ստացած ընտանիքների զբաղեցրած ոչ հիմնական շինություններից բնակությունից չազատվող և քանդման ոչ ենթակա շինությունների ընտրության նպատակով ուսումնասիրություններ կատարելու համար պետք է ստեղծվի աշխատանքային խումբ՝ համապատասխան մարզպետարանի, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչության տարածքային ստորաբաժանման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների ներգրավմամբ, սակայն խոսք անգամ չկա հասարակական մասնակցություն ապահովելու մասին, ինչը կարծում ենք լուրջ բացթողում է:

Ավելացնենք, որ ՀՀ կառավարության N 1402-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու հիմնավորումում տեղ է գտել Գյումրիում նախորդ տարի բնակարան ստացած ընտանիքների կողմից տնակների քանդման և տարածքների ազատման հետևյալ թվային վերլուծությունը: «Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասում 2010 թվականին կառուցված բազմաբնակարան շենքերից բնակարան ստացող ընտանիքների ցուցակում ընդգրկված են 134 բազմանդամ ընտանիքներ, որոնց կողմից զբաղեցրած ոչ հիմնական շինությունների (տնակների) թիվը կազմում է 191: Ներկայումս նշված 134 ընտանիքներից 38 ընտանիքների կողմից զբաղեցրած 47 տնակները քանդվել և տարածքներն ազատվել են: Տնակները քանդած ընտանիքների ընդհանուր թվից 31-ը զբաղեցրած են եղել 1-ական, իսկ 7-ը՝ 1-ից ավելի տնակներ կամ համապատասխանաբար 81.6% և 18.4%:

Արդյունքում, դեռևս քանդված չեն մնացած 96 բազմանդամ ընտանիքների կողմից զբաղեցրած 144 տնակները: Ընդ որում, 55 ընտանիքներ զբաղեցնում են 1-ական, իսկ 41-ը՝ 1-ից ավելի տնակներ (89 տնակ): Առկա են բազմանդամ ընտանիքների կողմից 1-ից ավելի տնակ զբաղեցնելու պարագայում գոնե 1 տնակը բնակությունից չազատելու մասին բազմաթիվ դիմումներ»:

Մեր կողմից 2009-2010 թթ. կատարված ուսումնասիրություններով՝ Գյումրիում 2010 թվականին բնակարանների բաշխման առաջին փուլով 1056 բնակարան ստացած ընտանիքների գրեթե կեսը՝ 460-ը բաղկացած են 5 և ավելի անդամներից, այդ թվում 60 ընտանիք ունեն 10 և ավելի անդամներ:

Անշուշտ, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում վերոհիշյալ փոփոխությունը ևս կարելի է համարել շոշափելի ձեռքբերում և աջակցություն բնակարան ստացած հարյուրավոր այն բազմանդամ ընտանիքներին, որոնք մեծ ցանկության դեպքում իսկ ժամանակավոր կացարանները հանձնելիս չեն կարող նոր ստացած 40-65 քառ. մետր մակերեսով բնակարաններում տանելի պայմաններ ստեղծել իրենց ընտանիքների համար: Սակայն, դժբախտաբար, այս որոշման մեջ խոսք անգամ չկա այլ դրդապատճառներով կիսված այն ընտանիքների մասին, որոնց անդամների մի մասը պարտադրված շարունակում է բնակվել տնակներում:

Օրինակ՝ կան մի շարք դեպքեր, երբ 15 կամ 20 տարի առաջ ամուսնալուծված ամուսիններին տրվում է մեկսենյականոց բնակարան, քանի որ նրանք երկրաշարժից կորցրել են այդքան սենյականոց բնակարան: Մինչ բնակարան ստանալը նրանք բնակվել են տարբեր ժամանակավոր կացարաններում, բայց հիմա նրանց հատկացվել է մեկ բնակարան և պարտադրում են երկու տարբեր վայրերում տեղադրված տնակները քանդել, տարածքներն ազատել և ապրել նույն բնակարանում: Կամ, ասենք, կան բազմաթիվ դեպքեր, երբ բնակարան ստացած ընտանիքը փաստացիորեն բազմանդամ է, սակայն նրա մի մասին պետությունը տարաբնույթ պատճառներով բնակարան ստանալու շահառու չի ճանաչել: Եվ այլն: Առավել եւս՝ պետք էր նաև կառավարության կողմից կանոնակարգել քանդման ոչ ենթակա ճանաչված կացարանների իրավական կարգավիճակի հարցերը ...

Ինչնիցե, մենք կարծում ենք, որ տեղին և ամբողջական լուծում կլինի, եթե քանդման ոչ ենթակա ճանաչված կառույցներ տնօրինող ընտանիքներին, հիմք ընդունելով նախորդ տարի ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, հնարավորություն ընձեռվի անվճար օրինականացնել իրենց կառույցները: Ի դեպ, նման հնարավորություն պետք է տրվի ոչ միայն բնակարանների բաշխման ներկա փուլով, այլ նաև նախորդ տարիներին բնակարան ստացած, սակայն կիսով չափ նոր բնակարաններ տեղափոխված բազմանդամ ընտանիքներին: Նման մոտեցման դեպքում այդ բազմանդամ ընտանիքների բնակարանային խնդիրը կարելի կլինի համարել իրոք լուծված, ինչը կնպաստի նաև աղետի գոտում երկու տասնամյակից ի վեր ձգվող անօթևանության բեռի զգալի թեթևացմանը:

ՀՀ կառավարությունը սեպտեմբերի 15-ի իր նիստում աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, պետական աջակցությամբ Գյումրի քաղաքում և Ախուրյան համայնքում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերով բնակարան ստանալու հավակնող ընտանիքների կողմից իրենց ընտանիքի անդամների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերով համալրված փաթեթների ներկայացման վերջնաժամկետ է սահմանել 2011 թ. նոյեմբերի 1-ը: Այս առնչությամբ վարչապետ Տիգրան Սարգսյանն ասել է. «Առաջին հերթին անհրաժեշտ է, որպեսզի մենք պատշաճ ձևով իրազեկենք մեր բոլոր քաղաքացիներին, որ վերջնաժամկետը նոյեմբերի 1-ն է: Նաև համայնքապետերը պետք է տեղյակ լինեն, որ նոյեմբերի 1-ին արդեն ցուցակների ճշգրտման գործընթացն ամբողջությամբ ավարտվում է: Մենք աղետի գոտու վերականգնման աշխատանքների վերջին փուլն ենք իրականացնում, և սպառվում են այն միջոցները, որոնք ծրագրել էինք: Մեր ծրագիրը նախատեսված էր շուրջ 7 հազար անօթևան ընտանիքների բնակարաններով ապահովելու համար:

Արդյունքում ամբողջությամբ կատարում ենք մեր պարտավորություններն անօթևանների, մասնավորապես, այն ընտանիքների նկատմամբ, որոնք համապատասխանում են այն չափանիշներին, որոնք սահմանված էին մեր կողմից: Մենք շատ քաջ գիտակցում ենք, որ այդ ցուցակների ճշգրտումը բավական բարդ գործընթաց է և պայմանավորված է այն հանգամանքով, որ իրականում աղետի հետևանքով անօթևան դարձածները և սոցիալական խնդիրներ ունեցող ընտանիքները փորձում են այս ծրագրից օգտվել, և շատ դժվար է այդ տարանջատումն իրականացնել, որովհետև շատ հաճախ իսկապես սոցիալապես անապահով ընտանիքներ նույնպես ցանկություն ունեն օգտվել ծրագրից, բայց օբյեկտիվ չափանիշները, որոնք դրված են ծրագրի հիմքում, թույլ չեն տալիս այդ:

Դրա համար ունենք սոցիալական այլ ծրագրեր, և երեկ քաղաքաշինության նախարարը նաև Ազգային ժողովում հայտարարեց, որ նախարարական կոմիտեում քննարկվել է բազմաբնակարան շենքերի հիմնախնդիրը: Հայաստանում ունենք 21 հազարից ավելի բազմաբնակարան շենք, և, ցավոք, դրանց զգալի մասը «խրուչովյան» տարիներին կառուցված շենքերն են, որոնց ֆիզիկական մաշվածության աստիճանը բավական բարձր է, և դրանք վթարային դառնալու լուրջ խնդիր ունեն:

Այդ պատճառով, ավարտելով այս ծրագիրը, 2012 թ. արդեն պետք է ձեռնամուխ լինենք նորի իրականացմանը: Հայեցակարգը հավանություն է ստացել նախարարական կոմիտեում, հանրային քննարկում կկազմակերպենք, և արդեն պարտավոր ենք լինելու ամեն տարի գումար հատկացնել բազմաբնակարան շենքերի խնդիրները լուծելու համար: Միջազգային փորձագետներ են աշխատել այս փաստաթղթի վրա, տվել են իրենց եզրակացությունները, թե ինչպիսին է այսօր աշխարհի լավագույն փորձը, և բոլոր հնարավոր գործիքները պետք է օգտագործենք այս խնդիրը լուծելու համար: Սոցիալապես անապահով ընտանիքները նույնպես պետք է իմանան, որ մենք այս փուլում լուծեցինք անօթևանների խնդիրը, բայց երկրորդ փուլում, բնականաբար, ուշադրության կենտրոնում հայտնվելու են առաջին հերթին սոցիալապես անապահով ընտանիքները, որոնք ունեն այդպիսի խնդիրներ»:



4. Բնակարանաշինություն

1988 թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժի հետևանքով Գյումրիում փլվեց շուրջ 22 հազ. բնակարան: Անցած տարիների ընթացքում Գյումրիում կառուցվել է մոտ 19.000 բնակարան: Սակայն 2011 թ. տվյալներով դեռևս 3200 ընտանիքներ հաշվառված են Գյումրու անօթևանների հերթացուցակում:

Խորհրդային իշխանությունների կողմից 1988-ի երկրաշարժից անմիջապես հետո ընդունվեց մի որոշում, որով նախատեսվում էր 1989-1990 թթ. ամբողջովին վերականգնել աղետի գոտին: Չնայած մեծ ծավալի աշխատանքներին և համաշխարհային հանրության աջակցությանը, աղետի գոտու վերականգման այդ ծրագիրը չիրականացավ:

ՀՀ կառավարությունը 1994 թ. հոկտեմբերի 7-ին, N 17 որոշմամբ ընդունեց աղետի գոտու վերականգնման նոր ծրագիր, ըստ որի աղետի գոտու բնակավայրերը պետք է վերականգնվեին մինչև 2001 թվականը՝ մինչև երկրաշարժն ունեցած ծավալներով:

1998 թ.-ին էլ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հաստատեց աղետի գոտու վերականգման նոր ժամկետ՝ 1998-2001 թթ., որից ելնելով վերանայվեցին ելակետային տվյալները և ձևավորվեցին պետական պարտավորություններ երկրաշարժից տուժած անօթևան բնակիչների նկատմամբ: Երկու անգամ պակասեցնելով Շիրակի մարզի բնակավայրերի վերականգման աշխատանքների ծավալները, կազմվեց նոր ծրագիր: Այն հաստատվեց ՀՀ կառավարության 1998 թ. նոյեմբերի 11-ին N 701 որոշմամբ, ըստ որի վերականգնումը պետք է իրականացվեր ամբողջովին 1998-2001 թվականներին:

Երկրաշարժի պատճառով Շիրակի մարզի բնակավայրերում վնասված 3,677 մլն քառ. մ ընդհանուր մակերեսով բնակտարածությունից մինչև 1998 թվականը վերականգնվել էր 1,525 մլն քառ. մ բնակֆոնդ: 1998-2001 թթ. մարզում ծրագրվեց վերականգնել ընդամենը 1,071 մլն քառ. մ բնակտարածություն, որը նախորդ ծրագրից պակաս էր 1,081 մլն քառ. մ-ով:

2001 թ.-ին ՀՀ իշխանությունները աղետի գոտու վերականգման ևս մեկ՝ երրորդ ժամկետն էլ հայտարարեցին՝ 2001-2003 թթ.:

Վերոհիշյալ ծրագրերը կամ չիրականացվեցին կամ կատարվեցին մասնակի:

2008 թ.-ին ՀՀ կառավարությունը, «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի» համաձայն, աղետի գոտու անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման վերջնաժամկետ հայտարարեց 2013 թվականը:

2008 թ.-ին ՀՀ կառավարության և «Գլենդել Հիլզ» կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն ՀՀ պետական բյուջեի միջոցներով միայն Գյումրիում մինչև 2013 թ. կառուցվելու են 3030 բնակարան և սպասարկման օբյեկտների տարածքներ:

2011 թ.-ին, ինչպես և նախորդ տարի, կրճատվեց Գյումրիում երկրաշարժից անօթևան ընտանիքների համար կառուցվող բնակարանների սկզբնապես

նախատեսված քանակը: Եթե աղետի գոտու բնակարանաշինության նախորդ՝ 2009-2010 թթ. առաջին փուլով ծրագրված 1320-ի փոխարեն կառուցվեց և շահագործման հանձնվեց 1056 բնակարան, այսինքն՝ 264 բնակարանով պակաս, ապա 2011 թ. նախատեսված 1944-ի փոխարեն շահագործվեց 1756 բնակարան կամ 188-ով պակաս: Պատճառաբանությունը երկու դեպքերի համար մոտավորապես նույնն է: Եթե նախորդ փուլում նախապես որոշված 1 և 2 սենյականոցների հաշվին շինարարության ընթացքում որոշվեց և կառուցվեց 264 հատ 3 սենյականոց, ապա երկրորդ փուլում 1, 2 և 3 սենյականոց բնակարանների թվի կրճատման հաշվին կատարվեցին նախագծային փոփոխություններ և կառուցվեց նաև 4 սենյականոց 124 բնակարան:

Գյումրու անօթևանների հերթացուցակում 2010 թ. հաշվառված էր չորս սենյականոց բնակարանի հավակնորդ 191 ընտանիք: Անշուշտ, առաջին հայացքից մարդասիրական է կատարված փոփոխությունը: Մակայն առավել տրամաբանական կլիներ, եթե ընթացիկ տարում կառուցվող բնակարանների նախատեսված քանակի կրճատման փոխարեն 4 սենյակի հավակնորդ բազմանդամ ընտանիքներին հատկացվեին երկուական բնակարաններ: Խնդիրն այն է, որ երկրաշարժից անցած 23 տարիների ընթացքում նման ընտանիքների կազմը զգալի փոփոխությունների է ենթարկվել. հիմնականում նրանց և՛ անդամների քանակն է ավելացել, և՛ ընտանիքի ներսում նոր ընտանիքներ են ավելացել: Ուստի այս շահառուները ստանալիք բնակարանի պատկանելությունը որոշելու բավական լուրջ խնդիրներ ունեն: Ինչպես ասենք, Գյումրու անօթևանների հերթացուցակում հաշվառված 5 սենյականոց բնակարանի հավակնորդների պարագայում որոնց հատկացվեցին երկուական բնակարաններ: Իսկ ինչո՞ւ չէր կարելի նույն կերպ վարվել նաև 4 սենյակի հավակնորդ շահառու ընտանիքների պարագայում:

Մայիսի 13-ին ՀՀ քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը Հայաստանում իրականացվող բնակարանային ապահովման մեծածավալ քաղաքաշինական ծրագրերի մասին «Արմենպրես»-ին տված հարցազրույցում մասնավորապես ասել է. «2011 թվականին պետական բյուջեի հատկացումների հաշվին աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարանով ապահովելու նպատակով Շիրակի եւ Լոռու մարզերում ընթացք է ստանալու 3 հազար 223 բնակարանների (բնակելի տների) շինարարությունը: Այս տարի նախատեսվում է ավարտել 2010 թվականին սկսված շինարարական աշխատանքները: Ընդհանուր առմամբ, նախատեսվում է ավարտել 2 հազար 131 բնակարանների եւ բնակելի տների շինարարությունը, այդ թվում՝ Գյումրի քաղաքում՝ 1756, Լոռու մարզի գյուղական բնակավայրերում՝ 375:

Նախատեսում ենք սկսել եւ 2012 թվականին ավարտել նոր բնակարանների (բնակելի տների) շինարարական աշխատանքները: Ընդհանուր առմամբ կիրականացվի 1092 բնակարանների եւ բնակելի տների շինարարություն, այդ թվում Մպիտակ քաղաքում՝ 134, Ախուրյան գյուղում՝ 182, Լոռու մարզի գյուղական բնակավայրերում՝ 546, Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում՝ 230»: Այնուհետև, խոսելով աղետի գոտում իրականացվող շինարարական աշխատանքների որակի վերահսկվման մասին Վ.Վարդանյանը հայտարարել է. «Շինարարական աշխատանքների որակը շարունակում է մնալ մեր ուշադրության կենտրոնում: Նախ աղետի գոտին, ըստ քաղաքաշինական դասակարգման, բաժանվում է երկու խմբի: Առաջինը բազմահարկ բնակելի շենքերն են, որոնք կառուցվել եւ կառուցվում են Շիրակի մարզի Գյումրի

քաղաքի «Մուշ-2», «Մուշ-2-2» եւ «Անի» թաղամասերում, երկրորդը՝ մեկ հարկանի մենատները՝ 2, 3 եւ 4 սենյականոց, որոնք կառուցվել եւ կառուցվում են Շիրակի եւ Լոռու մարզերի գյուղական համայնքներում: Թե՛ առաջին, եւ թե՛ երկրորդ խմբերում ընդգրկված շենքերի քաղաքաշինական գործունեության պետական տեսչական վերահսկողությունն իրականացվում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի շրջանակներում՝ ընթացիկ ստուգումների միջոցով:

Քանի որ Շիրակի մարզում դեռևս չեն սկսվել Ախուրյանի երեք բնակելի շենքերի եւ գյուղական համայնքների մենատների շինարարությունները, այնտեղ Քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի կողմից մինչ այժմ չեն իրականացվել պետական տեսուչների համապատասխան օբյեկտներին կցումները: Լոռու մարզում տեսչության տարածքային բաժնի 6 տեսուչները կցված են 14 համայնքներում իրականացվող մենատների շինարարություններին եւ ընթացիկ ստուգումների միջոցով վերահսկում են իրավական ակտերի, քաղաքաշինական եւ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը: Տեսուչների կողմից իրականացվել է 11 ստուգում, որի արդյունքում սահմանվել է 920 հազար դրամի տուգանք:

Առաջին խմբում ընդգրկված 38 բազմահարկ բնակելի շենքերի քաղաքաշինական գործունեության պետական տեսչական վերահսկողությանը զուգահեռ, իրականացվում են նաեւ լրացուցիչ վերահսկողական միջոցառումներ: Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի մոտ 2010 թվականի հոկտեմբերի 14-ին կայացած խորհրդակցության արձանագրության, ինչպես նաև իմ հանձնարարականի համաձայն՝ Քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի 7 պետական տեսուչները կցվել են վերը նշված շենքերի, նրանց արտաքին ինժեներական ցանցերի ու արտաքին բարեկարգման աշխատանքներին:

Պետք է նշել, որ նրանք 15 օրը մեկ համապատասխան հաշվետվություն են ներկայացնում նախագահի աշխատակազմի ղեկավարին, ինչպես նաև ինձ՝ իրականացվող շինարարության որակի մասին՝ տալով պարտադիր կատարման ցուցումներ թերի կամ անորակ կատարված աշխատանքների վերացման ուղղությամբ: Արդեն իրականացվել է 27 ստուգում, եւ սահմանվել է 2,17 մլն դրամի տուգանք» (http://www.mud.am/htmls/news/13_05_11.pdf):

Ավելացնենք նաև, որ թեև անօթևան ընտանիքներին բնակարանների փաստաթղթային հատկացումն ընթացիկ տարում տեղի ունեցավ, սակայն 2011 թ. նախատեսված 1756 բնակարանների շահագործումը հետաձգվեց 2012 թ.: Գյումրու Մուշ-2 թաղամասում կշահագործվի 33 բնակելի շենք՝ 1544 բնակարանով, իսկ Անի թաղամասում 5 բնակելի շենք՝ 212 բնակարանով, այդ թվում՝ 1 սենյականոց՝ 640 բնակարան, 2 սենյականոց՝ 528 բնակարան, 3 սենյականոց՝ 464 և 4 սենյականոց՝ 124 բնակարան: Անի թաղամասում 4 սենյականոց բնակարաններ չեն կառուցվել:

5. Բնակբաշխման պրակտիկան

Գյումրիում մինչև 2003 թվականը բնակարանները բաշխվել են քաղաքապետարանի, 2003-2008 թթ.՝ Շիրակի մարզպետարանի կողմից: Իսկ 2008 թվականից, ՀՀ կառավարության 1999թ. N 432 որոշմամբ սահմանված «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգի» մեջ կատարված փոփոխություններից հետո, բնակարանների բաշխումն իրականացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարը՝ իր հրամանով ստեղծված հանձնաժողովի միջոցով: Ավելացնենք, որ խորհրդային տարիների մայրամուտին աղետի գոտում բնակարանաշինություն իրականացնող շինկազմակերպությունները ևս բնակարանների իրենց մասնաբաժինն ունեին՝ 10-20 տոկոս: Իրենց կողմից կառուցված բնակարանների մի մասը իրենք էին բաժանում՝ հիմնականում տվյալ շինարարական կազմակերպություններում աշխատողներին:

2009-2010 թթ. բնակբաշխման գործընթացն իրականացվեց հետևյալ կերպ. ՀՀ քաղաքաշինության նախարարության բնակարանների բաշխման հանձնաժողովի համապատասխան հայտարարությանն արձագանքելով՝ անօթևանները պահանջվող փաստաթղթերը ներկայացնում էին հանձնաժողովի աշխատանքներին աջակցող աշխատանքային խմբին, որը նրանց համեմատաբար ամբողջական գործերն ըստ հերթականության ներկայացնում էր բնակարանների բաշխման հանձնաժողովին: Հանձնաժողովը, որը ղեկավարում էր ՀՀ քաղաքաշինության նախարարը, պարբերաբար ուսումնասիրում էր բնակարաններ ստանալու հավակնորդ ընտանիքների փաստաթղթերը, կայացնում էր համապատասխան որոշում և փուլ առ փուլ ներկայացնում էր ՀՀ քաղաքաշինության նախարարին՝ հրամանագրման: Այնուհետև նորակառույց բնակարանները հրապարակային վիճակահանությամբ բաշխվում էին հրամանագրերում ընդգրկված քաղաքացիներին:

2011 թ.-ին, ի տարբերություն նախորդ տարվա, բնակարաններ ստանալու հավակնորդ շահառուների փաստաթղթերն ընդունեցին Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության բաժնի մասնագետները՝ առանց ՀՀ քաղաքաշինության նախարարության պաշտոնյաների: Երկրորդ քայլով բնակարան ստանալու հավակնորդ, անօթևան ընտանիքների փաստաթղթերի փաթեթները ամբողջովին ձևավորված, փուլ առ փուլ, ուղարկվեցին քաղշին. նախարարություն ուսումնասիրությունների, որից հետո միայն հարցը դրվում էր բնակբաշխման հանձնաժողովի քննարկմանն ու հաստատմանը:

Բնակբաշխման հանձնաժողովի աշխատանքներին աջակցող խմբի կողմից երկրաշարժից անօթևան ընտանիքների փաստաթղթերի ընդունման մասին, ընթացիկ տարվա փետրվարից սկսած, մարզային հեռուստատեսություններով հաջորդաբար հեռարձակվեցին հայտարարություններ, որոնք մեր կողմից ևս պարբերաբար հանրայնացվեցին:

Ստորև ներկայացնում ենք 2011 թ. բնակբաշխման գործընթացի մասին մեր կողմից 110 էլեկտրոնային հասցեներով տարածված և բազմաթիվ ՁԼՄ-ներով հրապարակված հաղորդագրությունները.

2011 թ. հունիսի 11 - Շիրակում բազմաթիվ անօթևաններ չեն շտապում մասնակցել բնակբաշխման գործընթացին

Շիրակի մարզում երկրաշարժից անօթևան ընտանիքների համար պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում ներկայումս փոխհատուցվում են միայն բազմաբնակարան շենքերում բնակարան կորցրած, փլված շենքերի կամ ժամանակավոր կացարանների գրանցում ունեցող քաղաքացիները: Իսկ երկրաշարժին սեփական տուն կորցրած կամ սեփական տան գրանցում ունեցող և դրամական փոխհատուցման ենթակետում հաշվառված ընտանիքներին բնակարանային շինարարության ընթացիկ ծրագրով նախատեսված չէ բնակարաններ հատկացնել:

Գյումրիում և Ախուրյան համայնքում ներկայումս բնակբաշխման հանձնաժողովի կողմից իրականացվում են հերթացուցակներում հաշվառված անօթևան ընտանիքների փաստաթղթերի ընդունման և ուսումնասիրման աշխատանքները: Թեև մարզային հեռուստաընկերություններով երեք ամիս շարունակ հայտարարություններ են հեռարձակվում, ինչպես նաև նամակագրության տեսքով ծանուցագրեր են ուղարկվել Գյումրու անօթևանների հերթացուցակում հաշվառված շուրջ 3000 և Ախուրյանում՝ 182 ընտանիքների հասցեներով, սակայն մինչև օրս Գյումրիում անհրաժեշտ փաստաթղթեր չեն ներկայացրել շուրջ 1200, իսկ Ախուրյանում 50 ընտանիքներ:

Հարցն այն է, որ ՀՀ կառավարության՝ աղետի գոտու բնակարանային շինարարությունը և բնակբաշխման գործընթացը կանոնակարգող որոշումներում բնակարաններ հատկացնելու նպատակով շահառուներից փաստաթղթերի ընդունման կոնկրետ վերջնաժամկետ նշված չէ:

ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից նախքան շենքերի շահագործումը բոլոր անօթևան ընտանիքների փաստաթղթերի ընդունումը, ուսումնասիրումն ու նրանց շահառու ճանաչելը հետապնդում է մի նպատակ՝ որպեսզի բնակարանների քանակն ու սենյակների թիվը կառուցվի ըստ պահանջարկի: Նման գործելակերպը թույլ կտա խուսափել Սպիտակում տեղի ունեցածից, երբ նախորդ տարի շահառուների թվից մոտ 40 բնակարան ավել կառուցվեց:

Այդ պատճառով աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար պետական ծրագրերով կառուցվող բնակելի տների (բնակարանների) հատկացման հանձնաժողովը երկու օր առաջ կայացած իր նիստում ընդունված որոշման համաձայն մեզ՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ-ին հրապարակելու նպատակով տրամադրել է հայտարարություն, որում մասնավորապես ասվում է.

«ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում և Ախուրյան համայնքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում կարող են դիտարկվել սահմանված կարգով հաշվառված և Ախուրյան համայնքում մինչև 2011 թվականի հունիսի 25-ը, իսկ Գյումրիում մինչև 2011 թվականի օգոստոսի 1-ը անհրաժեշտ փաստաթղթերով համալրված ամբողջական փաստաթղթային փաթեթներ ունեցող ընտանիքները:

Նշված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթեր չներկայացրած ընտանիքների բնակարանային ապահովման հարցը կփոխադրվի ավելի ուշ ժամկետների: Փաստաթղթային փաթեթների համալրման համար անհրաժեշտ փաստաթղթերի

վերաբերյալ Գյումրու բնակիչները տեղեկատվություն կարող են ստանալ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունից, իսկ Ախուրյանի բնակիչները՝ Ախուրյանի գյուղապետարանից»:

Ավելացնենք նաև, որ հարյուրավոր անօթևան ընտանիքների կողմից բնակարան ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր չներկայացնելու հանգամանքը չի կարող զարմանք չառաջացնել: Եթե նախորդ տարի դրա հիմնական պատճառն այն էր, որ հարյուրավոր անօթևան ընտանիքներ չէին կարող փաստաթղթերը համալրել ընտանիքներում բացակա անդամներ ունենալու կամ ընտանիքների բազմանդամության պատճառով, ապա ընթացիկ տարում ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում փոփոխություններ կատարելուց հետո նման պատճառաբանություններն այլևս հիմք չունեն: Կատարված փոփոխություններով հնարավորություն է տրվել բացակա անդամների մասին համապատասխան հայտարարություն ներկայացնելով և որոշակի պարտավորություն ստանձնելով ստանալ բնակարան, իսկ բազմանդամ ընտանիքներն էլ այլևս կարող են բնակարաններ ստանալ և դրանք սեփականաշնորհել առանց տնակներից մեկը հանձնելու:

Այնուամենայնիվ, մեր դիտարկումներով՝ անօթևան ընտանիքների կողմից բնակարաններ ստանալու համար ներկայումս անհրաժեշտ փաստաթղթեր չներկայացնելն ունի հիմնականում 3 պատճառ: Առաջին պատճառն այն է, որ նրանցից շատերը ամբողջ ընտանիքով բացակայում են Հայաստանից, երկրորդը՝ ընտանիքներում կա անհամաձայնություն ստանալիք բնակարանի պատկանելիության վերաբերյալ, երրորդը՝ տվյալ շահառուները տարբեր ճանապարհներով և հիմնականում օրենքը շրջանցելով ընդգրկվել են անօթևանների հերթացուցակում, ուստի ներկայումս, երբ բնակբաշխումն ընթանում է օրենքի սահմաններում, խուսափում են մերժվելու հեռանկարից, հավանաբար սպասելով «հարմար ժամանակների»:

2011 թ. սեպտեմբերի 29 - *Հոկտեմբերը Գյումրու անօթևաններին իրազեկելու և աջակցելու ամիս*

ՀՀ կառավարության որոշմամբ՝ աղետի գոտում բնակարանների բաշխման գործընթացին մասնակցելու համար անօթևան ընտանիքների անհրաժեշտ փաստաթղթերի համալրման և հանձնման վերջնաժամկետ սահմանվել է 2011 թվականի նոյեմբերի 1-ը: Սակայն Գյումրիում ներկա պահին կան հարյուրավոր այնպիսի անօթևան ընտանիքներ, որոնք պահանջվող փաստաթղթերի փաթեթները բնակբաշխման հանձնաժողովին կամ առհասարակ չեն հանձնել՝ մոտ 300 ընտանիք, կամ ոչ ամբողջական են հանձնել՝ 1100 ընտանիք: Եթե նրանք մինչև սահմանված օրը՝ նոյեմբերի 1-ը, փաստաթղթերը չկարողանան համալրել և ներկայացնել, ապա կկորցնեն պետության կողմից բնակարանային փոխհատուցման իրենց իրավունքը:

Մեր դիտարկումներով՝ մինչև օրս փաստաթղթեր չներկայացրածների թվում կան այնպիսի ընտանիքներ, որոնք գտնվելով ծայրահեղ ծանր սոցիալական պայմաններում, պահանջվող փաստաթղթերը ֆինանսական և ֆիզիկական դժվարությունների պատճառով չեն կարողանում տարբեր ծառայություններից ձեռք բերել: Տասնյակ բազմանդամ ընտանիքների ներսում էլ ստանալիք բնակարանի պատկանելիության վերաբերյալ չի կայանում համաձայնություն, կան նաև ընտանիքներ, որոնք պարզապես իրազեկված չեն: Ուստի կոչ ենք անում լրատվամիջոցներին ու հասարակական կազմակերպություններին՝ առաջիկա մեկ

ամսվա ընթացքում իրականացնել ամենօրյա իրազեկում և նման խնդիրներ ունեցող անօթևան ընտանիքներին կոնկրետ աջակցություն ցուցաբերել բնակարան ստանալու համար պահանջվող փաստաթղթերը ձեռք բերելու և բնակբաշխման հանձնաժողովին հանձնելու գործում:



6. Դիտարկումների արդյունքներ

Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում, կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման մասին ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանի համապատասխան հրամանագրերով նախորդ տարի բնակարաններ ստացան 1056 գյումրեցի անօթևան ընտանիքներ: Սակայն նախորդ և ընթացիկ տարում ՀՀ քաղաքաշինության նախարարը չեղյալ համարեց 19 ընտանիքների բնակարաններ հատկացնելու մասին իր նախորդ հրամանները: Ստորև ներկայացնում ենք մեր կողմից հրապարակված ևս մի քանի դիտարկումներ.

2011 թ. փետրվարի 03 - *Գյումրիում տեղահանվելու են անօթևանների տնակները*

Այս օրերին Շիրակի մարզային հեռուստատեսություններով հեռարձակվող Գյումրու քաղաքապետարանի հայտարարության համաձայն՝ մինչև սույն թվականի փետրվարի 28-ը Մուշ-2 թաղամասում 2010 թվականին բնակարան ստացած ընտանիքները պարտավոր են տեղահանել իրենց ժամանակավոր կացարանները: Հակառակ դեպքում քաղաքապետարանը սպառնում է փետրվարի 28-ից հետո տնակները տեղահանել քաղաքապետարանի աշխատակիցների կողմից՝ առանց հաշվի առնելու տվյալ կացարանները տնօրինողների կարծիքները:

Այս հայտարարությունը բառիս բուն իմաստով իրարանցում է առաջացրել հատկապես բազմանդամ այն անօթևան ընտանիքների մոտ, ովքեր 6 և ավելի անձով ստացել են մեկ կամ երկու սենյականոց բնակարաններ: Նրանց մի մասը երկար տարիներ բնակվել են երկու կամ երեք տնակներում և ներկայումս պատրաստվում են տեղահանել միայն տնակներից մեկը:

Խնդիրն այն է, որ երկրաշարժից անցած 23 տարիների ընթացքում աղետի գոտու անօթևան ընտանիքների կազմը զգալի փոփոխությունների է ենթարկվել. հիմնականում նրանց և՛ անդամների քանակն է ավելացել, և՛ ընտանիքի ներսում նոր ընտանիքներ են ավելացել: Ուստի այս ընտանիքները բավական լուրջ խնդիրներ ունեն ինչպես ստացած բնակարանի պատկանելիությունը որոշելու, այնպես էլ 6-12 անձից բաղկացած երկու կամ երեք ընտանիքներով սահմանափակ մակերեսով այդ բնակարանում քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծելու առումով:

Ներկայումս «Շիրակ կենտրոն» - ին են դիմում տասնյակ բազմանդամ անօթևան ընտանիքներ, որոնք խնդրում են աջակցել, որ իրենց թույլատրվի պահպանել ժամանակավոր կացարանների գոնե մի մասը: Այդ դեպքում բազմանդամ ընտանիքների մի մասը կտեղափոխվի բնակվելու նոր բնակարաններ, իսկ մյուս մասն էլ կշարունակի բնակվել տարիների ընթացքում որոշակի հարմարություններ ստեղծած ժամանակավոր կացարաններում:

Նշենք, որ մենք դեռևս 2010 թ. օգոստոսի 6-ին «Գյումրու Մուշ-2 թաղամասում բնակարան ստացած, ինքնակամ կառույցներում բնակվող բազմանդամ ընտանիքներին իրենց կողմից տնօրինվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու հնարավորություն ընձեռելու մասին» դիմում-ուղերձով դիմել էինք ՀՀ վարչապետին և ՀՀ քաղաքաշինության նախարարին: Մեր դիմում-ուղերձում

մասնավորապես ասվում էր. «Մեր ուսումնասիրություններով՝ բնակարանների բաշխման ներկա փուլով բնակարան ստացած 1056 ընտանիքների թվի գրեթե կեսը՝ 460-ը, բաղկացած են 5 և ավելի անդամներից, որոնք մեծ ցանկության դեպքում անգամ ժամանակավոր կացարանները հանձնելիս չեն կարող նոր ստացած՝ 40-65 քառ. մետր մակերեսով բնակարաններում տանելի պայմաններ ստեղծել իրենց ընտանիքների համար (<http://www.shirakcentre.org/index.php/hy/library/235-2010-09-16-11-05-06.html>): Ուստի կարծում ենք՝ տեղին կլինի, եթե որոշ բազմանդամ և ինքնակամ բնակելի կառույցներ տնօրինող ընտանիքների, հիմք ընդունելով ընթացիկ տարում ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, հնարավորություն տրվի օրինականացնել իրենց ինքնակամ կառույցները և թույլատրվի նոր ստացած բնակարանները սեփականաշնորհել առանց ժամանակավոր կացարանների հանձնման: Նման մոտեցման դեպքում այդ բազմանդամ ընտանիքների բնակարանային խնդիրը կարելի կլինի համարել իրոք լուծված»:

Մեր այս դիմում-ուղերձին ՀՀ քաղաքաշինության նախարարությունից 2010 թ. օգոստոսի 25-ին ստացված պատասխանում մեր կողմից արված առաջարկություններն անընդունելի էին համարվել, պատճառաբանելով հետևյալ կերպ. «Աղետի գոտու քաղաքային բնակավայրերում, այդ թվում Գյումրի քաղաքում, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան ստացած քաղաքացիների ու նրանց ընտանիքների անդամների կողմից զբաղեցրած ժամանակավոր կացարանների (ոչ հիմնական շինությունների) ազատման հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին» N 432 որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի դրույթների համաձայն:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402 որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետի դրույթների համաձայն՝ բնակարան ստացող քաղաքացիների և նրանց ընտանիքների անդամների կողմից բնակությունից ազատված ոչ հիմնական շինություններն ենթակա են քանդման:

Հաշվի առնելով, որ Գյումրի քաղաքում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման խնդրի հետ մեկտեղ լուծվում են նաև քաղաքի զարգացման տեսանկյունից կարևորվող տարածքները տնակային տնտեսություններից ազատման հետ կապված հարցերը, Ձեր գրությամբ ներկայացված՝ Գյումրի քաղաքում կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների սեփականաշնորհումն առանց ժամանակավոր կացարանների հանձնման վերաբերյալ առաջարկությունն ընդունելի չէ»:

Ակնհայտ է, որ որևէ լուրջ հիմնավորում չի բերվել, թե ինչու հնարավոր չէ անօթևան բազմանդամ ընտանիքների բնակարանային պայմանները բարելավել մեր կողմից առաջարկված տարբերակով: Առավել ևս, երբ բոլորին է հայտնի, որ նախորդ տարիներին տնակների տեղահանման տարբերակով Գյումրիում առաջ եկան հարյուրավոր այնպիսի անօթևան ընտանիքներ, որոնք անգամ ժամանակավոր

կացարաններ չունեն և պարտադրված տարիներ շարունակ բնակվում են վարձակալած բնակարաններում:

Երկարատև ընդմիջումից հետո աղետի գոտում բնակարանաշինության գործընթացի վերսկսումը ցուրտ ու խոնավ տնակներում արդեն երկու տասնամյակ պատսպարված անօթևան հարյուրավոր ընտանիքների մեջ կրկին հույս և հավատ արթնացրեց, որ ի վերջո իրենք ևս կունենան բնակարաններ: Սակայն ներկայումս բնակարան ստացած այն բազմանդամ ընտանիքները, որոնց պարտադրում են 6 և ավելի անձով տեղափոխվել և բնակվել 40 քառ. մետրից էլ պակաս բնակարաններում, իրավացի են իրենց այն հայտարարություններում, թե Մուշ-2 թաղամասի բնակարանները պատուհաս են դարձել իրենց գլխին:

Վերջում ևս մեկ անգամ կոչ ենք անում հանրապետական, մարզային և տեղական իշխանություններին՝ առանց այդ էլ մեծ վիշտ ու զրկանքներ կրած անօթևաններին ևս մեկ անգամ չպատճառել անհանգստություն և ինչպես անցած, այնպես էլ ընթացիկ տարում բնակարան ստացող բազմանդամ ընտանիքներին թույլատրել պահպանել իրենց ժամանակավոր կացարանները, ավելին, նրանց պետք է տրվի հնարավորություն անվճար օրինականացնելու իրենց ժամանակավոր կացարանները տարածքների հետ մեկտեղ:

2011 թ. փետրվարի 14 - *Վերջնագրերի լեզվո՞վ*

Այս օրերին Շիրակի մարզային հեռուստատեսություններով հեռարձակվում է Գյումրու քաղաքապետարանի մի ուշագրավ հայտարարություն, որն ավելի շատ նման է նախազգուշացման կամ վերջնագրի: Վերջինս ուղղված է 2010 թ. Մուշ-2 թաղամասում բնակարան ստացած այն անօթևան ընտանիքներին, ովքեր տնակներում չեն բնակվում և մինչև օրս չեն տեղափոխվել բնակվելու նորակառույց բնակարաններում: Հայտարարության համաձայն՝ կիրականացնեն բնակարանների վերաբաշխում, եթե այդ ընտանիքները շուտափույթ կերպով չբնակեցնեն Մուշ-2 թաղամասի իրենց բնակարանները: Հայտարարությանը կից ընթերցվում են նաև տասնյակ քաղաքացիների անուն- ազգանուններ:

Այստեղ զարմանալին մասնավորապես այն է, որ աղետի գոտում երկրաշարժից անօթևան ընտանիքներին բնակարանների բաշխումն իրականացվում է ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի «Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին» N 432 որոշման համաձայն (http://shirakcentre.org/images/stories/pdf/orensdrutyun/4321%20voroshum_doc.pdf), որում նման պատճառաբանությամբ բնակարանների վերաբաշխում պարզապես նախատեսված չէ: Առավել ևս, ՏԻՄ-երի ղեկավարներից, ինչպես նաև մարզպետներից դեռ վաղուց է վերցված անօթևան ընտանիքներին համապետական միջոցներով կառուցված բնակարանների բաշխման գործառույթը: Եվ ՀՀ կառավարության մեկ այլ՝ 2008 թ. նոյեմբերի 6-ի 1288-ն որոշման համաձայն բնակարանները հատկացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարը, իր հրամանով ստեղծված հանձնաժողովի միջոցով: Ավելին, գործող օրենսդրությամբ, պետության և բնակարան ստացած քաղաքացիների միջև կնքվող պայմանագրերի համաձայն, բնակարանները Մուշ-2 թաղամասում հատկացվում են անվարձահատույց, իսկ 23 տարի պարտադրված անօթևանի կարգավիճակում գտնված քաղաքացիները այլևս իրենցը համարվող բնակարանների պատկանելությունը որոշում են զուտ սեփական հայեցողությամբ: Ուստի գոնե մեզ

համար անհասկանալի է մնում որևէ օրինական հիմք չունեցող նման բովանդակությամբ հայտարարության տարածման տրամաբանությունը:

Անտարակույս, կարելի է ընդամենը գուշակել նման քայլի դրդապատճառը: Գուցե դա արվում է Մուշ-2 թաղամասի բնակեցումն արագացնելու նպատակով: Բայց մի՞թե ընդունելի կարելի է համարել ընտրված մեթոդը, այն է՝ իշխանության մակարդակով, օգտվելով քաղաքացիների անիրազեկությունից, նրանց թյուրիմացության մեջ գցելը և բնակեցումը չհիմնավորված վերջնագրերի ճանապարհով արագացնելը: Եթե այնուամենայնիվ հենց դա է նման քայլի դրդապատճառը, ապա ուզում ենք հավաստիացնել, որ ընտրված մեթոդը հաստատ լավագույնը չէ:

Ցավում ենք, որ Մուշ-2 թաղամասի բնակեցման ձգձգումների վերաբերյալ առավել լուրջ ուսումնասիրություններ և վերլուծություններ կատարելու, քաղաքացիների տեղափոխման ձգձգումների հիմնական պատճառները վեր հանելու և դրանց վերացմանն օգնելու, տեղափոխման գործում դժվարություններ ունեցող սոցիալապես առավել ծանր պայմաններում գտվող ընտանիքներին շոշափելի աջակցություն ցուցաբերելու փոխարեն ընտրվել է նման մեթոդ: Հուսով ենք՝ մեր այս հայտարարությունից հետո կդադարեցվի նման բովանդակությամբ և առհասարակ որևէ օրինական հիմք չունեցող հայտարարություն-զգուշացումների հրապարակումների ավանդույթը:

Վերջում նաև ավելացնենք, որ անցած ամսին Գյումրու քաղաքապետարանի կողմից հեռարձակվում էր նմանատիպ մեկ այլ հայտարարություն ևս, որում մասնավորապես ասվում էր, թե Մուշ-2 թաղամասում 2010 թվականին բնակարան ստացած ընտանիքները պարտավոր են մինչև սույն թվականի փետրվարի 28-ը տեղահանել իրենց ժամանակավոր կացարանները: Հակառակ դեպքում քաղաքապետարանը սպառնում էր փետրվարի 28-ից հետո տնակները տեղահանել քաղաքապետարանի աշխատակիցների կողմից՝ առանց հաշվի առնելու տվյալ կացարանները տնօրինողների կարծիքը: Այդ հայտարարության կապակցությամբ ևս մենք պարտադրված էինք հայտնել մեր հրապարակային մտահոգությունը, որով հանրապետական, մարզային և տեղական իշխանություններին կոչ արեցինք առանց այդ էլ մեծ վիշտ ու զրկանքներ կրած անօթևաններին ևս մեկ անգամ չպատճառել անհանգստություն և ինչպես անցած, այնպես էլ ընթացիկ տարում բնակարան ստացող բազմանդամ ընտանիքներին թույլատրել պահպանել իրենց ժամանակավոր կացարանները, այդպիսի ընտանիքներին հնարավորություն տալ անվճար օրինականացնելու իրենց ժամանակավոր կացարանները տարածքների հետ մեկտեղ: Ի դեպ, մեր այդ հայտարարությունից անմիջապես հետո դադարեցվեց մարզային հեռուստատեսություններով քաղաքապետարանի այս հայտարարություն-նախազգուշացման հեռարձակումը:

ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ պետական միջոցներով աղետի գոտում, 2009-2013 թթ. բնակարանային շինարարության ծրագրով կառուցվող բնակարանների բաշխման հանձնաժողովը, ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանի ղեկավարությամբ, այսօր՝ հունիսի 6-ին արտագնա նիստ անցկացրեց Ախուրյան համայնքում:

ՀՀ քաղաքաշինության նախարարը հանձնաժողովի նիստի ժամանակ հայտնեց, որ նախքան շենքերի շահագործումը, նախատեսված 2012 թվականին, անօթևանների փաստաթղթերի ուսումնասիրումն ու նրանց շահառու ճանաչելը հետապնդում է այն նպատակը, որ բնակարանները կառուցվեն ըստ սենյակների թվի պահանջարկի:

Նշենք, որ մինչև օրս Ախուրյանում անօթևանների հերթացուցակում հաշվառված է 184 ընտանիք, որից բնակրաշխման հանձնաժողովին բնակարան ստանալու նպատակով անհրաժեշտ փաստաթղթեր հանձնել են 182 ընտանիք, սակայն այդ ընթացքում 3 միայնակ ծեր շահառուներ մահացել են, ուստի նրանց փաստաթղթերը դիտարկման ենթակա չեն: Ախուրյանում ևս կան երկրաշարժից անօթևան մի շարք ընտանիքներ, որոնք թեն երկրաշարժին բնակարան են կորցրել, սակայն բնակարանաշինության ներկա փուլից չեն կարող օգտվել անօթևանների հերթացուցակում հաշվառված չլինելու պատճառով: Հիշեցման կարգով նշենք, որ ՀՀ կառավարության աղետի գոտում բնակարանաշինությունը և բնակարանների բաշխումը կանոնակարգող որոշումների համաձայն բնակարաններ հատկացվում են միայն այն անօթևան ընտանիքներին, որոնք 2008 թ.-ին մասնակցել են վերահաշվառմանը:

Այսօրվա նիստի ընթացքում քննարկվեցին բնակարանների բաշխման հանձնաժողովի աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրված 62 ընտանիքների փաստաթղթային փաթեթներ, ինչպես նաև 22 ընտանիքների մերժման ենթակա փաստաթղթերը:

Բնակարանների բաշխման գործընթացը կանոնակարգող ՀՀ կառավարության որոշումների համաձայն մերժման ենթակա դիմումատուները հրավիրված էին և մասնակցեցին նիստին: Ինչպես և սպասվում էր, մերժվող ընտանիքների ներկայացուցիչները հայտնեցին իրենց դժգոհությունը, ինչին ի պատասխան քաղաքաշինության նախարարը խորհուրդ տվեց իրենց իրավունքները պաշտպանել դատարանում:

ՀՀ քաղաքաշինության նախարարի հավաստիացումներով Ախուրյան համայնքում երկրաշարժից անօթևան ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրով «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի կողմից կառուցվելու է 3 բազմաբնակարան շենք, մոտ 105 բնակարանով:

Ավելացնենք, որ տարբեր ՋԼՄ-ներում վերջերս եղան մի շարք հրապարակումներ այս տարի ևս Ախուրյանում բնակարանաշինության աշխատանքների հետաձգման մասին: Հրապարակումներում որպես շինաշխատանքների հետաձգման հիմնական պատճառ նշվում էր կառուցման համար

հատկացված տարածքում գրունտային ջրերի առկայությունը: Սակայն այդ խնդրին իրենց համատեղ հերքող հայտարարությամբ անդրադարձան Քաղաքաշինության նախարարությունը և «Գլենդել Հիլզ» ընկերությունը: Հայտարարությունում մասնավորապես ասվում էր. «Ախուրյան համայնքում բնակարանաշինությունն սկսելուց առաջ կառուցապատող կազմակերպությունը («Գլենդել Հիլզ» ՓԲԸ) շինարարության մեկնարկից առաջ պատվիրել է ինժեներա-երկրաբանական հետազոտություն: Համաձայն փորձագիտական եզրակացության, տարածքում 2.7-3 մետր խորության վրա առկա են գրունտային ջրեր, որոնք հոսող չեն և խոչընդոտ չեն շենքերի կառուցման համար: Բացի այդ, փորձագիտական եզրակացությունն արձանագրել է, որ շինարարության և կառուցվածքների շահագործման վրա ազդող երկրաբանական պրոցեսներ՝ սողանք, փլուզում և այլն չկան: Ախուրյան համայնքում բնակարանաշինության պետական ծրագիրը մեկնարկել է, ընթանում են հողային աշխատանքները» (<http://shirakcentre.org/hy/news/931-shirak-centre-ngo>):

2011 թ. հուլիսի 18 - Թե ինչպես է պետկադաստրը Երևանում բնակարաններ «շնորհում» գյումրեցի անօթևան ընտանիքներին

Որպեսզի երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքը կարողանա մասնակցել աղետի գոտում ընթացող բնակարանների բաշխման գործընթացին, պետք է բազմաթիվ փաստաթղթերից և տեղեկանքներից բաղկացած փաթեթ ներկայացնի բնակարանների բաշխման հանձնաժողովի աշխատանքային խմբին: Այդ փաստաթղթերը հայթայթելու համար տվյալ անօթևան ընտանիքը որոշակի ծախսեր պետք է կատարի: Հավանաբար բնակարան ստանալու հավակնորդ ընտանիքների հոգսը թեթևացնելու նպատակով՝ պետությունը բնակարանների բաշխման հետ կապված մի շարք գործառնություններ և տեղեկանքների վճարներ, այդ թվում՝ սեփականության մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրից տեղեկանքների ստացումն ու դրանց համար նախատեսված գումարների մուծումները, վերցրել է իր վրա:

Սակայն հենց դրա հետ կապված՝ այստեղ ուզում եմ անդրադառնալ այն խնդրին, թե պետկադաստրի կողմից տրամադրվող երբեմն կիսատ-պռատ և անհիմն տեղեկություններ պարունակող տեղեկանքների պատճառով ինչպիսի քաջքույկների մեջ են հայտնվում հարյուրավոր անօթևան ընտանիքներ....

Պատկերացնու մ եք երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած և 23 տարի շարունակ խոնավ ու խարխուլ տնակում մի կերպ պատսպարված այն անօթևան ընտանիքի վիճակը, որին բնակարանների բաշխման հանձնաժողովում պատասխանում են, թե ձեզ պետությունը բնակարան չի կարող տալ, քանի որ համաձայն ՀՀ անշարժ գույքի կադաստրի այս կամ այն ստորաբաժանման կողմից տրված տեղեկանքի՝ Երևանում ունեք 2, 3 և նույնիսկ 4 բնակարան կամ առանձնատուն: Սովորաբար նման դեպքերում, ըստ նույն տեղեկանքների, տվյալ անօթևան ընտանիքը մեկական բնակարան էլ Գյումրիում կամ հանրապետության մեկ այլ քաղաքում ունի:

Ի՞նչ է մնում անել տվյալ խեղճ ու կրակ անօթևանին.... Ապացուցել, որ ինքը բացի իր կիսաքանդ տնակից ոչինչ չունի: Դրա համար նա նախ պիտի կարողանա մի 30-40 հազար դրամի չափով գումար հայթայթել, ապա պիտի գնա հասնի Երևան, թակի այն բոլոր՝ իրեն «պատկանող» բնակարանների դռները, և եթե բախտը բերի ու այդ տների դռները նրա առաջ բացեն, բնակարանատերերից խնդրի բնակարանների սեփականության վկայականների ու այդ ընտանիքի անդամների անձնագրերի

պատճենները, հետո դրանք պիտի տանի կադաստրի տվյալ տարածքի բաժին, ապացուցի, որ բնակարանը իրենը չէ, այլ պարզապես անուն-ազգանուններն են համընկել, կատարի համապատասխան մուծումներ, նոր՝ ճշգրտված տվյալներով, սեփականության մասին տեղեկանքներ վերցնի, բերի բնակբաշխման հանձնաժողով: Եվ կադաստրի կառույցների ղեկավարները սովորաբար նման, գյումրեցիներիս բառով ասած՝ «քյալագյոգության» և սխալ տեղեկությունների տրամադրման համար որևէ պատասխանատվություն չեն կրում, կասեի ճիշտ հակառակը՝ գումարներ են աշխատում, իսկ անօթևան ընտանիքներն ընկնում են պարտքերի մեջ: Նման սխալ տեղեկությունների տրամադրումը կադաստրում հիմնականում պատճառաբանում են իրենց ունեցած տեղեկատվական բազայի թերիությամբ:

Նման պարագայում այն անօթևան ընտանիքների բախտն է բերում, որոնք ունեն հազվադեպ հանդիպող ազգանուններ: Կադաստրում սեփականության մասին տեղեկությունները հիմնականում ստուգվում են անուն-ազգանունով, որի դեպքում, ինչպես դժվար չէ պատկերացնել, գուգադիպությունների հնարավորությունը բավական մեծ է:

Գուցե կհարցնեք, թե այդ դեպքում կադաստրի ստորաբաժանումներն ինչի համար են այդ քանակությամբ աշխատակիցներ պահում, ի դեպ՝ նրանցից շատերն էլ հաստավիզ ու կերած-խմած տեսքով: Կամ ինչու պիտի քաղաքացին չարչարվի ու դեռ նույնիսկ գումարներ վճարի կադաստրի սխալներն ուղղելու համար... Կարծում եմ՝ այս հարցերի պատասխանը պիտի տան ՀՀ բարձրագույն իշխանությունները, որոնք կարծես թե չեն զլանում ամեն ինչ անել, որ շարքային քաղաքացին հիասթափվի և բռնի արտագաղթի ճանապարհը:

Իհարկե, նման իրավիճակում հայտնված անօթևան ընտանիքն ունի նաև այլընտրանք... նա պարզապես կարող է նորոգել իր տնակը և գլուխը կախ շարունակել բնակվել, ինչպես ապրել է այս վերջին 23 տարին:

Վերջում ուզում եմ բնակարան ստանալու հավակնորդ և նման խնդրի առաջ կանգնած գյումրեցի հարյուրավոր անօթևաններից ընդամենը մի կոնկրետ օրինակ բերել:

Գյումրեցի անօթևան, նպաստառու Վահե Պետրոսյանի հինգ անձից բաղկացած ընտանիքը Գյումրու անօթևանների հերթացուցակում հաշվառված է 901 հերթական համարում, ստանալու են մեկսենյականոց բնակարան: Երեք ամիս առաջ բնակբաշխման հանձնաժողով էին ներկայացրել պահանջվող բոլոր փաստաթղթերն ու անհամբեր սպասում էին, թե վերջապես երբ է հասնելու բնակարան ստանալու իրենց հերթը: Սակայն 3 օր առաջ նրանց զանգահարել են բնակբաշխման հանձնաժողովին աջակցող աշխատանքային խմբից և հայտնել են, որ ընտանիքի անդամների անունով չորս հատ Երևանում և մեկ հատ էլ Գյումրիում սեփական բնակարան ունենալու մասին տեղեկանք է ստացվել կադաստրից, այդ թվում նրանց 12-ամյա աղջկա անունով նշվել է միանգամից 2 բնակարան Երևանում: Այստեղ առավել զարմանալին այն է, որ ընտանիքը 3 ամիս առաջ իր հերթին վճարում կատարելով՝ կադաստրի Գյումրու ստորաբաժանումից արդեն իսկ տեղեկանք էր ստացել սեփականություն չունենալու մասին, որն էլ ներկայացրել էր բնակբաշխման հանձնաժողովին: Փաստորեն պետկադաստրը նույն ընտանիքին տրամադրել է երկու տարբեր, իրարամերժ տեղեկություններ պարունակող տեղեկանքներ, մեկը՝ որ սեփականություն չունեն, մյուսը՝ ճիշտ հակառակը՝ որ ունեն: Դե հիմա, խեղճ անօթևան ընտանիք, արի ու ապացուցիր, որ այդ բնակարանները ձերը չեն, հակառակ պարագայում՝ հինգ անձով մեկսենյականոց բնակարանի սպասող ընտանիքը որպես ոչ կարիքավոր կզրկվի բնակարան ստանալու իրավունքից: Հիմա

գործազուրկ, Երևանի անցուդարձից անտեղյակ ընտանիքի հայրը կադաստրի թափթփված գործելակերպի պատճառով հայտնվել է անելանելի վիճակում:

Այսպիսի բաներ...

2011 թ. հուլիսի 25 - Պետկադաստրը շարունակում է երկրաշարժից անօթևան ընտանիքներին հասցնել միլիոնների վնաս

Նախորդ շաբաթ «Շիրակ կենտրոնը» իր հաղորդագրություններից մեկում անդրադարձել էր բարոյական և ֆինանսական այն զգալի վնասների խնդրին, որ աղետի գոտում բնակարան ստանալու հավակնորդ հարյուրավոր անօթևան ընտանիքներին հասցվում է սեփականության առկայության մասին պետկադաստրի տրամադրած սխալ տվյալներով տեղեկանքների պատճառով: Հաղորդագրությունում մասնավորապես խոսվում էր այն մասին, թե ինչպիսի խնդիրներ են ունենում այդ անօթևան ընտանիքները բնակարանների բաշխման գործընթացին մասնակցելիս, երբ ըստ ՀՀ անշարժ գույքի կադաստրի բաժինների կողմից տրված տեղեկանքների՝ իբր Երևանում և հանրապետության այլ համայնքներում ունեն 2, 3, 4 և նույնիսկ 5 բնակարան կամ առանձնատուն: Նման դեպքերում եթե տվյալ ընտանիքները չկարողանան կրկին պետկադաստրի կողմից վճարովի հիմունքներով տրամադրվող տեղեկանքներով հերքել սեփականություն ունենալու փաստը, ապա նրանք աղետի գոտում երկրաշարժից անօթևան ընտանիքների հաշվառման կարգը սահմանող կառավարական որոշումներին համապատասխան կզրկվեն պետության կողմից երկրաշարժին կորցրած բնակարանի դիմաց փոխհատուցումից (<http://shirakcentre.org/hy/lurer/1031-shirak-centre-ngo>):

Հաղորդագրությունը թեև հրապարակեցին տասնյակ ԶԼՄ-ներ, սակայն մինչև օրս պետկադաստրի որևէ պաշտոնյայի կողմից արձագանք չկա: Եվ այնպիսի տպավորություն կարելի է ստանալ, որ արտառոց ոչ մի բան էլ չի կատարվել: Գուցե իրոք պետկադաստրի թափթփված, թե միտումնավոր թույլ տրված սխալ տեղեկատվության պատճառով աղետի գոտու անօթևան ընտանիքներին պատճվառած հսկայական ֆինանսական և բարոյական վնասը իշխանությունների մոտ զրոյական արժեք ունի:

Մեր կողմից հնչեցրած ահազանգի հանդեպ քար լռությունը մեզ ստիպեց, որ այսօր մենք այդ խնդրով ևս մեկ տեղեկատվության հարցում էլ հղենք ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Երվանդ Զախարյանին, ակնկալելով ստանալ հետևյալ հարցերի պատասխանը.

1. 2009-2011 թթ. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից կատարված վճարումներով և հարցումներով աղետի գոտում բնակբաշխման գործընթացին մասնակցելու հավակնորդ քանի՞ քաղաքացու սեփականություն ունենալու մասին տեղեկանք է պահանջվել և քանիսն է տրամադրվել,
2. քանի՞ քաղաքացու դեպքում տրամադրված տեղեկանքներով է սեփականության համընկնում գրանցվել և այդ դեպքերից քանի՞ քաղաքացու սեփականություն ունենալու վերաբերյալ տեղեկատվություն է հետազայում հերքվել,
3. աղետի գոտում բնակարան ստանալու հավակնորդ ընտանիքների սեփականության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը

տրամադրելու համար ՀՀ քաղաքաշինության նախարարությունը որքան գումար է վճարել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին, իսկ հետագայում աղետի գոտու անօթևան ընտանիքների սեփականություն ունենալու համընկման դեպքերը հերքելիս ընդհանուր առմամբ որքան գումար է վճարվել տվյալ քաղաքացիների կողմից:

Ավելացնենք, որ մեր մոտավոր հաշվարկներով կադաստրը 2009 - 2011 թթ. աղետի գոտում բնակարան ստանալու հավակնորդ ավելի քան 600 ընտանիքի անդամների մասին տրամադրել է սխալ տեղեկատվությամբ տեղեկանքներ:

Մեր ունեցած տեղեկություններով 2009 թվականից մինչև օրս ՀՀ քաղաքաշինության նախարարությունը պետական բյուջեի միջոցներից պետկադաստրին աղետի գոտում բնակարան ստանալու հավակնորդ ընտանիքների սեփականության մասին տեղեկատվություն տրամադրելու և նոր ստացած բնակարանների սեփականաշնորհման համար նախատեսված ծառայությունների դիմաց արդեն իսկ վճարել է 60 մլն դրամի չափ գումար: Բնականաբար պետկադաստրի կողմից տրված սխալ տեղեկությունները հերքելու նպատակով յուրաքանչյուր անօթևան ընտանիք էլ իր հերթին է կատարում վճարումներ՝ ճշգրտված տեղեկություններով տեղեկանքներ ձեռք բերելու համար: Ի դեպ, որպեսզի թյուրիմացությունների մեջ ներքաշված ընտանիքը կարողանա կադաստրի՝ սեփականություն ունենալու մասին սխալ տեղեկությունները հերքել, անձամբ պետք է ապացուցի, որ ինքը իր տնակից բացի ոչինչ չունի: Դրա համար նա նախ պիտի գնա հասնի Երևան կամ հանրապետության այն բնակավայրերը, որտեղ ըստ կադաստրի տվյալների գտնվում են իրեն «պատկանող» բնակարանները, թակի դրանց դռները, և եթե բախտը բերի ու այդ տների դռները նրա առաջ բացեն, բնակարանատերերից խնդրի բնակարանների սեփականության վկայականների ու այդ ընտանիքի անդամների անձնագրերի պատճենները, հետո դրանք պիտի տանի կադաստրի տվյալ տարածքի բաժին, ապացուցի, որ բնակարանը իրենը չէ, այլ պարզապես անուն-ազգանուններն են համընկել, կատարի համապատասխան մուծումներ, նոր՝ ճշգրտված տվյալներով, սեփականության մասին տեղեկանքներ վերցնի ու հանձնի բնակբաշխման հանձնաժողովին:

Այդպիսով, աղետի գոտում բնակարանների բաշխման գործընթացին մասնակցող և նման խնդիրների մեջ ներքաշված յուրաքանչյուր ընտանիքի, բացի բարոյական վնասից, պատճառվում է նվազագույն հաշվարկներով 20 – 30 հազար դրամի չափով ֆինանսական վնաս, որը ընդհանուր և մոտավոր հաշվարկներով ամբողջ աղետի գոտու կտրվածքով հասնում է ոչ մեկ տասնյակ մլն դրամի:

Իսկ թե ո՞վ և ե՞րբ պետք է փոխհատուցի հարյուրավոր անօթևան ընտանիքներին, երկու տարի շարունակ կադաստրի աշխատակիցների անփույթ գործունեության պատճառով հասցված այս ահռելի բարոյական և ֆինանսական վնասը՝ հայտնի չէ: Լավ, ի վերջո ինչ-որ մեկը կրելու է պատիժ անօթևան ընտանիքներին ու, ի դեպ, պետությանը ևս հասցված ֆինանսական վնասի համար:

2.9. Եվս մեկ անգամ եմ ուզում կոչ անել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Երվանդ Զախարյանին, որ հրատապ միջոցներ ձեռք առնեն ու պետկադաստրի ստորաբաժանումները վերջ դնեն աղետի գոտում բնակարան ստանալու համար անօթևան ընտանիքների սեփականություն ունենալու մասին սխալ տեղեկատվություն պարունակող տեղեկանքների տրամադրմանը, առանց այդ

Էլ սոցիալապես ծանր պայմաններում գտնվող մարդկանց զերծ պահելով ավելորդ քաշքշուկներից և ծախսերից:

2011 թ. հուլիսի 26 - *Կադաստրի կոմիտեն արձագանքեց*

ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն պարզաբանում տարածեց «Շիրակ կենտրոն»-ի «Պետկադաստրը շարունակում է երկրաշարժից անօթևան ընտանիքներին հասցնել միլիոնների վնաս» տասնյակ էլեկտրոնային պարբերականներում հրապարակված հաղորդագրության վերաբերյալ: Պարզաբանումը ստորև ներկայացվում է ամբողջությամբ.

«Հայաստանի Հանրապետության Շիրակի և Լոռու մարզերում աղետի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակելի կացարաններով ապահովման պետական ծրագրերի շրջանակներում բնակարան ստանալու համար դիմող քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի առկայության վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից կատարվող հարցումների հիման վրա, անշարժ գույքի վերաբերյալ կադաստրային տվյալներում (պետական գրանցման կամ գույքագրման փաստաթղթերում) անշարժ գույքի սեփականատերերի անձնագրային և անձանց նույնականացնելու համար այլ լրացուցիչ տվյալների բացակայության պատճառով, իրոք, ոչ միշտ է հնարավոր լինում տրամադրել սպառիչ տեղեկատվություն ֆիզիկական անձանց պատկանող անշարժ գույքի առկայության կամ բացակայության վերաբերյալ:

Խնդիրը կայանում է նրանում, որ որոշ անշարժ գույքի վերաբերյալ կադաստրային տվյալներում (պետական գրանցման կամ գույքագրման փաստաթղթերում) անշարժ գույքի սեփականատերերի անձնագրային և անձանց նույնականացնելու համար այլ լրացուցիչ տեղեկությունների (հայրանուն, ծննդյան տարեթիվ, ամիս-ամսաթիվ, սոցիալական ապահովության քարտի համար) բացակայության պատճառով բնակելի կացարան ստանալու համար հավակնող անձանց և անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բանկում անշարժ գույքի սեփականատերերի անուն, ազգանունների համընկնման պարագայում հնարավոր չի լինում իրականացնել համընկնող այդ տվյալներով անձանց հետագա նույնականացումը, որի հետևանքով տեղեկատվությունը տրամադրվում է՝ համընկնող անուն, ազգանուններով (երբեմն նաև հայրանուններով) անձանց պատկանող գույքի առկայության վերաբերյալ՝ նշելով այդ անձանց հետագա նույնականացման համար կադաստրի համակարգում անհրաժեշտ տվյալների բացակայության մասին: ՀՀ գործող օրենսդրության պահանջների համաձայն կադաստրի համակարգը տեղեկատվություն է տրամադրում գրանցված անշարժ գույքի վերաբերյալ համակարգում առկա տվյալների հիման վրա:

Միաժամանակ, կատարված հարցումների մեծ ծավալից էլնելով (կադաստրի համակարգի կողմից նման հարցումների պատասխանները տրվել են 2009 թվին՝ 10559 անձի, 2010 թվին՝ 10118 անձի, իսկ 2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում՝ 5991 անձի վերաբերյալ) կադաստրի համակարգի հնարավորությունները սահմանափակ են համակարգում այլ լրացուցիչ տվյալների բացակայության պարագայում համընկնող անուն-ազգանունները առանձին-առանձին ուսումնասիրելու հարցում:

Ներկայումս Կադաստրի պետական կոմիտեում իրականացվող բարեփոխումների շրջանակներում մեծ ծավալի աշխատանքներ են տարվում նաև անշարժ գույքի կադաստրային տվյալների ամբողջական միասնական էլեկտրոնային բազա ստեղծելու ուղղությամբ և այդ նպատակով կապ է հաստատվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի տեղեկատվական համակարգի հետ, որի միջոցով՝ լրացուցիչ տվյալների առկայության դեպքում, Կադաստրի տեղեկատվական համակարգը համալրվում է նաև ֆիզիկական անձանց անձնագրային տվյալներով և սոցիալական ապահովության քարտերի համարներով:

Միաժամանակ աշխատանքներ են տարվում նաև ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգի հետ էլեկտրոնային կապ հաստատելու և բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ ստանալու հնարավորությունը ապահովելու ուղղությամբ: Չնայած նշված աշխատանքների իրականացումը հնարավորություն կտա լրջորեն համալրել անշարժ գույքի կադաստրի տեղեկատվական բանկը, սակայն այն չի կարող վերջնականապես ապահովել գույքային իրավունքներ ունեցող ֆիզիկական անձանց վերաբերյալ ամբողջական տվյալների համալրումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, որպես խնդրի լուծում մեր կողմից ՀՀ քաղաքաշինության նախարարությանը առաջարկվել է բնակարանային ապահովման պետական ծրագրերի շրջանակներում բնակելի կացարան ստանալու համար հաշվառման դիմող անձանց անշարժ գույքի առկայության վերաբերյալ տեղեկությունների ճշգրտման գործընթացում հնարավորինս ներգրավել նաև համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններին՝ համընկնող անուն-ազգանուններով սեփականատերերի նունյականացման համար լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով, այդ գործում առաջարկելով նաև մեր պատրաստակամությունը, ըստ անհրաժեշտության, գույքի գտնվելու վայրի տարածքային ստորաբաժանումների միջոցով գործուն աջակցություն ցուցաբերելու տեղական ինքնակառավարման մարմիններին:

Հարկ է նշել, որ բնակարանային ապահովման պետական ծրագրերի շրջանակներում ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից կատարվող հարցումների հիման վրա ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգի կողմից քաղաքացիներին պատկանող անշարժ գույքի առկայության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է բացարձակապես անվճար»:

Ծրագրի իրականացման ընթացքում մեզ դիմում էին այնպիսի անօթևաններ, որոնք որևէ տեղ անգամ փաստացի գրանցում չունեն: Մի օրինակ. գյումրեցի 50-ամյա Սամվել Սերյոժայի Հակոբյանը, թեև երկրաշարժին կորցրել է իրեն պատկանող Կոշտոյան 12 շենքի 31 բնակարանը, սակայն մինչև օրս պետության կողմից չի փոխհատուցվել և ապագայում էլ չի փոխհատուցվելու՝ անօթևանների հերթացուցակում հաշվառված չլինելու պատճառով:

Խնդիրն այն է, որ աղետի գոտում բնակարանաշինության և բնակբաշխման գործընթացները կանոնակարգող ՀՀ կառավարության որոշումների համաձայն, եթե անօթևանը դուրս է գրվել փլված շենքի հասցեից, նա կորցնում է պետության կողմից բնակարանային փոխհատուցման իրավունքը: Նման իրավիճակում է հայտնվել

նան միայնակ Ս. Հակոբյանը: Նա 1996 թ.-ին դուրս է գրվել իր փլված բնակարանի հասցեից, գրանցվել է իր ազգականներից մեկին պատկանող սեփական տանը, սակայն որոշ ժամանակ անց այդ տունը վաճառելու պատճառաբանությամբ նրան դուրս են գրել այդ հասցեից: Իսկ կրկին փլված շենքի հասցեով գրանցումն աղետի գոտում արգելված էր, ուստի նա չի կարողացել վերականգնել իր նախկին գրանցումը: Թեև մեր դիտարկումներով քիչ չեն այն դեպքերը, երբ նախորդ տարիներին շատ ու շատ մարդկանց այնուամենայնիվ «հաջողվել է» գրանցվել փլված բնակարանի հասցեով: Փաստորեն նա և նրա նման տասնյակ քաղաքացիներ կան Գյումրիում, որոնք չունեն անգամ ժամանակավոր կացարաններ և ապրում են վարձով կամ որևէ ազգականի տանը: «Շիրակ կենտրոնին» աջակցություն ստանալու ակնկալիքով հաճախ են դիմում պետության կողմից բնակարանային փոխհատուցման ոչ ենթակա ընտանիքների կարգավիճակում հայտնված անօթևան քաղաքացիները:

Մեր կարծիքով, այնուհանդերձ, նման ընտանիքների բնակարանային խնդիրը լուծելու ճանապարհներ կան.

1. անհատ բարերարների կամ բարեգործական հիմնադրամների կողմից բնակարանների նվիրատվություն,

2. համայնքին պատկանող ֆոնդից բնակարան կամ համեմատաբար տանելի պայմաններ ունեցող, նախկին բնակիչներից ազատված քարաշեն կամ կիսաքարաշեն ժամանակավոր կացարանի հատկացում: Ի դեպ, կարելի է նման ժամանակավոր բնակելիների ֆոնդ ստեղծել ներկայումս Մուշ-2 թաղամասում բնակարան ստացած ընտանիքների ժամանակավոր կացարաններից, եթե համապատասխան փոխհատուցմամբ դրանց տնօրինողները քանդելու փոխարեն հանձնեն համայնքին:

3. Հայաստանում պետական բյուջեի միջոցներով կառուցվող սոցիալական բնակարանային ֆոնդից բնակարանների հատկացում:

6.1 2011 թվականին բնակարանային գործերի շարժի թվային աղյուսակներ

Տեղեկանք

Գյումրի քաղաքի երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքների բնակարանային գործերի շարժի վերաբերյալ առ. 10.05.2011

Տեղեկանքն արտացոլում է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ Գյումրիում 2009-2011 թթ. իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարաններն ըստ սննդակների թվի, անօթևանների հերթացուցակում հաշվարկված ընտանիքների, բազմաբնակարան շենքերից բնակարան ստանալու նպատակով փաստաթղթեր ներկայացրած անօթևան ընտանիքների քանակական շարժի մասին տվյալները:

Հ/Հ	Հերթացուցակ ըստ սննդակների	Ծանուցված ընտանիքների քանակը	Հանձնաժողով ներկայացված գործեր	Բնակարան ստացած ընտանիքների քանակը	2011 թ. Կառուցվելիք բնակարանների քանակը	Հանձնաժողովին հանձնված գործերը	Ներկայացվել են փաստաթղթեր չեն ներկայացրել և գործերի թերի	Ընդհանրապես չեն ներկայացվել	Գյումրիում քաղաքապետարանի կողմից չներկայացված գործեր (հերթացուցակում դրամական փոխ. և սեփական տներ կորցրած ընտանիքների քանակը)
1	2		3	4	5	6	7	8	9
1	1 սննդակ	1462	853	440	640	413	128	273	208
2	2 սննդակ	1344	846	352	528	494	199	261	38
3	3 սննդակ	1268	803	264	464	539	219	214	32
4	4 սննդակ	191	120	-	124	120	51	13	7
5	5 սննդակ	5	1	-	-	1	4	-	-
Ընդամենը		4270	2623	1056	1756	1567	601	761	285

Մոյս տեղեկանքում ներառված թվային տվյալները «Շիրակ կենտրոն» ՀԿ-ին տրամադրել է ՀՀ քաղաքաշինության նախարարության բնակարանների բաշխման հանձնաժողովին աջակցող աշխատանքային խումբը:

Տեղեկանք

Գյումրի քաղաքի երկրաշարժի հետևանքով ծանուցված անօթևան ընտանիքների բնակարանային գործերի շարժի վերաբերյալ առ. 13.07.2011թ.

Հ/Հ	Հերթացուցակ ըստ սենյանների	Ծանուցված ընտանիքների քանակը	Հանձնաժողով ներկայացված գործեր	ԲՆակարան ստացած ընտանիքների քանակը	2011 թ. կառուցվելիք բնակարանների քանակը	Հանձնաժողովին հանձնված գործերը	Ներկայացել են փաստաթղթեր չեն ներկայացրել և գործերը թերի	Ընդհանրապես չեն ներկայացել	Գյումրու քաղաքապետարանի կողմից ներկայացված գործեր (հերթացուցակում դրամական փոխ. և սեփական տներ կորցրած ընտանիքների քանակը)
1	2	3	4	5	6	7	8	9	
1	1 սենյակ	1462	1010	440	640	570	38	210	204
2	2 սենյակ	1344	1023	352	528	671	146	138	37
3	3 սենյակ	1268	976	264	464	712	148	113	31
4	4 սենյակ	191	149	-	124	149	28	7	7
5	5 սենյակ	5	3	-	-	3	2	-	-
Ընդամենը		4270	3161	1056	1756	2105	362	468	279

Տեղեկանք

Գյումրի քաղաքի երկրաշարժի հետևանքով ծանուցված անօթևան ընտանիքների բնակարանային գործերի շարժի վերաբերյալ առ. 03.08.2011թ.

Հ/Հ	Հերթացուցակ ըստ սենյանների	Ծանուցված ընտանիքների քանակը	Հանձնաժողով ներկայացված գործեր	ԲՆակարան ստացած ընտանիքների քանակը	2011 թ. Կառուցվելիք բնակարանների քանակը	Հանձնաժողովին հանձնված գործերը	Ներկայացել են փաստաթղթեր չեն ներկայացրել և գործերը թերի	Շնորհանրակետ չեն ներկայացրել	Գյումրու քաղաքապետարանի կողմից զործեր (հերթացուցակում դրամական փոխ. և սեփական տներ կորցրած ընտանիքների քանակը.)
1	2	3	4	5	6	7	8	9	
1	1 սենյակ	1462	1054	440	640	614	30	174	204
2	2 սենյակ	1344	1075	352	528	723	133	99	37
3	3 սենյակ	1268	1019	264	464	755	138	80	31
4	4 սենյակ	191	159	-	124	159	21	4	7
5	5 սենյակ	5	3	-	-	3	2	-	-
Ընդամենը		4270	3310	1056	1756	2254	324	357	279

Տեղեկանք

**Գյուլիսի քաղաքի երկրաշարժի հետևանքով ծանուցված անօթևան
ընտանիքների բնակարանային գործերի շարժի վերաբերյալ առ. 01.11.2011թ.**

Հ/Հ	Հերթագրության ըստ սենյակների	2010թ. կառուցված բնակարանների քանակը	2011 թ. Կառուցվելիք բնակարանների քանակը	01.11.2008թ. դրությամբ հաստատված Գյուլիսի քաղաքապետարան ի հերթագրության հաշվառված ընտանիքների քանակը	Ծանուցված ընտանիքների քանակը	2010-2011թթ. Հանձնաժողովին ներկայացված բնակարանային գործերի փաթեթներ քանակը	Այդ թվում			Ներկայացվել են, սակայն փաստաթղթեր չեն ներկայացրել	Ընդհանրապես չեն ներկայացվել	Գյուլիսի քաղաքապետարանի կողմից չներկայացված գործեր (ներթացուցվում դրամական փոխ. և սեփական տներ կոլբջրած ընտանիքների քանակը)	Գյուլիսի քաղաքապետարանի կողմից չներկայացված գործեր (ներթացուցվում դրամական փոխ. և սեփական տներ կոլբջրած ընտանիքների քանակը)	Գյուլիսի քաղաքապետարանի կողմից չներկայացված գործեր (ներթացուցվում դրամական փոխ. և սեփական տներ կոլբջրած ընտանիքների քանակը)
							2010թ. բնակարան առացած ընտանիքների քանակը	հանձնաժողովին հանձնված ամբողջական փաթեթների քանակը	հանձնաժողովին հանձնված թերի բնակարանային գործերի քանակը					
1	1 սենյակ	440	640	1462	1257	1082	405	659	18	27	148	205	0	
2	2 սենյակ	352	528	1344	1288	1188	368	785	33	27	75	56	7	
3	3 սենյակ	264	464	1268	1239	1131	276	828	29	42	64	29	3	
4	4 սենյակ		124	191	187	182	2	174	6	4	1	4	8	
5	5 սենյակ			5	5	5	3	3	2				1	
Ընդամենը		1056	1756	4270	3976	3588	1051	2449	88	100	288	294	2	

7. Եզրակացություն

Թեև 1988 թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժից անցել է 23 տարի, սակայն պետությունը միայն Շիրակի մարզում, անօթևանների հերթացուցակում փաստացի հաշվառված 3700 անօթևան ընտանիքների հանդեպ դեռևս չի կատարել բնակարանային փոխհատուցման պարտավորությունները: Բացի դրանից, միայն Գյումրիում վաղուց շարքից դուրս եկած փայտյա փոքրիկ ժամանակավոր կացարաններում բնակվում են մոտ 3500 անօթևան ընտանիքներ, որոնք անօթևան ընտանիքների հերթացուցակներում հաշվառված չեն, ինչի պատճառով նրանց հանդեպ պետությունը բնակարանային փոխհատուցման որևէ պարտավորություն չի ստանձնել:

2011 թ. հոկտեմբեր ամսվա դրությամբ Շիրակի մարզի գյուղական համայնքներում անօթևանների հերթացուցակում հաշվառված է 546 ընտանիք, իսկ Գյումրիում՝ 3200 ընտանիք:

Գյումրիում 2011-2012 թթ. ևս 1756 ընտանիքների կբաշխվեն բնակարաններ: Շիրակի մարզի Ախուրյան համայնքում 2012 թ.-ին նախատեսվում է բնակարաններով ապահովել 105 ընտանիքի:

Շիրակի մարզի անօթևանների հերթացուցակում հաշվառված, գյուղական համայնքներում երկրաշարժից անօթևան 451, իսկ Գյումրիում մոտ 1440 ընտանիքի հանդեպ բնակարանային պարտավորությունների մասին պետությունը որևէ ծրագիր դեռևս չի հայտարարել:

1. Գյումրիում երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած, սակայն մինչև օրս պետության կողմից բնակարանով չփոխհատուցված մոտ 300 ընտանիքներ ընդգրկված չեն անօթևանների հերթացուցակում: Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության 2011 թ. ապրիլի 14-ի, 1999 թ. հունիսի 10-ի N 432, 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն, 2009 թ. նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշումներով երկրաշարժից անօթևան ընտանիքներին հաշվառման և բնակարանների բաշխման կարգի համաձայն պետության կողմից բնակարանային փոխհատուցման ենթակա են միայն այն ընտանիքները, որոնք մինչև 2008 թ. նոյեմբերի 1-ը կարողացել են տասնյակ փաստաթղթերից բաղկացած փաթեթները ներկայացնել տեղական ինքնակառավարման մարմիններին և վերահաշվառվել: Իսկ այն հատկապես միայնակ ծերերը, սոցիալապես ծանր պայմաններում գտնվող բազմանդամ ընտանիքները, որոնք չեն կարողացել այդ ժամկետում ձեռք բերել բազմաթիվ վճարովի տեղեկանքներ, դուրս են մնացել ՀՀ կառավարության՝ երկրաշարժից անօթևան ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրից:

2. Աղետի գոտում բնակարանների բաշխման գործընթացը կարգավորող ՀՀ կառավարության N 432, N 1337 և N 1402 որոշումներով ու դրանցով սահմանված կանոնակարգերով անօթևան ընտանիքներին, անկախ ընտանիքի անդամների քանակից, տրվում է նույնքան սենյականոց բնակարան, որքան նրանք կորցրել են երկրաշարժին, իսկ եթե ընտանիքների անդամների թիվը պակասել է, ապա նման դեպքերում սենյակների թիվը պակասեցվում է: Անտեսելով այն փաստը, որ երկրաշարժից անցած 23 տարիների ընթացքում աղետի գոտու անօթևան ընտանիքների կազմը զգալի փոփոխությունների է ենթարկվել՝ հիմնականում նրանց

և՛ անդամների քանակն է ավելացել, և՛ ընտանիքի ներսում նոր ընտանիքներ են ավելացել, որոնք երկար տարիներ բնակվում են տարբեր կացարաններում:

3. Բնակարան ստացող ընտանիքներին պարտադրում են ժամանակավոր կացարանները քանդել, տարածքները ազատել և հանձնել քաղաքապետարանին, հակառակ պարագայում նրանց չի թույլատրվում սեփականաշնորհել նոր ստացած բնակարանը: Եվ սա այն դեպքում, երբ նախորդ տարի՝ 2010թ. Գյումրիում 1056 բնակարան ստացած ընտանիքների թվի կեսը՝ 460-ը, իսկ ընթացիկ 2011թ.՝ 1756 ընտանիքներից մոտ 820-ը բաղկացած են 5-ից մինչև 16 անձից, որոնք մեծ ցանկության դեպքում անգամ ժամանակավոր կացարանները քանդելիս չեն կարող նոր ստացած՝ 40-65 քառ. մետր մակերեսով բնակարաններում փոքրիշատե տանելի պայմաններ ստեղծել իրենց ընտանիքների համար:

4. Մեր կազմակերպության և շահառուների երկարատև բողոքից հետո ՀՀ կառավարությունը պարտադրված 2011 թ. ապրիլի 14-ի նիստում վերոհիշյալ որոշումներում կատարեց փոփոխություն, և, որպես բացառություն, բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած բազմանդամ ընտանիքներին իրավունք տրվեց մեկից ավելի ոչ հիմնական շինություններ (տնակներ) զբաղեցնելու դեպքում դրանցից մեկը բնակությունից չազատել և չքանդել: Մակայն անտեսվեցին այն ընտանիքները, որոնք թեև բազմանդամ են, սակայն չեն տնօրինում մեկից ավելի տնակ, նրանց ոչ հիմնական շինությունները ենթակա են ամբողջովին քանդման: Մեկից ավելի տնակներ ունեցող բազմանդամ ընտանիքներին արտոնության տրամադրումը, իսկ մեկ տնակ ունեցող բազմանդամներին դրա չտրամադրումը նշանակում է, որ նախկինում բնակվելու համեմատաբար տանելի պայմաններ ունեցած ընտանիքի բնակության պայմանները բարելավվելու են, իսկ առավել անմխիթար պայմաններում բնակված ընտանիքներինը՝ ոչ, ինչը անհավասար պայմանների մեջ է դնում միևնույն կարգավիճակում գտնվող բազմանդամ ընտանիքներին:

5. ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումները մի շարք բացթողումներ ևս ունեն: Օրինակ, չի հստակեցված, թե քանդման ոչ ենթակա ճանաչված կացարանների հետագա իրավական կարգավիճակը ինչպիսին է լինելու: Ավելին, շահառուների կողմից կան բազմաթիվ բողոքներ, որ մարզային ու տեղական իշխանությունները տարաբնույթ խոչընդոտներ ստեղծելով, հաճախ չեն իրականացնում ՀՀ կառավարության բնակարաններ ստացած բազմանդամ ընտանիքներին կիսվելու և մասամբ ինքնակամ կառույցներում բնակվելու հնավարություն ընձեռելու մասին որոշման պահանջները, ինչպես նաև օգտվելով անօթևան ընտանիքների անիրազեկությունից օտարում են նրանց տնակների տարածքները, դրանով ոտնահարելով նրանց սոցիալ-տնտեսական իրավունքները:

Վերոհիշյալ որոշումը, ինչպես նաև մարզային և տեղական իշխանությունների գործելակերպը հակասում են վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի (1996թ.) բնակարանի իրավունքին վերաբերող 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին, որոնցում ասված է. Բնակարանի իրավունքի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել՝ ուղղված.

4. պատշաճ չափանիշներով բնակարանների մատչելիության խթանմանը,

անօթևանության կանխմանն ու կրճատմանը՝ այն աստիճանաբար վերացնելու նկատառումով:

Եվս մեկ դիտարկում: Բոլորիս քաջ հայտնի է, որ 2008 թ. ՀՀ կառավարության ընդունած «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգի» համաձայն՝ աղետի գոտու անօթևան ընտանիքների բնակապահովման խնդրի լուծման վերջնաժամկետ հայտարարված է 2013 թվականը: 2009 թվականին Գյումրու անօթևանների հերթացուցակում կար հաշվառված մոտ 4100 ընտանիք, նրանցից 1056-ը բնակարան ստացան 2010 թ.-ին, ևս 1756-ը բնակարանատեր պետք է դառնան հաջորդ տարում: Սակայն դրանից հետո էլ անօթևանների ցուցակում հաշվառված կմնան մոտ 1300 ընտանիքներ: Ըստ Շիրակի փոխարգպետ Սեյրան Պետրոսյանի՝ բացառված չէ, որ հաջորդ տարի այդ ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու նպատակով ՀՀ պետական բյուջեով նախատեվեն գումարներ՝ այսպես կոչված բնակարանային գնման վկայագրեր տրամադրելու համար:

Էլ չենք խոսում Գյումրիում տնակներում և վարձով բնակվող հարյուրավոր այն անօթևան ընտանիքների գոյության մասին, որոնք տարաբնույթ պատճառներով հաշվառված չեն հերթացուցակում և փաստորեն զրկված են անգամ անօթևանի կարգավիճակից, հետևաբար ըստ ՀՀ կառավարության գործող որոշումներով սահմանված կարգի՝ ենթակա չեն պետության կողմից բնակարանային փոխհատուցման:

Ինչպես նախորդ, այնպես էլ ընթացիկ տարում բնակարան ստանալու համար փաստաթղթային փաթեթներ ներկայացնելիս անօթևան ընտանիքները բնակբաշխման հանձնաժողովում հանդիպում էին դժվարությունների: ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից շահառուներից երբեմն պահանջվում էին փաստաթղթեր, որոնց հայթայթումը ոչ միայն ավելորդ ժամանակ, այլ նաև ավելորդ ծախսեր էր պահանջում, օրինակ.

1. մի դեպքում շահառուից պահանջվել էր այլ երկրից, մասնավորապես Վարաստանի Ախալցխի քաղաքի կադաստրից ներկայացնել այդ քաղաքում սեփականություն չունենալու մասին տեղեկանք,
2. շահառուներից պահանջում էին ներկայացնել հանրապետության այլ մարզերում սեփականություններ չունենալու մասին տեղեկանքներ,
3. նույնիսկ մեկ կամ մի քանի ամսեկան երեխայի համար պահանջել էին տեղեկանք փաստացի բնակության վայրի մասին,
4. Գյումրու անօթևանների հերթացուցակում հաշվառված են չորս տարբեր կարգավիճակ ունեցող ընտանիքներ, այդ թվում նախկինում մասնակի փոխհատուցված և գործող բնակբաշխման օրենքության համաձայն կորցրած բնակարանի չափով կամ ավել փոխհատուցված, սակայն ընտանիքի անդամների թվով ոչ ամբողջովին բնակարանային պայմանները բավարարած ընտանիքներ, որոնք մտնում են դրամական փոխհատուցման ենթակա խմբի մեջ: Թեև ՀՀ կառավարության գործող կանոնակարգով բնակարանաշինության այս փուլում դրամական փոխհատուցման ենթակա ընտանիքների մասին որևէ ակնարկ չկա, սակայն նրանց փաստաթղթային փաթեթները չընդունվեցին:

7.1 Ճեռքերումներ

Մեր կազմակերպություն դիմած բազմաթիվ շահառուների բողոքների և ահազանգերի հիման վրա, սույն թվականի մարտի 22-ին մեր կողմից պատրաստվեց և տարածվեց «Վերջապես ե՞րբ են երկրաշարժից անօթևան ընտանիքներին զերծ պահելու ավելորդ թղթարարությունից և քաշքշուկներից» խորագիրը կրող հայտարարություն, որը հրապարակվեց տասնյակ ԶԼՄ-ներում, ինչպես նաև դիմումի տեսքով ուղարկվեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին, ՀՀ քաղաքաշինության նախարար Վ.Վարդանյանին և ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանին:

Հայտարարությունում մասնավորապես ահազանգ հնչեցվեց այն մասին, որ թեև անցած տարի ՀՀ կառավարությունը Գյումրու բնակարան ստանալու հավակնորդ, բացակա անդամներ ունեցող անօթևան ընտանիքներին հասցեագրված որոշում ընդունեց, որով հնարավորություն տրվեց այդ ընտանիքներին բացակա անդամների վերադառնալու դեպքում բնակմակերեսով ապահովելու պարտավորություններ ստանձնելու մասին հայտարարություն ներկայացնելու պարագայում օգտվել բնակարան ստանալու իրենց իրավունքից, սակայն Գյումրու նոտարական գրասենյակում հրաժարվում էին վավերացնել շահառուների համապատասխան հայտարարությունները:

Մեր հայտարարությունով բողոքարկեցինք նոտարական գրասենյակի այդ գործելակերպը, որը բացահայտ հակասում էր ոչ միայն անօթևան ընտանիքների շահերին, այլ նաև անտեսում էր ՀՀ կառավարության համապատասխան որոշումը: Մեր հայտարարության հրապարակումից անմիջապես հետո Գյումրու, ինչպես նաև մարզի այլ նոտարական գրասենյակներում բնակարաններ ստանալու համար համապատասխան փաստաթղթեր ձևակերպելու նպատակով դիմած շահառուների բացակա անդամների հայտարարությունները սկսեցին վավերացնել առանց ավելորդ խոչընդոտների: Մեր կողմից իրականացված այս գործողությունը կարևոր էր ոչ միայն անօթևանների շահերի պաշտպանության, այլ նաև պետության կողմից հասարակության որոշակի խոցելի խմբերին նպատակաուղղված այս ծրագրում կռուսպցիոն ռիսկերի նվազեցման առումով: Սա, անշուշտ, մեր ծրագրի ներկա փուլի ամենամեծ ձեռքբերումներից մեկն էր:

Կարևորագույն ձեռքբերում էր ՀՀ կառավարության ապրիլի 14-ին ընդունած որոշումը, որով 1999 թ. հունիսի 10-ի N 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2009 թ. նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշումներում փոփոխություններ կատարվեցին և բազմանդամ ընտանիքներին թույլատրվեց բնակարանները սեփականաշնորհել, պահպանելով տնակներից որևէ մեկը: Այդ փոփոխության համար վերջին մեկ տարվա ընթացքում մեր կողմից իրականացվեց շահերի պահպանության քարոզարշավ, որի շրջանակներում տասնյակ դիմումներ և բաց նամակներ էինք հղել կառավարությանը: Ի դեպ նշենք, որ վերոհիշյալ որոշումն ընդունելուց երկու ամիս առաջ Գյումրու քաղաքապետարանի կողմից մարզային հեռուստատեսություններով հեռարձակվեց հայտարարություն, որով ժամկետ էր նշանակվել բնակարան ստացած քաղաքացիների կողմից ժամանակավոր կացարանների տեղահանման համար, հակառակ դեպքում քաղաքապետարանը սպառնում էր ուժի կիրառմամբ տեղահանել տնակները: Մենք այդ կապակցությամբ մեր մտահոգությունն արտահայտեցինք բաց նամակի տեսքով, ուղղված ՀՀ իշխանություններին, որով

պահանջեցինք կանխել անօթևան ընտանիքների հետ վերջնագրերի լեզվով խոսելու գործելակերպը:

2010 թվականին գյումրեցի անօթևաններին բաշխված 1056 բնակարաններից մինչև 2011 թ. ապրիլ ամիսը սեփականաշնորհվել էին 220-ը: Նախորդ տարի բնակարան ստացած բազմաթիվ ընտանիքներ մեզ դիմում էին իրենց բողոքներով և միջնորդելու խնդրանքով, որպեսզի ՀՀ քաղաքաշինության նախարարությունն արագացներ բնակարանների սեփականաշնորհման գործընթացը: Հաշվի առնելով նրանց դիմումները, մենք դիմեցինք ՀՀ քաղաքաշինության նախարար Վ.Վարդանյանին:

Մայիս ամսվա սկզբում պետական բյուջեից կատարվեց սեփականաշնորհման համար անհրաժեշտ գումարների փոխանցումը Գյումրու նոտարական գրասենյակին ու կադաստրի տարածքային վարչությանը, և հունիսի 13-ից վերսկսվեց սեփականաշնորհման գործընթացը:

Մուշ-2 թաղամասում բնակարան ստացած ընտանիքների բնակարանների սեփականաշնորհման կարգի մասին իրազեկումը և նրանց Գյումրու նոտարական գրասենյակում գործարքները կատարելու ժամանակացույցի մասին իրազեկումը կատարվեց նաև մեր կողմից:

Մեր կազմակերպության ունեցած նյութատեխնիկական բազան և սոցալգործվեց բնակարան ստանալու հավակնորդ անօթևան ընտանիքների անհրաժեշտ փաստաթղթերի համալրման նպատակով: Մասնավորապես շահառուներին աջակցություն ցուցաբերեցինք իրենց ընտանիքի արտերկրում գտնվող անդամներին լիազորագրերի ձևերի ուղարկման, դրանց էլեկտրոնային տարբերակների ստացման հարցում, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից այդ քաղաքացիներից պահանջված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակների ուղարկման, անհրաժեշտ դիմումների, ձևաթղթերի լրացման աշխատանքներում:

2011 թ. հուլիսին ահազանգ հնչեցրեցինք այն մասին, որ աղետի գոտու բնակարան ստանալու հավակնորդ անօթևան ընտանիքների բնակարանային սեփականության առկայության վերաբերյալ պետկադաստրի կողմից տրամադրվող սխալ տեղեկությունների պատճառով քաջքույնների մեջ են հայտնվում սոցիալապես ծանր պայմաններում ապրող հարյուրավոր անօթևան ընտանիքներ (<http://www.shirakcentre.org/hy/lurer/1031-shirak-centre-ngo>): Մեր հաղորդագրությունում որպես կոնկրետ փաստ նշվել էր նման խնդրի առաջ հայտնված հարյուրավոր ընտանիքներից մեկի՝ գյումրեցի անօթևան, նպաստառու Պետրոսյանների հինգ անձից բաղկացած ընտանիքի դեպքը, երբ պետկադաստրն ընտանիքի անդամների անունով չորս հատ Երևանում և մեկ հատ էլ Գյումրիում սեփական բնակարան ունենալու տեղեկատվություն էր ուղարկել աղետի գոտու բնակարանների բաշխման հանձնաժողովին: Եվ որպեսզի այդ ընտանիքը կարողանար մասնակցել բնակբաշխման գործընթացին, պետք է կարողանար անձամբ ապացուցել, որ այդ բնակարաններն իրենք չեն: Իսկ դա ենթադրում էր որոշակի գումարների ծախսում և զգալի թղթարարություն:

Մեր կողմից առաջ քաշված խնդրին անդրադառնալով՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն երևույթը բացատրել էր իրենց համակարգում քաղաքացիների սեփականության մասին ոչ ամբողջական

տեղեկատվության առկայությամբ (<http://www.shirakcentre.org/hy/lurer/1044-shirak-centre-ngo>):

Իսկ ՀՀ քաղաքաշինության նախարարությունից ստացվեց պատասխան նամակ, որում ասված էր, թե ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ ձեռք բերված պայմանավորվածությամբ այսուհետև Երևանում և հանրապետության այլ համայնքներում անօթևան ընտանիքների անունով գրանցված սեփականության վերաբերյալ տեղեկատվությունները ճշտելու է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը կադաստրի համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ:

Ստորև ներկայացնում ենք անօթևան ընտանիքներին մեր կողմից ցուցաբերված աջակցության մի քանի առավել հաջողված դեպքեր: Այս դեպքերին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ մեր վեբ կայքում տեղադրված տեսանյութերից:

Աղետի գոտում հարյուրավոր ընտանիքներ էլ տարիներ շարունակ չեն կարողանում բնակարաններ ստանալ միայն այն պատճառով, որ ընտանիքների ներսում ստանալիք բնակարանների ապագա պատկանելության հետ կապված չի կայանում համաձայնություն: «Շիրակ կենտրոնը» երբեմն նրանց խնդրանքով երկարատև, անգամ ամիսներ ձգձգվող բանակցություններ է վարում նման ընտանիքների՝ տարբեր կողմ հանդիսացող անդամների հետ, որպեսզի բնակարան ստանալու նպատակով նրանք գան համաձայնության, համալրեն պահանջվող փաստաթղթերը և հանձնեն բնակարանների բաշխման հանձնաժողովին: Այդ նույն պատճառով Մուրազյանների ընտանիքը 20 տարի չէր կարողանում մասնակցել բնարանների բաշխման գործընթացին: Բարեբախտաբար մեր աջակցությամբ նրանց միջև վերջապես կայացավ փոխհամաձայնություն, համալրեցին իրենց փաստաթղթերը, հանձնեցին բնակբաշխման հանձնաժողովին և ճանաչվեցին շահառու(<http://www.shirakcentre.org/hy/component/videoflow/?task=play&id=95&sl=latest&start=12>):

Աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակբաշխման կարգը սահմանող կառավարական որոշումներով, բացառիկ դեպքերում, 4 սենյականոց բնակարանի շահառու անօթևան ընտանիքներին հանձնաժողովի որոշմամբ կարող է հատկացվել երկու բնակարան: Հաշվի առնելով «Շիրակ կենտրոնի» միջնորդությունը, նման մեկ աննախադեպ որոշում կայացվեց: Գյումրու 158/325 տնակի բնակիչ, 3 որբ երեխաների խնամակալ Օլեչկա Գրիգորյանի 11 անձից բաղկացած ընտանիքին կտրամադրվի երկու հատ երկու սենյականոց բնակարան (<http://www.shirakcentre.org/hy/news/1100-shirak-centre-ngo>):

Գյումրեցի անօթևան ընտանիքների ծանր սոցիալական պայմանների մասին պատմող, «Շիրակ կենտրոնի» կողմից պատրաստված և տարածված տեսանյութերը զգալի արձագանք ունեցան տարբեր միջազգային, տեղական բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից:

Մեր կայքում «Գյումրի. Անտուն և անտեսված որբ երեխաներ» վերնագրով գյումրեցի անօթևան, երեք միակողմանի որբ անչափաս երեխաներ խնամող Էլմիրա Թամազյանի ծանր սոցիալական պայմաններում ապրող ընտանիքի մասին պատմող տեսանյութի հրապարակումից մեկ-երկու ժամ անց արձագանք ստացանք

Կանադայում բնակվող հայ հոգևորական Ս. Միլոն Քինյ. Սարգիսեանիից, ով այդ ընտանիքին ՀԱԵ Շիրակի թեմի միջոցով երկարատև օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն հայտնեց: Այդ ընտանիքին դրամական աջակցություն ցուցաբերեց նաև ՀԱԵ Շիրակի թեմը, իսկ Գյումրու հայ կաթողիկե երիտասարդ միության անդամները իրենց կողմից կազմակերպված ցուցահանդես-վաճառքի շրջանակներում հավաքված գումարներով ձեռք բերված վառելիքայտ սրամադրեցին (<http://www.shirakcentre.org/hy/news/1197-shirak-centre-ngo>):

Գյումրեցի անօթևան, 62-ամյա Սուսաննա Եղտիարյանը միայնակ է, որդին մահացել է տարիներ առաջ, դժբախտ պատահարից: Նա ունի բարձրագույն կրթություն, սակայն գործազուրկ է, սոցիալական նպաստ նույնպես չի ստանում: Նրանց ընտանիքը թեև երկրաշարժին կորցրել է 2 սենյականոց բնակարան, սակայն նա հերթագրված է մեկ սենյականոց բնակարանի հավակնորդների հերթացուցակում: Երկրաշարժից հետո բնակվել է հայրական տանը, սակայն հարազատ քույրը այն սեփականաշնորհելուց հետո նրան դուրս է արել տանից՝ փողոցում թողնելով հարազատ քրոջը:

Սուսաննա Եղտիարյանը մեկ տարի է՝ ամառ-ձմեռ ապրում է մի կիսակառուց, դուռ, պատուհան և կտուր չունեցող շինության անկյունում: Իր խոսքերով, ժամանակավոր կացարան ստանալու խնդրանքով թեև դիմել է իշխանական բոլոր մարմիններին, սակայն որևէ աջակցություն չի ստացել: Ինչպես նաև թղթարարության և բնակարանների բաշխման հանձնաժողովի կողմից պահանջվող վճարովի փաստաթղթերը ձեռք բերելու հնարավորություն չունենալու պատճառով չէր կարողացել պահանջվող փաստաթղթերը ներկայացնել և ճանաչվել շահառու:

«Շիրակ կենտրոնի» աշխատակիցների կողմից ցուցաբերվեց փաստաթղթերի համալրման գործում աջակցություն, և ներկայումս Սուսաննա Եղտիարյանը բնակբաշխման հանձնաժողովի կողմից ճանաչվել է շահառու (<http://www.shirakcentre.org/hy/news/1116-shirak-centre-ngo>):

7.2 Առաջարկություններ

ՀՀ կառավարությունը 2011 թ. ապրիլի 14-ին կայացած իր նիստում փոփոխություններ կատարեց 1999 թ. հունիսի 10-ի N 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2009 թ. նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման մեջ: Այդ որոշմամբ բնակարան ստացած բազմանդամ այն ընտանիքներին, որոնք տնօրինում են մեկից ավելի տնակ, հնարավորություն տրվեց դրանցից մեկը պահպանել:

Սակայն մենք կարծում ենք, որ տեղին և ամբողջական լուծում կլինի, եթե քանդման ոչ ենթակա ճանաչված կառույցներ տնօրինող ընտանիքներին, հիմք ընդունելով նախորդ տարի ՀՀ ԱԺ կողմից ընդունված «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, հնարավորություն ընձեռվի անվճար օրինականացնել իրենց կառույցները: Ի դեպ, նման հնարավորություն պետք է տրվի ոչ միայն բնակարանների բաշխման ներկա փուլով, այլ նաև նախորդ տարիներին բնակարան ստացած, սակայն կիսով չափ նոր բնակարաններ տեղափոխված բազմանդամ ընտանիքներին: Նման մոտեցման դեպքում այդ բազմանդամ ընտանիքների բնակարանային խնդիրը կարելի կլինի համարել իրոք լուծված, ինչը կնպաստի նաև աղետի գոտում երկու տասնամյակից ի վեր ձգվող անօթևանության բեռի զգալի թեթևացմանը:

Աղետի գոտում երկրաշարժից անօթևան ընտանիքներին պետության կողմից բնակարանանային փոխհատուցման ավելի քան երկու տասնամյակ ձգձգվելու պատճառով բնակարանի հավակնորդ հարյուրավոր ընտանիքներում առաջացել են մի շարք խնդիրներ, որոնք նրանցից շատերին առանց ՀՀ կառավարության բնակբաշխման կարգը սահմանող որոշումներում փոփոխությունների հնարավորություն չեն տալիս համալրել բնակարաններ ստանալու համար պահանջվող փաստաթղթերի փաթեթները և մասնակցել բնակարանների բաշխման գործընթացին:

Համաձայն այդ նույն որոշումների կարող են դիտարկվել սահմանված կարգով հաշվառված և մինչև 2011 թվականի նոյեմբերի 1-ը անհրաժեշտ փաստաթղթերով համալրված ամբողջական փաստաթղթային փաթեթներ ունեցող ընտանիքները:

Սակայն մինչև նոյեմբերի 1-ը Գյումրու անօթևանների հերթացուցակում հաշվառված 3214 ընտանիքների կողմից հանձնաժողովին հանձնված գործերից 88-ը թերի էին, 388-ը առհասարակ փաստաթղթեր չէին ներկայացրել, իսկ 294 ընտանիքներ էլ բնակբաշխման այս փուլում ենթակա չեն բնակարանային փոխհատուցման, այն պատճառաբանությամբ, որ այդ ընտանիքները երկրաշարժին կորցրել են կամ սեփական տներ, կամ նրանց ընտանիքների մի մասը նախկինում բնակարաններով փոխհատուցվել են կորցրած սենյակների թվով:

Երկրաշարժից անցած 23 տարիների ընթացքում բնակարանի շահառու շատ ընտանիքների ներսում ձևավորվել են մեկից մինչև մի քանի նոր ընտանիքներ, որոնք սակայն, գործող կարգի համաձայն, միասին ստանալու են մեկ բնակարան, բաղկացած այնքան սենյակներից, որքան նախկին մեկ ամբողջական ընտանիքը կորցրել է երկրաշարժի ժամանակ: Մեր գրասենյակ են դիմել բազմաթիվ ընտանիքներ, որոնց կազմում հաշվառված մեկ կամ մի քանի անդամներ, համաձայնության չգալով ստանալիք բնակարանների ապագա պատկանելիության հարցում կամ այլ դրդապատճառներով՝ հրաժարվում են ընտանիքի մյուս անդամներին տրամադրել իրենց անձնական փաստաթղթերը, ինչի պատճառով հնարավոր չի լինում ամբողջացնել պահանջվող փաստաթղթերի փաթեթը:

Աղետի գոտում և մասնավորապես Գյումրիում ներկայումս ընթացող բնակբաշխման գործընթացին չեն կարողանում մասնակցել նաև այն 150 ընտանիքները, որոնք թեև երկրաշարժին բնակարան են կորցրել և մինչև օրս չեն փոխհատուցվել, սակայն անօթևանների հերթացուցակում հաշվառված չեն: Մեր ուսումնասիրություններով՝ այդ ընտանիքների գերակշիռ մասը վերահաշվառման ժամանակ բացակայել են Հայաստանից և փաստորեն զրկված են բնակարան ստանալու իրավունքից, քանի որ աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման կարգը սահմանող կառավարական որոշումներով անօթևանների հերթացուցակում հաշվառվելու դիմումների ընդունման վերջնաժամկետ սահմանված է եղել 2008 թ. նոյեմբերի 1-ը:

Վերոհիշյալ խոչընդոտների վերացման և աղետի գոտում բնակարանների բաշխման գործընթացին բոլոր անօթևան ընտանիքների մասնակցությունն ապահովելու ու նրանց խարխուլ տնակներից օր առաջ ձերբազատվելու հնարավորություն ընձեռելու նպատակով բնակարանների բաշխման ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում անհրաժեշտ է կատարել հետևյալ փոփոխությունները:

Բնակբաշխման գործընթացին մասնակցելու հնարավորություն ընձեռել պահանջվող փաստաթղթերի փաթեթները մասնակի համալրած այն ընտանիքներին, որոնց մեկ կամ մի քանի անդամները գրավոր և պատշաճ իրազեկվելուց հետո էլ հրաժարվում են տրամադրել իրենց անձնական փաստաթղթերն ու մասնակցել բնակարանների բաշխման գործընթացին, իսկ իրենց փաստաթղթերը տրամադրելուց հրաժարվող քաղաքացիներին այլևս չճանաչել բնակարան ստանալու շահառու:

Անհրաժեշտ է բնակբաշխման գործընթացին մասնակցելու հնարավորություն տալ անօթևանների հերթացուցակում հաշվառման և վերահաշվառման ժամանակ Հայաստանից ժամանակավորապես բացակայելու և տարաբնույթ այլ պատճառներով հաշվառումից դուրս մնացած այն ընտանիքներին, որոնք երկրաշարժին բնակարան են կորցրել, սակայն մինչև օրս չեն փոխհատուցվել:

ՀՀ կառավարության կողմից մինչև 2013 թ. աղետի գոտում իրականացվող բնակարանաշինության ծրագրից օգտվելու հնարավորություն ընձեռել նաև երկրաշարժի հետևանքով սեփական տուն կորցրած և նախկինում բնակարաններով ոչ ամբողջովին ապահովված ընտանիքներին:

Մենք համոզված ենք, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում առաջարկվող փոփոխությունները կատարելու և աղետի գոտու նման խնդիրներ ունեցող ընտանիքներին բնակբաշխման գործընթացին մասնակցելու հնարավորություն ընձեռելու դեպքում էականորեն կթեթևանա անօթևանության խնդիրը Գյումրիում:

Աղետի գոտում և հատկապես Գյումրիում կան պետության կողմից բնակարանային փոխհատուցման ոչ ենթակա բազմաթիվ ընտանիքներ, որոնք չունեն նույնիսկ ժամանակավոր կացարաններ և բնակվում են վարձով կամ ազգ-բարեկամների տանը:

Հատկապես ներկայումս, երբ Հայաստանում և մանավանդ աղետի գոտում մեծ են արտագաղթի ծավալները, անհրաժեշտ է անհապաղ անդրադառնալ փաստացի փողոցում և ծայրահեղ ծանր սոցիալ-տնտեսական վիճակում հայտնված մեր համաքաղաքացիներին մշտական կամ ժամանակավոր կացարաններով ապահովելու խնդրին: Նրանցից շատերը համաձայն են անգամ բնակվել

Ժամանակավոր կացարաններում կամ հանրակացարաններում, միայն թե ծածկ ունենան իրենց գլխի վերև և որևէ տեղ փաստացի հաշվառվելու հնարավորություն:

Աղետի գոտում քաղաքացիներին բնակարաններ հատկացնելու կարգը սահմանող ՀՀ կառավարության որոշումների համաձայն էլ բնակարան ստացած քաղաքացիները, բացառությամբ բազմանդամ ընտանիքների, պարտադիր կերպով պետք է քանդեն և տարածքներն ազատեն ժամանակավոր կացարաններից: Այդ թվում կան քանդման ենթակա, նախորդ և ընթացիկ տարում բնակարաններ ստացած ընտանիքների կողմից տնօրինվող քարաշեն կամ կիսաքարաշեն ժամանակավոր կացարաններ, որոնք միանգամայն պիտանի են երկարաժամկետ բնակության համար: Ուստի նպատակահարմար կլինի, եթե նման ժամանակավոր կացարանները քանդելու փոխարեն համապատասխան դրամական փոխհատուցում տրամադրվի դրանք փաստացի տնօրինողներին և կացարանները տրամադրվեն այն ընտանիքներին, որոնք բնակվելու որևէ տեղ չունեն և պետության կողմից էլ բնակարանային փոխհատուցման ենթակա չեն:

Այդ նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան հանձնաժողով, ընդգրկելով նաև քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչներ, այդ հանձնաժողովին տալ բնակության համար պիտանի, քաղաքաշինության նորմերին չխանգարող ժամանակավոր կացարանները բնակարան ստացած քաղաքացիներից որոշակի գումարային փոխհատուցմամբ վերցնելու, հաշվառելու և վերը նշած կարգավիճակում հայտնված ընտանիքներին բաշխելու լիազորություններ:

Միաժամանակ կարծում ենք՝ անհրաժեշտ է մշակել և իրականացնել պետության կողմից փոխհատուցման ոչ ենթակա ընտանիքներին կացարաններով ապահովելու այլ ծրագրեր ևս: Մասնավորապես.

1. խրախուսել, որ անհատ բարերարների կամ բարեգործական հիմնադրամների կողմից բնակարանների նվիրատվություններ իրականացվեն հատկապես վերը նշված կարգավիճակում հայտնված անօթևան ընտանիքներին,

2. համայնքին պատկանող բնակարանային ֆոնդից կատարվեն հատկացումներ,

3. հատկացումներ կատարվեն նաև Հայաստանում պետական բյուջեի միջոցներով կառուցված սոցիալական բնակարանային ֆոնդից:

8. Նամակներ, դիմում - ուղերձներ, հայտարարություններ և պատասխանները

Դիմում-ուղերձ - Երկրաշարժից անօթևան տասնյակ ընտանիքներ զրկված են և բնակարան ստանալու իրավունքից

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին
ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին

ՀՀ կառավարության՝ աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման կարգը սահմանող որոշումներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին

Հարգելի պարոն նախագահ և պարոն վարչապետ

Բոլորիս է հայտնի, որ հետերկրաշարժյան տարիներին հիմնականում սոցիալ-տնտեսական ծանր պայմանների, գործազրկության և անօթևանության պատճառով Հայաստանից ու հատկապես աղետի գոտուց հազարավոր ընտանիքներ արտագաղթեցին: Նրանց թվում կան հարյուրավոր այնպիսի ընտանիքներ, որոնք երկրաշարժին բնակարան էին կորցրել, սակայն մինչև օրս պետության կողմից չեն փոխհատուցվել: Իսկ նման ընտանիքներից շատերը, վերահաշվառման ժամանակ բացակայելով Հայաստանից, հաշվառված չեն հերթացուցակներում եւ փաստորեն զրկված են բնակարան ստանալու իրավունքից, քանի որ աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման կարգը սահմանող կառավարական որոշումներով դիմումների ընդունման վերջնաժամկետ էր նշանակվել 2008 թ. դեկտեմբերի 15-ը:

Ավելին, նույն որոշումների համաձայն՝ սահմանված ժամկետում դիմում չներկայացրած անձանց նկատմամբ բնակարանների արտահերթ հատկացման մասով պետական աջակցության պարտավորությունները համարվում են դադարեցված: Ցավոք, այս որոշումը տարածվում է նաև 2008-ից հետո հայրենիք ներգաղթած տասնյակ անօթևան ընտանիքների վրա, ինչի պատճառով աղետի գոտում վերջին երկու տարիներին հայրենիք վերադարձած փաստացի անօթևան, սակայն անօթևանի կարգավիճակից զրկված ընտանիքները պարտադրված են կրկին հեռանալ Հայաստանից: Ի դեպ, ներգաղթած ընտանիքներից շատերը չունեն անգամ ժամանակավոր կացարաններ և բնակվում են հարազատների կամ վարձակալած բնակարաններում:

Ուստի դիմում ենք Ձեզ՝ ակնկալելով, որ ՀՀ կառավարությունը շուտափույթ կերպով կանդրադառնա վերը շարադրված հիմնախնդրին և հաշվառման կարգի վերաբերյալ որոշումներում անհրաժեշտ փոփոխություններ կատարելով՝ երկրաշարժի պատճառով անօթևան մնացած, սակայն Հայաստանից ժամանակավորապես բացակայելու և տարաբնույթ այլ պատճառներով հաշվառումից դուրս մնացած ընտանիքներին հնարավորություն կտա օգտվելու անօթևանների հերթացուցակներում հաշվառվելու և կորցրած բնակարանի դիմաց փոխհատուցվելու իրավունքից:

«Շիրակ կենտրոն» ՀԿ

Գյումրի, 2010թ. դեկտեմբերի 06

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՆԻՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

37510, ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
37510, г. Ереван, ул. Республика,
Дом Правительства 3
Government House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 523200

21.01.11թ. N 03/13.1/143-11
Ձեր N _____ առ _____

«Շիրակի մարզ, ք. Գյումրի,
«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ
պարոն Վ.Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան

Ի կատարումն «Վարչապետի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N 02/24.11/16699-10 և «Նախագահի աշխատակազմի ղեկավարի 2011 թվականի հունվարի 17-ի N Դ-31 հանձնարարականների» քննարկելով Ձեր 2010 թվականի դեկտեմբերի 6-ի դիմում-ուղերձում բարձրացված՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սակայն Հայաստանի Հանրապետությունից ժամանակավորապես բացակայելու և այլ պատճառներով հաշվառումից դուրս մնացած ընտանիքների անօթևանների ցուցակում ընդգրկելու և կորցրած բնակարանի դիմաց փոխհատուցումից օգտվելու հնարավորություն ընձեռնելու նպատակով «Կառավարության համապատասխան որոշումներում փոփոխություն կատարելու վերաբերյալ հարցը, հայտնում եմ.

ներկայումս աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակապահովմանն ուղղված ծրագրերն իրականացվում են «Կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ հայեցակարգի դրույթներով ձևավորված պարտավորությունների շրջանակներում: Հայեցակարգի դրույթների համաձայն նշված ընտանիքների բնակարանային խնդիրներն իրենց լուծումը կստանան մինչև 2013 թվականը:

Անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի արդյունավետության ապահովման նպատակով անօթևան ընտանիքների հաշվառման վերաբերյալ հստակ տեղեկատվություն ունենալու համար, հաշվի առնելով ժամանակի ընթացքում հաշվառված ընտանիքների թվի հնարավոր փոփոխությունները, «Կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N 1024-Ն որոշմամբ քաղաքային բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների վերահաշվառման վերջնաժամկետ է սահմանվել 2008 թվականի նոյեմբերի 1-ը և «Կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշմամբ աղետի գոտու գյուղական բնակավայրերում՝ 2008 թվականի դեկտեմբերի 15-ը:

Ընդ որում, այդ ժամկետում սահմանված կարգով դիմում չներկայացրած անձանց նկատմամբ աղետի գոտու բնակավայրերում բնակարանների արտահերթ հատկացման մասով պետական աջակցության ցուցաբերման պարտավորությունները համարվում են կատարմամբ դադարեցված:

Ելնելով վերը շարադրվածից, Ձեր դիմում-ուղերձում բարձրացված հարցի քննարկմանը հնարավոր է անդրադառնալ 2013 թվականից հետո՝ վերը նշված հայեցակարգով երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով բնակարան արտահերթ ստանալու համար հաշվառված անձանց բնակապահովման նկատմամբ ձևավորված պարտավորությունները կատարելուց հետո:



Ա. Հակոբյան

Դիմում – ուղերձ - Վերջապես է ըբ են երկրաշարժից անօթևան ընտանիքներին զերծ պահելու ավելորդ թղթարարությունից և քաշքշուկներից

*ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին
ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանին
ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանին*

ՀՀ քաղաքաշինության նախարարության՝ աղետի գոտու բնակարանների բաշխման հանձնաժողովի աշխատանքային խումբը Գյումրիում 2009-2010 թթ. բնակարան ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու էր հրավիրել անօթևանների հերթացուցակում հաշվառված 2400 ընտանիքների, սակայն պահանջվող փաստաթղթերը կարողացան ներկայացնել նրանցից ընդամենը 1200-ը:

Մեր ուսումնասիրություններով՝ հարյուրավոր անօթևան ընտանիքների կողմից փաստաթղթեր չներկայացնելու հիմնական պատճառն այն է, որ այդ ընտանիքների մեկ կամ մի քանի անդամներ երկար ժամանակ է՝ բացակայում են Հայաստանից, նրանցից շատերի նույնիսկ գտնվելու վայրի մասին նման խղիրներ ունեցող անօթևան ընտանիքների անդամները, իրենց պնդմամբ, վաղուց տեղեկություններ չունեն: Կան նաև դեպքեր, երբ բացակա անդամների անձնագրերի վավերականության ժամկետը վաղուց լրացել է, ուստի նրանք այդ և տարաբնույթ այլ պատճառներով չեն կարողանում լիազորագրեր ուղարկել:

Հիմնականում վերոհիշյալ պատճառներով էր, որ ծանր կենցաղային ու սոցիալական պայմաններում բնակվող հազարավոր անօթևան ընտանիքներ չկարողացան ՀՀ կառավարության N 432 որոշմամբ պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները ձևավորել և հանձնել հանձնաժողով՝ բնակարաններ ստանալու իրենց իրավունքից օգտվելու նպատակով:

Աղետի գոտում բնակարանների բաշխման գործընթացի դեռ մեկնարկին՝ 2009 թ. դեկտեմբերին պարզ դարձավ, որ անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել երկրաշարժից անօթևան ընտանիքներին բնակարանների հատկացման կառավարական համապատասխան որոշումներում:

Մեր կազմակերպությունը ևս 2010 թ.-ին ՀՀ կառավարության N 432 որոշման մեջ փոփոխություններ կատարելու առաջարկով մի շարք դիմումներ հղեց ՀՀ կառավարությանը: Մասնավորապես 2010 թ. փետրվարի 2-ին վարչապետ Տ. Սարգսյանին և քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանին հղած դիմումով առաջարկեցինք վերանայել հիշյալ որոշումը և ժամանակավոր կացարաններում փաստացի բնակվող այն անօթևան ընտանիքներին, ովքեր ունեն փաստաթղթերի համալրման խնդիրներ իրենց ընտանիքի անդամների Հայաստանից բացակայելու պատճառով, հնարավորություն ընձեռել օգտվելու բնակարան ստանալու իրենց իրավունքից՝ պայմանով, որ բնակարան ստացողը համապատասխան պարտավորագրով ստանձնի բացակայողների նկատմամբ բնակարանային պարտավորություններ նրանց վերադառնալու դեպքում (<http://shirakcentre.org/index.php/hy/documents/210-2010-09-01-11-36-45.html>):

ՀՀ կառավարությունը 2010 թ. օգոստոսի 5-ին ընդունեց 2009 թվականի նոյեմբերի 26-ի «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության

ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին» N 1402-Ն որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետում փոփոխություն կատարելու մասին որոշում:

Կատարված փոփոխություններով պիտի հնարավորություն տրվեր բնակարանի հավակնորդ անօթևան ընտանիքների ներկա անդամներին՝ ընտանիքի բացակա անդամի անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու անհնարինության մասին գրավոր հայտարարությամբ օգտվելու բնակարան ստանալու իրենց իրավունքից: Նույն որոշման համաձայն՝ փաստաթղթեր չներկայացրած անդամն այլևս ընտանիքի կազմում չի հաշվառվում, ավելին՝ բացակա անդամի բնակարանային ապահովման նկատմամբ պետական պարտավորությունները համարվում են կատարմամբ դադարեցված:

Անշուշտ, այդ փոփոխությունները կարելի էր համարել շոշափելի աջակցություն հարյուրավոր այն անօթևան ընտանիքներին, որոնք իրենց ընտանիքների անդամների փաստաթղթերի ոչ ամբողջական լինելու պատճառով անցած տարիներին չէին կարողացել բնակարան ստանալ:

Մյուս կողմից, այդ որոշումը ևս ունի բացասական կողմ, քանի որ ընտանիքի բացակա անդամներին որպես շահառու չդիտարկելով՝ ընտանիքներից շատերը կկորցնեն բնակմակերես: Ավելացնենք, որ առանց այդ էլ ՀՀ կառավարության N 432 որոշմամբ աղետի գոտու անօթևան ընտանիքի անդամներին հատկացվում է երկրաշարժին կորցրած բնակարանի սենյակների թվից պակաս սենյակներով բնակարան, եթե ընտանիքի անդամների թվաքանակը պակասել է, սակայն մյուս դեպքում, եթե անօթևանի ընտանիքի կազմն ավելացել է, սենյակների քանակը չի ավելացվում և տրվում է ճիշտ այնքան, որքան կորցրել են երկրաշարժին:

Նաև ուզում ենք նշել, որ մինչ ՀՀ կառավարության 432-րդ որոշման մեջ փոփոխություններ կատարելը բնակարանների բաշխման հանձնաժողովը տասնյակ անօթևան, բացակա անդամներ ունեցող ընտանիքներին պատասխանում էր, թե իրենց խնդրին կանդրադառնան, որպես շահառու կճանաչեն և բնակարաններ կհատկացնեն աղետի գոտում բնակարանների կառուցման երկրորդ փուլում՝ 2011 թվականին, կառավարության կողմից սպասվող փոփոխությունները կատարելուց հետո:

Անօթևան ընտանիքները, լսելով հանձնաժողովի հորդորները, համբերատար ևս մեկ տարի սպասեցին:

Սակայն այս տարի, երբ արդեն սկսվել է երկրորդ փուլով բնակարանների բաշխման նպատակով փաստաթղթերի ընդունումը, ընտանիքի բացակա անդամներ ունեցող անօթևանները կրկին հայտնվել են փակուղու առջև, քանի որ բնակարանների բաշխման հանձնաժողովին աջակցող աշխատանքային խումբը նրանցից պահանջում է 2010 թ. օգոստոսի 5-ի որոշմամբ սահմանված և Գյումրու նոտարական գրասենյակում վավերացված հայտարարություն այն մասին, որ իրենց բացակա անդամի վերադառնալու դեպքում իրենք պատրաստ են նրան ապահովել բնակմակերեսով: Սակայն Գյումրու նոտարական տարածքի նոտարը տարաբնույթ պատճառաբանություններով սովորաբար հրաժարվում է վավերացնել շահառուների

կողմից կառավարության վերոհիշյալ որոշմամբ պահանջվող հայտարարությունները:

Օրերս արձագանքելով մեր գրասենյակ դիմած անօթևանների բողոքներին, հանդիպեցինք Գյումրու նոտարական տարածքի նոտար Ռոբերտ Մուկուչյանի հետ: ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման չկատարելն ու բնակարան ստանալու հավակնորդ ընտանիքների հայտարարությունները միայն բացառիկ դեպքերում վավերացնելը նոտարը պատճառաբանեց այն հանգամանքով, թե իրեն հիմնականում հավատ չեն ներշնչում դիմողների այն հայտարարությունները, ըստ որոնց նրանց ընտանիքների բացակա անդամները իրոք չեն կարող լիազորագրեր ուղարկել: Ապա նա նաև կասկածանք հայտնեց, թե շատ քաղաքացիներ հնարավոր է որ բնակարանը ստանալուց անմիջապես հետո վաճառեն, քանի որ ի տարբերություն նախորդ տարիների՝ ներկայումս նման արգելք չկա: Ի դեպ, մեր գրույցի ժամանակ նոտարը հավաստիացրեց, որ ինքն իր մտավախությունների մասին տեղյակ է պահել նաև ՀՀ քաղաքաշինության նախարարությանը: Մեզ նաև հայտնի է, որ նոտարը շահառուներին հիմնականում խորհուրդ է տալիս դիմել դատարաններ և իրենց ընտանիքների բացակա անդամներին անհայտ բացակայողներ ճանաչելով լուծել այդ հարցը:

Այսքանից հետո մեզ համար անհասկանալի է մնում երկրաշարժից անօթևան ընտանիքների առանց այդ էլ ծայրահեղ ծանր վիճակն արհեսականորեն էլ ավելի ծանրացնելու և նրանց հանդեպ կիրառվող նման, մեղմ ասած, ոչ մարդասիրական վերաբերմունքի իմաստը:

Կարծում ենք՝ 23 տարի շարունակ ցուրտ ու խոնավ տնակներում պատսպարված անօթևան հարյուրավոր ընտանիքների հանդեպ կիրառվող նման վերաբերմունքի և վերջիններիս փաստաթղթային քաշքշուկների մեջ ներքաշելու տարբեր պաշտոնյաների քայլերի մասին մենք էլ իրավունք ունենք հայտնելու որոշ կարծիքներ.

1. գուցե հենց ինքը՝ հարգարժան նոտարն է սխալվում իր մտավախություններում,
2. արդյո՞ք նա հաշվարկել է, թե ինչպիսի դատական քաշքշուկների և ծախսերի մեջ կարող են հայտնվել անօթևան ընտանիքները, որոնց մեծ մասը թշվառության և ծայրահեղ աղքատության եզրին են գտնվում,
3. եթե պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերվեր և նոտարի անձնական քմահաճույքով որոշվեր, թե ե՞րբ և ո՞ր անօթևան ընտանիքի նկատմամբ կարող է կիրառվել կառավարության այդ որոշումը, ապա գուցե արժեր այդ մասին ևս հստակ գրել որոշման մեջ,
4. արդյո՞ք տարբերակված մոտեցումը հղի չէ կոռուպցիոն ռիսկերով,
5. եթե այնուամենայնիվ իրոք Հանրապետության բարձրագույն իշխանությունները տեղյակ են նոտարի նման գործելաճին, ապա արդյո՞ք դա դիտավորյալ չի արվում, որպեսզի շահառուների թիվն արհեստականորեն նվազեցվի՝ պահանջվող քանակից պակաս բնակարաններ կառուցելու նպատակով:

Ուզում ենք հավատալ, որ ՀՀ իշխանությունները, մասնավորապես ՀՀ վարչապետը, ՀՀ քաղաքաշինության և արդարադատության նախարարները

կարձագանքեն մեր այս հայտարարությամբ հնչեցված ահազանգին և աղետի գոտում ավելի քան երկու տասնամյակ բնակարանների սպասող անօթևանների շահերից ելնելով, ինչպես նաև բնակարանների բաշխման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման նպատակով կտրուկ միջոցների կղիմեն բնակարաններ ստանալու հավակնորդ ընտանիքներին ավելորդ թղթարարությունից և քաջքուկներից զերծ պահելու համար:

«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

Գյումրի, 2011 թ. մարտի 22



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« 12 04 2011թ.

0078 Երևան, Հայաստան 41 ր
2130-10

„ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ,, ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թումասյան

Շուրջ հինգ ամիս է, որ Գյումրի նոտարական գրասենյակի նոտարները վավերացում են նորակառույց բնակարանների նվիրատվության պայմանագրերը, որոնք կնքվում են մի կողմից ՀՀ-ի՝ ի դեմս ՀՀ քաղաքաշինության նախարարության և քաղաքացիների միջև: ՀՀ Կառավարությունը որոշում է ընդունել, որի համաձայն, բնակարան ստացող ընտանիքի բացակա անձանց վերաբերյալ ընտանիքի ներկա բոլոր չափահաս անդամները հայտարարություն են տալու, որ նրանց ի հայտ գալու դեպքում պարտավորվում են ապահովել բնակտարածությամբ:

Ըստ Կառավարության այդ որոշման, հայտարարություն կարող են տալ երկու դեպքում՝

1. երբ ընտանիքի անդամները դատարանի վճռով ճանաչվել են անհայտ բացակայող.
2. երբ ընտանիքի ներկա անդամները չեն կարող հիմնավոր փաստաթղթեր ներկայացնել բացակա անդամների վերաբերյալ և չգիտեն նրանց գտնվելու վայրը:

Ըստ Գյումրի նոտարական տարածքի նոտար Ռ.Մուկույանի՝ ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված բացատրության, դատարանի վճռով և առանց այդ վճռի տրվող համաձայնագրերը վավերացվել են նրա կողմից, /շուրջ 40 պայմանագիր/, եթե քաղաքացիները ներկայացրել են բոլոր անհրաժեշտ և հիմնավոր փաստաթղթերը: Համաձայնագրերը հրաժարվել են վավերացնել այն դեպքերում, երբ քաղաքացիները չափազանց ցածր գնով են տալիս կենդանի տարածություն և որպես փոխարին

տիրանալ ընտանիքի մյուս անդամներին հատկացվող բնակատարածությանը: Նոտարին դիմող քաղաքացիների հետ զրույցներից նրա համար պարզ է դառնում, որ նրանք գիտեն ընտանիքի բացակա անդամների տեղը, բայց վերջիններս հրաժարվում են լիազորագիր ուղարկել, քանի որ համաձայն չեն տրված բնակարանը ստանալ:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ ընտանիքի անդամները բոլորովին էլ բացակա չեն, գտնվում են կողք-կողքի, բայց չեն ուզում միասին բնակարան ստանալ: Մի օր նոտարին է դիմում ընտանիքի մի անդամը հայտարարություն տալու մյուս անդամի բացակայության մասին, իսկ մյուս օրը ներկայանում է վերջինս և հայտնում, որ ինքը ներկա է և ընտանիքի անդամը կեղծ հայտարարություն է տալիս: Կամ ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկանքից պարզ է դառնում նաև, որ իբր ընտանիքի այն անդամը, ում մասին երկար տարիներ տեղեկություններ չկան, մի ամիս առաջ է ստացել անձնագիրը: Բնական է, որ վերոհիշյալ հանգամանքներով է պայմանավորված նոտարի կողմից առանձին հայտարարությունների վավերացման մերժումը: Ի դեպ, երբ քաղաքացիներին նոտարը բացատրում է կառավարության վերոհիշյալ որոշման դրույթները, նրանք հրաժարվում են փաստաթղթերը պաշտոնական մուտք անելուց, որի պատճառով էլ նոտարը գրավոր մերժումներ տրամադրել չի կարողանում: Պարտավորագիր չվավերացնելը ոչ թե կամայականության արդյունք է, այլ վերոհիշյալ իրավիճակների հետևանք: Հարկ է նկատել, որ ընդհանրապես խոսք չի կարող լինել հնարավոր կոռուպցիոն ռիսկերի մասին, քանի որ նոտարին ավելի ձեռնտու է վավերացնել պարտավորագրերը, գանձել իր ծառայության վճարը, քան մերժել քաղաքացիներին:

Բացի այդ, նոտարի զգուշավորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ օրենքով ինքը կրում է գույքային պատասխանատվություն: Պարտավորությունը ստանձնած, իսկ հետո բնակարանը վաճառած ընտանիքի անդամները եթե իրենց պարտավորությունը չկատարեն, ընտանիքի հայտնված անդամները դիմելու են դատարան՝ հայտնվելով դատական քաշքշուկների մեջ:

Նոտարը այս մասին բազմիցս ահազանգել և տեղեկացրել է թե քաղաքաշինության, և թե արդարադատության նախարարությանը, որպեսզի քաղաքաշինության նախարարության կողմից կազմվող նվիրատվության պայմանագրերում ֆիքսվի պարտավորություն ունենալու մասին, որպեսզի հետագայում

այդ գույքը վաճառել չկարողանան և չխախտվի ընտանիքի բացակա անդամի սեփականության իրավունքը:

ՆՈՏԱՐԻԱՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ



Մ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3104 Գյումրի, Վարպետաց 176, 301
հեռ. +(374 312) 6-69-92, +(374 91) 45-13-37
Էլ փոստ՝ info@shirakcentre.org
Կայք՝ www.shirakcentre.org

Շիրակի մարզպետ Ա. Գիզիրյանին

Տեղեկատվության հարցում

Հարգելի պարոն Գիզիրյան

ՀՀ կառավարությունը 2011 թ. ապրիլի 14-ին կայացած իր նիստում փոփոխություններ է կատարել 1999 թ. հունիսի 10-ի N 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2009 թ. նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման մեջ: Կատարված փոփոխություններով՝ աղետի գոտու բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած բազմանդամ ընտանիքներին հնարավորություն է տրվել մեկից ավելի ոչ հիմնական շինություններ զբաղեցնելու դեպքում բնակությունից չազատել և չքանդել դրանցից միայն մեկը: Նույն որոշմամբ սահմանված է, որ բնակարան ստացած ընտանիքների զբաղեցրած ոչ հիմնական շինություններից բնակությունից չազատվող և քանդման ոչ ենթակա շինությունների ընտրության նպատակով, ուսումնասիրություններ կատարելու համար, պետք է ստեղծվի աշխատանքային խումբ՝ համապատասխան մարզպետարանի, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական պետական տեսչության տարածքային ստորաբաժանման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների ներգրավմամբ:

Ուստի խնդրում ենք մեզ տրամադրել տեղեկատվություն,

1. թե արդյոք ք ձևավորվել է հանձնաժողով,
2. ովքե՞ր են ընդգրկված այդ հանձնաժողովում, նրանց անուն-ազգանունները և պաշտոնները
3. մինչև օրս քանի՞ ընտանիք է դիմել իրենց տնակները քանդելու խնդրանքով,
4. ինչպիսի՞ որոշումներ են կայացվել, քանի՞ դիմումատուի է դրական պատասխանվել, քանի՞ դիմում է մերժվել և ի՞նչ պատճառներով:
5. խնդրում ենք նաև տրամադրել բոլոր դիմած անձանց ցուցակները և նրանց ժամանակավոր կացարանների հասցեները:

Հարգանքով՝ «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումայան
Գյումրի 2011թ. մայիսի 18



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Շ Ի Բ Ա Կ Ի Մ Ա Բ Զ Պ Ե Տ Ա Բ Ա Ն Ի
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Զ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Բ**

« 26 » 05 2011թ.

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16

N: 03/2434-11

հեռ. (0312) 5-33-66, ֆաքս (0312) 3-50-77

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
<<ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԿ ՆԱԽԱԳԱՀ՝
ՊՐՆ.Վ.ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թումայան

«Շիրակի մարզպետին ուղղված Ձեր 20.05.2011թ. հարցման վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 408-Ն որոշման 4.1-րդ կետի համաձայն ՀՀ Շիրակի մարզպետի 2011 թվականի մայիսի 2-ի N41 կարգադրությամբ /կցվում է/ ստեղծվել է աշխատանքային խումբ:


Ստորև ներկայացվում է առ 23.05.2011թ. դրությամբ ժամանակավոր կացարանները չքանդելու վերաբերյալ համապատասխան եզրակացություն ստանալու նպատակով դիմում ներկայացրած ընտանիքների ցուցակը համապատասխան տեղեկատվությամբ:

h/h	Ազգանուն Անուն Հայրանուն	Շենքի համարը	Ան- ծերի թիվը	սեռ	Ժամանակավոր կացարանները	Ծանոթություն
1	Հարությունյան Խանում Հայկազի	Մուշ 2թաղ. շենք 8 բն. 39	9	3	121/058 և 121/077	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն
2	Խուրշուդյան Արշալույս	Մուշ 2թաղ. շենք 1 բն.3	8	2	153/019, 153/044	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն
3	Ղուկասյան Համլետ	Մուշ 2թաղ. շենք 15 բն.5	10	3	142/087, 142/125	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն
4	Տոմերյան Ռոզա Գեղամի	Մուշ 2թաղ. շենք 1 բն.9	14	3	232/036, 238/097M, 227/129	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն
5	Մկրտչյան Գոհարիկ Հովհաննեսի	Մուշ 2թաղ. շենք 30 բն.31	7	2	228/285, 228/269	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն
6	Դարբինյան Սաշա Սամսոնի	Մուշ 2թաղ. շենք 7 բն.34	8	2	217/405, 217/406	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն
7	Ալվազյան Վաչագան Ստեփանի	Մուշ 2թաղ. շենք 5 բն.7	10	2	213/194, 213/195,	Դիմումի հիման վրա տրվել է դրական եզրակացություն

h/h	Ազգանուն Անուն Հայրանուն	Շենքի համարը	Ան- ծերի թիվը	սեն	ժամանակավոր կացարանները	Ծանոթություն
8	Առաքելյան Օլգա Անդրանիկի	Մուշ 2թաղ. շենք 16 բն.7	8	2	158/236, 158/238	Դիմումի ուսումնասիրություն ընթացքի մեջ է
9	Խաչատրյան Ինվեր Համբարձումի	Մուշ 2թաղ. շենք 15 բն. 21	8	1	224/356, 224/291	Դիմումի ուսումնասիրություն ընթացքի մեջ է
10	Գինոսյան Մարտուն Պողոսի	Մուշ 2թաղ. շենք 29 բն.51	10	3	217/465, 217/464	Դիմումի ուսումնասիրություն ընթացքի մեջ է
11	Միրայելյան Վահան Լեվուշի	Մուշ 2թաղ. շենք 4 բն.4	7	2	214/341	Դիմումի ուսումնասիրություն ընթացքի մեջ է
12	Սարգսյան Ռիգա Միսակի	Մուշ 2թաղ. շենք 4 բն 34	10	2	159/041, 232/136	Դիմումի ուսումնասիրություն ընթացքի մեջ է

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝



Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա.Մարգարյան
Տ.Հարությունյան
Հեռ.0312 35539

1. Հայաստանի Հանրապետության Հետաքննչական կոմիտեի կողմից կատարված հետաքննության արդյունքում ստացված փաստաթղթերի քննարկման արդյունքում հաստատվել է հետևյալը՝ Վ.Պողոսյանի կողմից ներկայացված փաստաթղթերում նշված տվյալները համընդհանուր չեն և հակասում են հետաքննության արդյունքներին:
2. Կրթության նախարարի կողմից կատարված հետաքննության արդյունքում հաստատվել է հետևյալը՝ Վ.Պողոսյանի կողմից ներկայացված փաստաթղթերում նշված տվյալները համընդհանուր չեն և հակասում են հետաքննության արդյունքներին:
3. Սույն կարգադրության համապատասխան վերաբերյալ:

Ա.ԳՐԻԳՅԱՆ

Ինքնուրույն ծախսերով:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

«02» 05 2011թ. N: 41 ք.Գյումրի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին» N 1402-Ն որոշման 4.1-րդ կետի դրույթներով.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում բնակարան ստացած ընտանիքների կողմից զբաղեցված ոչ հիմնական շինություններից՝ բնակությունից չազատվող և քանդման ոչ ենթակա շինությունների ընտրության նպատակով ուսումնասիրություններ կատարելու համար ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավար Տիգրան Հարությունյանին՝ բնակարան ստացած ընտանիքների դիմումները ստանալուց հետո աշխատանքային խմբի կողմից 5-օրյա ժամկետում կատարված ուսումնասիրությունների հիման վրա կազմել ոչ հիմնական շինությունը բնակությունից ազատելու կամ չազատելու վերաբերյալ հիմնավորված եզրակացություն:
3. Սույն կարգադրության հսկողությունը վերապահել ինձ :

Ա.ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկանյանի հետ ճիշտ է

Հավելված

«Հիրակի մարզպետի»

2011թ. Տարի «02» N 42

կարգադրության

ԿԱԶՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Տիգրան Հարությունյան -«Հիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ, խմբի ղեկավար,

Անդամներ՝

Անուշավան Պապիկյան -Գյումրու քաղաքապետարանի բնակարանային հաշվառման և բաշխման բաժնի պետ /համաձայնությամբ/,

Սկրուիչ Ասատրյան -«Հիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի աշխատակից,

Սուրեն Ավագյան -«Հ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Հիրակի բաժնի գլխավոր տեսուչ ,

Լեոնիկ Հովհաննիսյան -Գյումրու քաղաքապետարանի բնակարանային հաշվառման և բաշխման բաժնի գործակալ /համաձայնությամբ/:

ԳԻ	Ստանդարտի անվանումը	Ստանդարտի համար	Ստանդարտի տեսակ	Ստանդարտի հասցե	Ստանդարտի վիճակ
1	Հրահանգի համար 1	ՍՏՀ 1000	ՍՏՀ	121/058 և 121/077	Ստանդարտի վիճակը «Կիրառելի» է
2	Հրահանգի համար 2	ՍՏՀ 2000	ՍՏՀ	153/019, 153/044	Ստանդարտի վիճակը «Կիրառելի» է
3	Հրահանգի համար 3	ՍՏՀ 3000	ՍՏՀ	153/019, 153/044	Ստանդարտի վիճակը «Կիրառելի» է
4	Հրահանգի համար 4	ՍՏՀ 4000	ՍՏՀ	153/019, 153/044	Ստանդարտի վիճակը «Կիրառելի» է
5	Հրահանգի համար 5	ՍՏՀ 5000	ՍՏՀ	153/019, 153/044	Ստանդարտի վիճակը «Կիրառելի» է
6	Հրահանգի համար 6	ՍՏՀ 6000	ՍՏՀ	153/019, 153/044	Ստանդարտի վիճակը «Կիրառելի» է

«Հիրակի մարզպետարանի
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՂԵԿԱՎԱՐ՝

Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3104 Գյումրի, Վարպետաց 176, 301
հեռ. +(374 312) 6-69-92, +(374 91) 45-13-37
Էլ փոստ՝ info@shirakcentre.org
Կայք՝ www.shirakcentre.org

*ՀՀ քաղաքաշինության նախարար
Վ. Վարդանյանին*

Դիմում – առաջարկ

*Պետության կողմից բնակարանային փոխհատուցման ոչ ենթակա
անօթևան ընտանիքներին կացարան հատկացնելու խնդրի մասին*

Աղետի գոտում և հատկապես Գյումրիում կան պետության կողմից բնակարանային փոխհատուցման ոչ ենթակա բազմաթիվ ընտանիքներ, որոնք չունեն նույնիսկ ժամանակավոր կացարաններ և բնակվում են վարձով կամ ազգ-բարեկամների տանը:

Տասնյակ ընտանիքներ էլ կան, որոնք թեև երկրաշարժին կորցրել են բնակարաններ, սակայն անօթևանների հերթացուցակում ընդգրկված չեն միայն այն պատճառով, որ վերահաշվառման ժամանակ՝ մինչև 2008 թվականի ավարտը հանրապետությունից բացակայել են կամ ժամանակին չեն կարողացել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը պատրաստել ու հանձնել համայնքային իշխանություններին: Ինչպես գիտենք, նրանք ևս, աղետի գոտում բնակբաշխման գործընթացը կանոնակարգող ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կանոնակարգի համաձայն, ենթակա չեն պետության կողմից բնակարանային փոխհատուցման:

Այդ իսկ պատճառով մեր բազմաթիվ հայրենակիցներ, հատկապես՝ վերջին 2-3 տարվա ընթացքում արտերկրից վերադարձած ընտանիքները, հայտնվել են անելանելի վիճակում:

Մեզ են դիմում և այնպիսի անօթևաններ, որոնք կացարան չունենալու պատճառով զրկված են անգամ մշտական կամ փաստացի բնակության վայրի հաշվառում ունենալու հնարավորությունից (<http://shirakcentre.org/hy/lurer/989-shirak-centre-ngo>, http://www.youtube.com/watch?v=iyRs0ec62Es&feature=player_embedded#at=14):

Պարոն նախարար

Կարծում ենք՝ ներկայումս, երբ Հայաստանում և հատկապես աղետի գոտում մեծ են արտագաղթի ծավալները, անհրաժեշտ է անհապաղ անդրադառնալ փաստացի փողոցում և ծայրահեղ ծանր սոցիալ-տնտեսական վիճակում հայտնված մեր համաքաղաքացիներին մշտական կամ ժամանակավոր կացարաններով ապահովելու խնդրին: Նրանցից շատերը համաձայն են անգամ բնակվել

Ժամանակավոր կացարաններում կամ հանրակացարաններում, միայն թե ծածկ ունենան իրենց գլխի վերև և որևէ տեղ փաստացի հաշվառվելու հնարավորություն:

Մենք տեղյակ ենք, որ Գյումրին տնակներից ազատելու խնդիրը Ձեր կողմից շատ է կարևորվում: Իսկ աղետի գոտում քաղաքացիներին բնակարաններ հատկացնելու կարգը սահմանող ՀՀ կառավարության որոշումների համաձայն էլ բնակարան ստացած քաղաքացիները, բացառությամբ բազմանդամ ընտանիքների, պարտադիր կերպով պետք է քանդեն և տարածքներն ազատեն ժամանակավոր կացարաններից: Այդ թվում կան քանդման ենթակա, նախորդ և ընթացիկ տարում բնակարաններ ստացած ընտանիքների կողմից տնօրինվող քարաշեն կամ կիսաքարաշեն ժամանակավոր կացարաններ, որոնք միանգամայն պիտանի են երկարաժամկետ բնակության համար: Ուստի նպատակահարմար կլինի, եթե նման ժամանակավոր կացարանները քանդելու փոխարեն համապատասխան դրամական փոխհատուցում տրամադրվի դրանք փաստացի տնօրինողներին և կացարանները տրամադրվեն այն ընտանիքներին, որոնք բնակվելու որևէ տեղ չունեն և պետության կողմից էլ բնակարանային փոխհատուցման ենթակա չեն:

Այդ նպատակով առաջարկում ենք աղետի գոտում ստեղծել հանձնաժողով, ընդգրկելով նաև քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչներ: Այդ հանձնաժողովին տալ բնակության համար պիտանի, քաղաքաշինության նորմերին չխանգարող ժամանակավոր կացարանները բնակարան ստացած քաղաքացիներից որոշակի գումարային փոխհատուցմամբ վերցնելու, հաշվառելու և վերը նշած կարգավիճակում հայտնված ընտանիքներին բաշխելու լիազորություններ:

Միաժամանակ կարծում ենք՝ անհրաժեշտ է մշակել և իրականացնել պետության կողմից փոխհատուցման ոչ ենթակա ընտանիքներին կացարաններով ապահովելու այլ ծրագրեր ևս: Մասնավորապես.

1. խրախուսել, որ անհատ բարերարների կամ բարեգործական հիմնադրամների կողմից բնակարանների նվիրատվություններ իրականացվեն հատկապես վերը նշված կարգավիճակում հայտնված անօթևան ընտանիքներին,

2. համայնքին պատկանող բնակարանային ֆոնդից կատարվեն հատկացումներ,

3. հատկացումներ կատարվեն նաև Հայաստանում պետական բյուջեի միջոցներով կառուցված սոցիալական բնակարանային ֆոնդից:

«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումայան

Գյումրի

2011 թ. հուլիսի 04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՆԱԲԱՆԱՎԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

37510, ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
37510, г. Ереван, Республика
Дом Правительства 3
Government House 3, Republic Square,
Yerevan 37510
FAX (3742) 523200
www.mud.am
E-mail: info@mud.am

28.07.11, N 03/131/3683-11

Ձեր N _____ ար _____

«Շիրակի մարզ, ք. Գյումրի,
«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ
պարոն Վ.Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան

Քննարկելով «Քաղաքաշինության նախարարին ուղղված Ձեր 2011 թվականի հուլիսի 4-ի դիմում-առաջարկը, հայտնում եմ.

ինչպես հայտնի է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում բնակարան ստացած ընտանիքների կողմից զբաղեցված ժամանակավոր կացարանների կամ ոչ հիմնական շինությունների բնակությունից ազատման և քանդման հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 և 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշումներով:

Այդ կապակցությամբ, Գյումրի քաղաքում իրականացվող ծրագրի շրջանակներում կառուցված շենքերից բնակարաններ ստացած ընտանիքների կողմից զբաղեցված, տնակների համարակալմամբ բնակության համար պիտանի քարաշեն կառույցները քանդելու փոխարեն դրանք փաստացի տնօրինողներին համապատասխան դրամական փոխատուցում տրամադրելու և այդ կացարանները բնակվելու համար որևէ տեղ չունեցող անձանց հատկացնելու վերաբերյալ արված առաջարկությունը ընդունելի չէ:

Միաժամանակ հայտնում եմ, որ Գյումրի քաղաքում տարբեր պատճառներով անօթևան մնացած անձանց բնակարանային պայմանների բարելավման հարցի քննարկմանը հնարավոր է անդրադառնալ 2013 թվականից հետո՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով բնակարան արտահերթ ստանալու համար հաշվառված անձանց բնակապահովման նկատմամբ ձևավորված պարտավորությունները կատարելուց հետո:

Հարգանքով



Ա. Հակոբյան

Ե. Աթայան
52-46-80

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3104 Գյումրի, Վարպետաց 176, 301, 303
հեռ. +(374 312) 6-69-92, +(374 91) 45-13-37, +(374 55) 06-69-92
Էլ փոստ՝ info@shirakcentre.org
Կայք՝ www.shirakcentre.org

ՀՀ Քաղաքաշինության նախարար
Վ. Վարդանյանին

Դիմում-առաջարկ
Գյումրիում բնակբաշխման վիճակահանությունների կարգում
փոփոխություններ կատարելու և ողջ ընթացքը տեսաձայնագրելու
մասին

Աղետի գոտում նախորդ տարիներին իրականացված բնակբաշխման փորձը հաշվի առնելով կարելի է ասել, որ ոչ պակաս խնդիրներ է պարունակում բնակարանների հատկացման փուլը: Պատճառը պարզ և միանգամայն հասկանալի է. յուրաքանչյուր ընտանիք էլ կնախընտրեր բնակվել ցանկալի՝ հիմնականում 2-րդ կամ 3-րդ հարկի հարավային պատուհաններով բնակարաններից որևէ մեկում:

Նույնիսկ 2010 թվականին, երբ բնակարանները հատկացվեցին հրապարակային վիճակահանություններով, բազմաթիվ անօթևան ընտանիքների մոտ առկա էր մտահոգություն դրանց արդարացի ընթացքի վերաբերյալ: Նրանք կասկածում էին, որ ոչ բոլոր բնակարաններն են վիճակահանությամբ բաշխվում: Կարելի է հասկանալ անօթևան ընտանիքների մտավախությունը. 22 տարի շարունակ ծայրահեղ ծանր պայմաններում ապրելով տնակներում, նրանք իրենց մաշկի վրա են զգացել բազում անարդարություններ, ինչպես ասում են՝ «Աչքը տեսածից է վախենում»:

Նման մտավախություններն առավել ևս ներկա փուլում են առկա բնակարան ստանալու հավակնորդ ընտանիքների շրջանում, քանի որ ի տարբերություն 2010 թ.-ի՝ ընթացիկ տարում Գյումրիում երկրաշարժից անօթևան ընտանիքների համար բնակելի շենքերը կառուցվել են երկու տարբեր՝ Մուշ-2 և Անի թաղամասերում: Իսկ շահառուների մեծ մասը ձգտում են բնակարաններ ստանալ Անի թաղամասից, քանի որ այն առավել հին և կայացած թաղամաս է, համեմատաբար ավելի մոտ է քաղաքին և ունի կենսապահովման պայմաններ:

Բազմաթիվ անօթևաններ, վերջերս այցելելով մեր գրասենյակ, իրենց մտահոգություններն են հայտնել, թե իբր Անի թաղամասում շահագործման հանձնվելիք բնակարանների տերերն արդեն իսկ հայտնի են: Այդ մարդկանց պնդմամբ՝ շատ պաշտոնյաներ բնակարան ստանալու հավակնորդ իրենց հարազատներին և մերձավորներին խոստացել են միջամտել, որ նրանք բնակարաններ ստանան Անի թաղամասից:

Պարոն նախարար.

Կարծում ենք՝ մեզ հետ համակարծիք կլինեք, որ պետական ու տարածքային նմանատիպ լայնամաշտաբ ծրագրերում հասարակական մասնակցության և առավելագույն հրապարակայնության ապահովումը լավագույն նախապայմաններից մեկն է դրանցում կոռուպցիոն դրսևորումների բացառման կամ առավելագույնս նվազեցման համար: Ուստի բնակբաշխման վիճակահանություններում արդարություն և օրինականություն ապահովելու, շահառուների մեջ առկա մտավախությունը փարատելու և գործընթացի նկատմամբ վստահություն ներշնչելու նպատակով «Շիրակ կենտրոնը» ՀՀ քաղաքաշինության նախարարությանն առաջարկել է բնակարանների բաշխման վիճակահանությունների կարգը փոփոխել, դրանք կազմակերպել հետևյալ տարբերակներից մեկով:

Ի տարբերություն նախորդ տարվա՝ բնակարանները վիճակահանություններով բաշխել ոչ թե շենք առ շենք, այլ երկու թաղամասում կառուցված շենքերը միասին՝ ըստ սենյակների թվի՝ 1 սենյականոցները միասին, երկուսները միասին և այդպես շարունակ: Անշուշտ, մեկ վիճակահանության ընթացքում ավելի քան 600 բնակարանների վիճակահանությունների կազմակերպումը տեխնիկապես դժվար, աշխատատար և երկարաժամկետ գործընթաց կլինի: Ուստի կարելի է մեկ այլ սկզբունք ևս կիրառել: Այն է՝ Անի թաղամասում կառուցվելիք մեկ, երկու և երեք սենյականոց բնակարանները համամասնորեն բաշխել ու անցկացնել 5 վիճակահանություն և յուրաքանչյուրում Մուշ-2-ի մի քանի շենքերի բնակարանների հետ միասին բաժանել Անի թաղամասում կառուցված 5 շենքերից մեկի բնակարանները:

Շիրակ կենտրոնը՝ իր պատրաստակամությունն է հայտնել աջակցելու, որ բնակարանների բաշխման վիճակահանություններն ընթանան թափանցիկ, և այդ նպատակով սեփական տեխնիկական ու ֆինանսական միջոցներով նկարահանելու ու www.shirakcentre.org վեբ կայքում տեղադրելու է 2011 թվականին Գյումրիում բնակարանների բաշխման վիճակահանությունների ամբողջ ընթացքի տեսաձայնագրությունները:

«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

Գյումրի
2011 թ. հուլիսի 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԲՆՈՒԱԲԵՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

37510, ք.Երևան, Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
37510, г.Ереван, Республика
Дом Правительства 3
Government House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 323200
www.mud.am
E-mail info@mud.am

08.08.11թ. N 03/13.1/3868-11

Ձեր N _____ առ _____

«Շիրակի մարզ, ք.Գյումրի,
«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ
պարոն Վ.Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին ուղղված Ձեր՝ 2011 թվականի հուլիսի 15-ի դիմում-առաջարկի, հայտնում եմ.

Գյումրի քաղաքի «Մուշ-2» և «Անի» թաղամասերում կառուցված բնակարանները համամասնորեն բաշխելու համար 5 վիճակահանություն անցկացնելու և «յուրաքանչյուրում Մուշ-2-ի մի քանի շենքերի բնակարանների հետ միասին բաժանել Անի թաղամասում կառուցված 5 շենքերից 1-ի բնակարանները» արված առաջարկությունը քննարկվել է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի դեռևս 2011 թվականի հուլիսի 13-ին Գյումրի քաղաքում կայացած նիստում՝ Ձեր մասնակցությամբ:

Քննարկման արդյունքներով նշված առաջարկությունը հանձնաժողովի կողմից համարվել է անընդունելի՝ Ձեր իսկ դիմում-առաջարկում մատնանշված՝ վիճականությամբ բնակարանների բաշխման գործընթացի նկատմամբ հնարավոր անվստահության դրսևորումներից խուսափելու և դրանք բացառելու անհրաժեշտության տեսանկյունից:

Ինչ վերաբերում է վիճակահանության ողջ ընթացքը տեսաձայնագրելու վերաբերյալ արված առաջարկությանը, ապա հայտնում եմ, որ այն ողջունելի է և ավելի կբարձրացնի վիճակահանության գործընթացի թափանցիկության նկատմամբ հասարակության վստահությունը:

Հարգանքով



Ա.Հակոբյան

Ե.Ալթայան
52-46-80

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին
ՀՀ քաղաքաշինության նախարար
Վարդան Վարդանյանին

Դիմում – առաջարկ

Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգում փոփոխություններ կատարելու մասին

Հարգելի պարոն նախարար

Աղետի գոտում երկրաշարժից անօթևան ընտանիքներին պետության կողմից բնակարանանային փոխհատուցման ավելի քան երկու տասնամյակ ձգձգվելու պատճառով բնակարանի հավակնորդ հարյուրավոր ընտանիքներում առաջացել են մի շարք խնդիրներ, որոնք նրանցից շատերին առանց ՀՀ կառավարության բնակաշինման կարգը սահմանող որոշումներում փոփոխությունների հնարավորություն չեն տալիս համալրել բնակարաններ ստանալու համար պահանջվող փաստաթղթերի փաթեթները և մասնակցել բնակարանների բաշխման գործընթացին:

Երկրաշարժից անցած 23 տարիների ընթացքում բնակարանի շահառու շատ ընտանիքների ներսում ձևավորվել են մեկից մինչև մի քանի նոր ընտանիքներ, որոնք սակայն, գործող կարգի համաձայն, միասին ստանալու են մեկ բնակարան, բաղկացած այնքան սենյակներից, որքան նախկին մեկ ամբողջական ընտանիքը կորցրել է երկրաշարժի ժամանակ: Մեր գրասենյակ են դիմում բազմաթիվ ընտանիքներ, որոնց կազմում հաշվառված մեկ կամ մի քանի անդամներ, համաձայնության չգալով ստանալիք բնակարանների ապագա պատկանելիության հարցում կամ այլ դրդապատճառներով՝ հրաժարվում են ընտանիքի մյուս անդամներին տրամադրել իրենց անձնական փաստաթղթերը, ինչի պատճառով հնարավոր չի լինում ամբողջացնել պահանջվող փաստաթղթերի փաթեթը:

Աղետի գոտում և մասնավորապես Գյումրիում ներկայումս ընթացող բնակաշինման գործընթացին չեն կարողանում մասնակցել նաև այն 150 ընտանիքները, որոնք թեև երկրաշարժին բնակարան են կորցրել և մինչև օրս չեն փոխհատուցվել, սակայն անօթևանների հերթացուցակում հաշվառված չեն: Մեր ուսումնասիրություններով՝ այդ ընտանիքների գերակշիռ մասը վերահաշվառման ժամանակ բացակայել են Հայաստանից և փաստորեն զրկված են բնակարան ստանալու իրավունքից, քանի որ աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման կարգը սահմանող կառավարական որոշումներով անօթևանների հերթացուցակում հաշվառվելու դիմումների ընդունման վերջնաժամկետը սահմանված է եղել 2008 թ. նոյեմբերի 1-ը:

Անտարակույս, աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժից անօթևանության խնդրի լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարությունը և բնակաշինումը կանոնակարգող ՀՀ կառավարության որոշումներում անցած մեկ տարվա ընթացքում կատարված մի շարք փոփոխությունները հարյուրավոր ընտանիքների հնարավորություն տվեցին մասնակցելու բնակաշինման գործընթացին (<http://shirakcentre.org/hy/lurer/892-shirak-centre-ngo>, <http://shirakcentre.org/hy/lurer/191-2010-08-15-10-38-49>): Սակայն,

ինչպես տեսնում ենք, կան ընտանիքներ, որոնք շարունակում են այդ հնարավորությունից զրկված մնալ:

Հարգելի պարոն նախարար

Աղետի գոտում բնակարանների բաշխման գործընթացին բոլոր անօթևան ընտանիքների մասնակցությունն ապահովելու և նրանց խարխուլ տնակներից օր առաջ ձերբազատվելու հնարավորություն ընձեռելու նպատակով առաջարկում ենք բնակարանների բաշխման ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները:

Առաջին փոփոխությամբ սահմանել բնակարաններ ստանալու նպատակով ներկայացվելիք փաստաթղթերի փաթեթները աղետի գոտու բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովին հանձնելու կոնկրետ ժամանակացույց: Նաև բնակբաշխման գործընթացին մասնակցելու հնարավորություն ընձեռել պահանջվող փաստաթղթերի փաթեթները մասնակի համալրած այն ընտանիքներին, որոնց մեկ կամ մի քանի անդամները գրավոր և պատշաճ իրազեկվելուց հետո էլ հրաժարվում են տրամադրել իրենց անձնական փաստաթղթերն ու մասնակցել բնակարանների բաշխման գործընթացին, իսկ իրենց փաստաթղթերը տրամադրելուց հրաժարվող քաղաքացիներին այլևս չճանաչել բնակարան ստանալու շահառու:

Կարծում ենք՝ երկրորդ փոփոխությամբ անհրաժեշտ է բնակբաշխման գործընթացին մասնակցելու հնարավորություն տալ անօթևանների հերթացուցակում հաշվառման և վերահաշվառման ժամանակ Հայաստանից ժամանակավորապես բացակայելու և տարաբնույթ այլ պատճառներով հաշվառումից դուրս մնացած այն ընտանիքներին, որոնք երկրաշարժին բնակարան են կորցրել, սակայն մինչև օրս չեն փոխհատուցվել:

Մենք համոզված ենք, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում առաջարկվելիք փոփոխությունները կատարելու դեպքում աղետի գոտում երկրաշարժից անօթևան հարյուրավոր այդպիսի ընտանիքներին հնարավորություն կտրվի մասնակցելու բնակբաշխման գործընթացին, ինչը կթեթևացնի անօթևանության խնդիրը Գյումրիում:

«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

Գյումրի

2011 թ. հուլիսի 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

37510, ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
37510, г. Ереван, Республика Армения,
Дом Правительства 3
Government House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 523200
www.mud.am
E-mail info@mud.am

08.08.11/03/431/3873-11

Ձեռք N _____ առ _____

«Շիրակի մարզ, ք. Գյումրի,
«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ
պարոն Վ.Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին ուղղված Ձեր՝ 2011 թվականի հուլիսի 14-ի դիմում-առաջարկի, հայտնում եմ.

Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սահմանված կարգով հաշվառված և քաղաքում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու հավակնող ընտանիքների կողմից ամբողջական փաստաթղթային փաթեթների ներկայացման ժամկետ սահմանելու, ինչպես նաև ընտանիքի որոշ անդամների կողմից փաստաթղթեր չներկայացնելու պարագայում մասնակի համալրված փաստաթղթային փաթեթ ունեցող ընտանիքներին բնակբաշխման գործընթացին մասնակցելու հնարավորություն ընձեռելու, իսկ ընտանիքի փաստաթղթերը տրամադրելուց հրաժարվող անդամներին բնակարան ստանալու իրավունքից զրկելու հարցերը քննարկվել են աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի դեռևս 2011 թվականի հուլիսի 13-ին Գյումրի քաղաքում կայացած նիստում՝ Ձեր մասնակցությամբ:

Քննարկման արդյունքներով բնակարան ստանալու հավակնող ընտանիքների կողմից ամբողջական փաստաթղթային փաթեթների ներկայացման ժամկետ սահմանելու հարցի կարգավորման մասով մշակված «Կառավարության համապատասխան որոշման նախագիծը ներկայացվել է շահագրգիռ կողմերի քննարկմանը: Իսկ ընտանիքի որոշ անդամների վերաբերյալ փաստաթղթեր ներկայացնելու անհնարինության հետ կապված հարցին «Կառավարության կողմից անդրադարձ է կատարվել դեռևս 2010 թվականին և հարցի կարգավորման նպատակով «Կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետում կատարվել է համապատասխան լրացում:

Հարգելի են աղետի գոտու բնակավայրերում

Ինչ վերաբերում է երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, սակայն ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N 1024-Ն որոշմամբ սահմանված՝ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների վերահաշվառման վերջնաժամկետում՝ 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ չհաշվառված ընտանիքների բնակարանային ապահովման խնդիրը ներկայումս իրականացման փուլում գտվող բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում լուծելու վերաբերյալ արված առաջարկությանը, ապա հայտնում, որ դրան հնարավոր է անդրադառնալ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած մոտ 7000 ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նկատմամբ ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 12-ի N 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած հայեցակարգով ձևավորված պարտավորությունները կատարելուց հետո:

Հարգանքով



Ա. Հակոբյան



**«ՔԱՂ. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
«ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ**

3104, ՀՀ, Գյումրի, Վարպետաց 176, 301 Հեռ. 0312 6-69-92, 055 06-69-92, 091 451337

E-mail: info@shirakcentre.org

Վեբ կայք. www.shirakcentre.org

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին

Դիմում-ուղերձ

Աղետի գոտում բնակարանների բաշխման կարգը սահմանող կառավարական որոշումներում փոփոխություններ կատարելու և մեկ ժամանակավոր կացարան տնօրինող բազմանդամ ընտանիքներին ևս առանց տնակը քանդելու նոր բնակարանը սեփականաշնորելու հնարավորություն ընձեռելու մասին

Պարոն վարչապետ

Աղետի գոտու բնակարանների բաշխման կարգում ՀՀ կառավարության 2011 թ. ապրիլի 14-ի նիստում կատարված փոփոխությունները, որոնցով այդ գոտու բազմաբնակարան շենքերից բնակարան ստացած բազմանդամ ընտանիքներին հնարավորություն տրվեց մեկից ավելի ոչ հիմնական շինություններ զբաղեցնելու դեպքում դրանցից մեկը բնակությունից չազատել և չքանդել, դրական ազդեցություն ունեցավ ինչպես բազմաթիվ բազմանդամ ընտանիքների բնակարանային պայմանները բարելավելու, այնպես էլ Մուշ-2 թաղամասի բնակեցումն արագացնելու հարցում: Սակայն այդ փոփոխություններում անտեսվել են այն ընտանիքների շահերն ու իրավունքները, որոնք թեև բազմանդամ են, սակայն չեն տնօրինում մեկից ավելի տնակ, ուստի նրանց կողմից տնօրինվող ոչ հիմնական շինությունները ենթակա են ամբողջովին քանդման: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ բազմանդամ ընտանիքները մի կերպ բնակվել են միևնույն ժամանակավոր կացարանում կամ ընտանիքի անդամների մի մասը երկար տարիներ բնակվել է վարձով բնակարաններում:

Աղետի գոտում բնակարան ստացած՝ մեկից ավելի տնակներ ունեցող բազմանդամ ընտանիքներին արտոնության տրամադրումը, իսկ մեկ տնակ ունեցող բազմանդամներին դրա չտրամադրումը նշանակում է, որ նախկինում բնակվելու համեմատաբար տանելի պայմաններ ունեցած ընտանիքի բնակության պայմաններն ավելի բարելավվելու են, այդպիսիք չունեցածներինը՝ ոչ...

Ներկայումս, երբ ընթանում է նախորդ տարի Մուշ-2 թաղամասում բնակարաններ ստացած ընտանիքների կողմից ժամանակավոր կացարաններից տարածքների ազատման և նոր բնակարանների սեփականաշնորման գործընթացը, մեր դիտարկումները ցույց են տալիս, որ անլուծելի խնդրի առաջ են կանգնել բազմանդամ, սակայն մեկ տնակ տնօրինող տասնյակ ընտանիքներ, որոնք, մեն

ցանկության դեպքում անգամ, պարզապես չեն կարող բնակվել մեկ բնակարանում, իսկ նրանց նոր բնակարանները սեփականաշնորել չի թույլատրվում, քանի որ չեն քանդել իրենց տնակները:

Պարոն վարչապետ

Դիմում ենք Ձեզ՝ ակնկալելով, որ ևս մեկ անգամ կնախաձեռնեք փոփոխություններ կատարել աղետի գոտում բնակարանների բաշխման կարգը սահմանող որոշումներում և իրենց նոր ստացած բնակարանները սեփականաշնորհելու հնավորություն կընձեռվի նաև այն բազմանդամ ընտանիքներին, որոնք տնօրինում են ընդամենը մեկ տնակ: Այդ քայլով որոշ չափով կբարելավվեն նրանց կացարանային պայմանները, ինչպես նաև հավասար հնարավորություններ կտրամադրվեն բազմանդամ բոլոր ընտանիքներին:

«Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ Վահան Թումասյան

2011 թ. սեպտեմբերի 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՆԱԿԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

37510, ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
37510, ք. Երևան, Հանրապետություն,
Дом Правительства 3
Government House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 521200
www.mud.am
E-mail: yd@armstat.am

11.10.2011թ. № 03/13.1/4959-11

Ձեռք N _____ առ _____

«Հիրակի մարզ, ք. Գյումրի,
«Հիրակ կենտրոն» ՀԿ նախագահ
պարոն Վ.Թումասյանին»

Հարգելի պարոն Թումասյան

Հայաստանի Հանրապետության վարչապետին ուղղված և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N 02/24.12/15596-11 գրությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն վերահասցեագրված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին ուղղված Ձեր՝ 2011 թվականի սեպտեմբերի 15-ի նույնարվանդակ դիմում-ուղերձների կապակցությամբ հայտնում եմ.

դիմում-ուղերձներով արված՝ «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություն կատարելու և «Հիրակի մարզի Գյումրի քաղաքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան ստացած, մինչև բնակարան ստանալը մեկական ոչ հիմնական շինություն զբաղեցրած բազմանդամ ընտանիքներին՝ առանց իրենց կողմից զբաղեցված ժամանակավոր կացարանները քանդելու հատկացված բնակարանները սեփականաշնորհելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ առաջարկությունը քննարկվել է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների

(քնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 27-ին
Գյումրի քաղաքում կայացած նիստում՝ Ձեր մասնակցությամբ:

Քննարկման արդյունքներով վերը նշված առաջարկության ընդունումը հանձնաժողովի
կողմից համարվել է ոչ նպատակահարմար:

Հարգանքով

A handwritten signature in black ink is written over a blue rectangular official stamp. The stamp contains some illegible text and a colorful geometric logo consisting of several overlapping triangles in shades of purple, green, and yellow.

Ա. Հակոբյան

Ս. Սրապյան
52-09-43

У Агвана Овсепяна дел в зоне бедствия много

Октябрь 2010
nationalidea.am



Когда в канун 7 декабря 2009г. я попыталась ознакомиться с ходом строительных работ в квартале «Муш» в Гюмри, то натолкнулась на плотную стену. Она состояла из нескольких «слоев». Во-первых, ограда стройплощадки, в которую нужно было войти, далее – масса так называемых охранников (оказалось, что в этой программе, нацеленной на окончательное решение жилищной проблемы в зоне бедствия и осуществляемой компанией «Глендейл Хилз», участвовало больше охранников, чем строителей). Дальше «слои» стены стали подниматься все выше, достигая самых высоких звеньев государственной власти. Когда я попыталась выяснить в областной администрации, что же в конце концов происходит в этой закрытой зоне, оказалось, что губернатор Нанян занята (она действительно была занята). Дать разъяснения поручили руководителю аппарата областной администрации, который примерно два часа вешал мне лапшу на уши, я же, войдя в роль, делала вид, что принимаю всю эту лапшу на веру, и так и осталась в роли глупенькой журналистки.

Одно было ясно: за стеной творилось то, что нежелательно видеть чужому глазу. В сокрытии всего происходящего там были задействованы самые разные звенья власти, упоминали даже имя президента. Через два дня после моего визита это же место посетил Серж Саркисян, и поскольку для президента нет ни закрытых дверей, ни стен, он увидел то, что не удалось увидеть мне. Следствием его визита стало созванное там же совещание, на котором он дал хорошую взбучку кому надо и сколько надо. Президент распорядился на несколько месяцев отсрочить сдачу квартир, а вместо этого предоставлять жителям зоны бедствия настоящее жилье, а не то, что под этим соусом пытались «сплавить».

Правительство уверяет, что эта программа в конце концов ликвидирует понятие «зона бедствия». Гюмри слышит это обещание уже 22 года. Почему же проблема зоны бедствия никак не решится, в чем причина такой затяжки – неспособность государства, тяжелое социально-экономическое положение или же есть какие-то другие причины, опять-таки скрываемые за плотными стенами?

Подробный анализ на этот счет представил председатель общественной организации «Ширак кентрон» Ваан Тумасян. Меня заинтересовала его работа и я решила обратиться к ней.

Итак, землетрясение сровняло с землей 22 тысячи квартир в Гюмри. В предыдущие 20 лет здесь было построено 18-19 тысяч квартир, однако еще 4000 лишенных крова семей числятся в очереди на жилье. Помимо объективной разницы в количестве разрушенных землетрясением и заново построенных квартир, здесь есть и ряд факторов, которые не учитываются, и это мешает оценивать реальную картину в зоне бедствия. Дело в том, что квартиры предоставляет не только государство: в эти годы лишенные крова люди получали квартиры от благотворительных организаций, министерства обеспечивали жильем своих сотрудников, однако списки так и не были обобщены, за эти годы так и не было составлено единого списка, из которого было бы ясно, на сколько квартир облегчена

забота государства. Иными словами, данная семья получала квартиру от той или иной организации, но при этом продолжала стоять в очереди на квартиру в государственном списке бесприютных. По данным организации «Ширак кентрон», такую же картину можно наблюдать и в случае квартир, преподнесенных в дар компанией «Виваселл».

Другое нарушение. В полученных квартирах граждане прописывают только часть членов своих семей, остальные же продолжают оставаться на учете в списке бездомных. Этому явлению есть несколько объяснений. Первое - это психология советского человека, а именно: урвать у государства как можно больше, особенно если такая возможность есть. Но тут есть один фактор в пользу очередников. 10 января 1999г. правительство приняло постановление N 432, в соответствии с которым государство стало предоставлять жилье не в зависимости от нужд семьи, то есть не в зависимости от количества членов данной семьи, а в зависимости от того, какую квартиру она имела до землетрясения. Если семья потеряла однокомнатную квартиру, то должна получить такую же, вне зависимости от того, что число членов этой семьи за последние 20 лет выросло. Это, по сути дела, политика непоощрения расширения семей в зоне бедствия. Именно такие семьи, получавшие не отвечающие их нуждам квартиры, объективно делились: часть перебиралась в новое жилище, а другая оставалась во временке, продолжая числиться в списке лиц, лишенных крыши над головой. И получается, что государство строит и строит, а число бесприютных не сокращается, и государство все время остается в долгу.

Положение дел не изменил и вариант решения жилищной проблемы с помощью свидетельств на приобретение квартир. В прошлом году только в Гюмри было предоставлено 996 таких свидетельств. Это в свою очередь привело к расцвету коррупции. Сотни семей, лишенных жилья, разными путями, в основном посредством фиктивного оформления купли-продажи квартиры, получили из банков эти деньги и потратили их. Банки же, получив свою долю от этих денег, закрыли глаза на сам процесс. Фактически государство опять произвело большие расходы, а многочисленные семьи так и не получили квартир.

Согласно правительственному постановлению N 432, увеличение членов семей не влияет на количество комнат предоставляемой квартиры, если же число членов семьи уменьшается, то сокращается и жилплощадь. А такие граждане прибегают к еще одному незаконному шагу – искусственному увеличению членов семьи посредством усыновления родственников и другими подобными путями. А получить такие документы можно не иначе как коррупционным путем.

Если семья в течение года отказывается от предложенных ей квартир, она лишается права ожидать чего-то от государства. С недовольными полученными квартирами гражданами связано одно весьма интересное явление. Было много случаев, когда недовольные жильем семьи отказывались от квартир или выселялись из них судебным вердиктом. Такие семьи восстанавливались в списках на получение жилья. Но вот какая любопытная происходит «ошибка». Возвращенные государству квартиры как бы выпадают из учета и получить точную информацию о дальнейшей судьбе многих из них становится попросту невозможно: квартира, от которой на законных основаниях отказалась одна семья, должна была быть предоставлена другой, которая соответственно вышла бы из списка бесприютных, однако же этого не происходит. То есть здесь мы сталкиваемся с тем же явлением: списки на получение жилья должны «разгружаться», однако же существенной «разгрузки» не наблюдается.

Нынешний процесс распределения квартир несравненно улучшился, однако и на данном его этапе есть уязвимые места. На первом месте - излишняя бумажная волокита, бюрократические проволочки, которые зачастую становятся причиной коррупции. Граждане, которые в эти годы эмигрировали и получили прописку в других странах,

автоматически лишаются права на получение квартиры. Это право теряют и те, кто приобрели недвижимость. А для получения необходимых документов граждане прибегают к различным способам.

Как видите, коррупционные механизмы разнообразны, и можно сказать, что в основном именно они явились причиной того, что понятие «зона бедствия» до сих пор не вышло из употребления. На прокрученные за эти годы деньги не одну зону бедствия можно было превратить в зону развития. Накануне представитель «Глендейл Хилз», говоря об упущениях в строительных работах, оправдывался, мол, а что тут такого, выигранной компанией конкурс не предусматривал необходимости санузла, вот они и строили квартиры без санузлов. В действительности не стоит так уж сильно винить «Глендейл Хилз». Возможно, раньше эта компания осуществляла свою деятельность в Индии, где дома не нуждаются в санузлах, ибо для индусов туалет – там, где приспичит (конечно, не от хорошей жизни), вот компания и рассудила так: что ж тут такого, и индусы, и мы – древние народы, и раз они выдерживают, то почему не должны выдержать гюмрийцы, тем более что в последние 22 года они ежедневно доказывают свою выносливость. Обвинения, причем серьезные, можно предъявить тем вышестоящим органам и инстанциям, которые все эти годы зарабатывали миллионы, спекулируя на зоне бедствия, содержа лишенных крова людей в невыносимых условиях, умудряясь при этом отмывать деньги и с помощью разных коррупционных механизмов вымогать дополнительные средства у тех, кто живет в надежде на получение жилья.

Лусине КЕСОЯН

Home construction program requires careful examination of disaster zone: Armenian NGO

07.12.2010

Tert.am



Armenian authorities were not prepared for the process of building homes and allocating them, Vahan Tumasyan, the president of the non-governmental organization Shirak Center, told a news conference today, pointing to the importance of conducting studies in the disaster zone before launching a project of building homes.

"All the activities accomplished under the Lincy Foundation's program until 2003-2004 were thought to be enough, but it's good if the project continues," he said.

As a positive sign, he mentioned that all the temporary shelters located in the centre of Gyumri have been removed. He added, however, that all the construction activities should have focused on the central part of the town and not just separate districts as people often have difficulty getting to the town's center from those districts.

Tumasyan also emphasized the importance of creating a special agency to deal with the problem.

"Different groups of people should have been treated differently. But the authorities today demonstrate an identical approach to everyone," he added.

Under the procedures established by government decisions, the deadline for submitting applications for apartments was December 15, 2008. Being absent from Armenia in that period, many people were not enrolled in registration lists, thus being deprived of the right to get apartments.

What's even more, people are very often required to submit documents from relatives living abroad, which is impossible, Tumasyan said.

In a letter addressed to the government, Shirak Center NGO calls for facilitating the procedures of granting apartments to families.

«100 տարի անց էլ երկրաշարժի հիշողությունը թարմ կմնա»

07.12.2010

Report.am

«Գյումրիում կարելի էր երկրաշարժի հիշողությունը մի քիչ սփռվել: Բայց քանի դեռ մարդիկ դոմիկների մեջ են ապրում, չունեն աշխատանք, սոցիալական վատ վիճակում են, 100 տարի էլ անցնի՝ երկրաշարժի հիշողությունը թարմ կմնա», - «Ուրբաթ» մամուլի ակումբում նշեց «Շիրակ կենտրոն» հկ-ի նախագահ Վահան Թումասյանը:

Ավերիչ երկրաշարժի արդյունքում Գյումրիում փլուզվեց շուրջ 22 հազար բնակարան: Անցած տարիների ընթացքում քաղաքում կառուցվել է մոտ 18 հազար բնակարան: 2009թ.-ի տվյալներով դեռ 4200 ընտանիք հաշվառված է Գյումրու անօթեւանների հերթացուցակում, որից 1056-ը բնակարան ստացան ընթացիկ տարում: Վահան Թումասյանի հավաստիացմամբ՝ բնակարանների բաշխումը ճիշտ չի կատարվում, եւ անօթեւան մնացած ընտանիքների հաշվառման կարգը սահմանող որոշումներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին դիմում-ուղերձով դիմել են ՀՀ նախագահին եւ վարչապետին:

07.02.2010

noyan-tapan.am

«Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Վահան Թումասյանի տվյալներով, 1988 թվականի Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետեւանքով 9 հազար ընտանիք աղետի գոտում դեռեւս ունի բնակարանի խնդիր, ընդ որում 6500-7000 ընտանիքները Գյումրիի բնակիչներ են: Այդ մասին Վ.Թումասյանը լրագրողներին տեղեկացրեց դեկտեմբերի 7-ին կայացած մամլո ասուլիսի ընթացքում: «Շիրակ կենտրոն»-ը զբաղվում է աղետի գոտու անօթեւանության խնդրով, ինչպես նաեւ բնակարանաշինության եւ բնակարանների բախշման մոնիտորինգով: Համաձայն «Աղետի գոտում բնակարանների բաշխման գործընթացի մոնիթորինգ» զեկույցի՝ 1988թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժի հետեւանքով Շիրակի մարզի համայնքներում վնասվեց 3,677 միլիոն քմ ընդհանուր մակերեսով բնակտարածություն: Գյումրիում փլվել է շուրջ 22 հազար բնակարան: Անցած 22 տարիների ընթացքում կառուցվել է մոտ 18 հազար բնակարան: Գյումրիում ՀՀ կառավարության 2009-2010 թթ. բնակարանային շինարարության ծրագրով կառուցվել եւ բաշխվել է 1056 բնակարան: Աղետի գոտու շինարարության ծրագիրը նախատեսվում է ավարտել 2012թ.-ին: Լոռու մարզի 24 գյուղերում, Սպիտակում, Շիրակի մարզի 11 գյուղերում իրականացվող բնակարանաշինության ծրագրի ընդհանուր արժեքը 26 միլիարդ դրամ է, իսկ Գյումրիինը՝ 39 միլիարդ դրամ:

«Մի կողմից դրական է, որ պետությունը իրականացնում է բնակարանաշինության ծրագիր, մյուս կողմից էլ դա ոչ թե պետք է դիտել որպես լավություն, այլ՝ պարտք, որն ուշացել է 20 տարով», - ասաց «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահը: Ըստ նրա, լավ է, որ աղետի գոտում սկսվեց բնակարանաշինության ծրագիրը, կրկնակի լավ է, որ հասարակական եւ մամուլի շրջանակներում կրկին արդի է անօթեւանության թեման:

Վ.Թումասյանը տեղեկացրեց նաեւ, որ Գյումրու կենտրոնական փողոցներից արդեն

հանվել են տնակները, իսկ ծայրամասերում աղետից տուժածները դեռ շարունակում են ապրել ժամանակավոր կացարաններում: Ըստ Վ. Թումասյանի՝ կա հոգեբանական մեծ վտանգ, քանի որ Գյումրու ծայրամասերում ապրող անօթեւաններն այսօր ձեւավորելով նոր համայնքներ, ապրում են մեկուսացված: «Շիրակ կենտրոն» հկ-ն մի քանի անգամ դիմել է ՀՀ նախագահին եւ վարչապետին՝ առաջարկելով փոփոխել բնակարանների բաշխման եւ քաղաքացիների բնակարաններ ստանալու հաշվառման կարգերը: «Քաղաքացիների հաշվառումն ավարտվել է 2008թ.-ի դեկտեմբերի 15-ին, որից հետո բնակարան ստանալու համար հաշվառում այլևս չի կատարվում, եւ այն մարդիկ, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն հասցրել նախանշված ժամանակամիջոցում հաշվառվել, պետության կողմից չեն ստանում փոխհատուցում», - ասաց բանախոսը: Կառավարությունը կարգը փոխելու առաջարկին դեռեւս չի արձագանքել, որն էլ ըստ հկ-ի նախագահի, պետության կողմից աղետի գոտու խնդիրների ուղղությամբ տարվող ոչ ճկուն քաղաքականության արդյունք է:

Լույս է տեսել «Օթևան» տեղեկագրի առաջին համարը

20.01.2011
ԱՐՄԵՆՊՐԵՍ

Լույս է տեսել աղետի գոտում անօթևանության հիմնախնդիրներին, բնակարանաշինության և բնակարանների բաշխման գործընթացների լուսաբանմանը հասցեագրված «Օթևան» տեղեկագրի առաջին համարը:

Այն հրատարակվում է «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից: Տեղեկագրի շնորհանդեսը տեղի կունենա մեկ շաբաթից: Ինչպես «Արմենպրես»-ի հետ զրույցում նշեց կազմակերպության նախագահ Վահան Թումասյանը, նման տեղեկագրի միջոցով իրենք նախատեսում են աղետի գոտում իրականացվող գործընթացների վերաբերյալ բարձրացնել մարդկանց տեղեկացվածության մակարդակը:

«Մենք պարբերաբար գործ ենք ունենում աղետի գոտու անօթևան ընտանիքների հետ և հասկացանք, որ նման տեղեկագրի հրատարակման անհրաժեշտությունը կա: Փորձելու ենք բազմակողմանի տեղեկատվություն գետեղել տեղեկագրում», - ասաց Վ. Թումասյանը: Աղետի գոտու հիմնախնդիրների, բնակարանաշինության վերաբերյալ տեղեկություններ տեղադրվում են նաև «Շիրակ կենտրոն»-ի կայքում, որը գործարկվել է 2010 թ-ի հուլիսից:

Վ. Թումասյանը նշեց, որ տնակներում ապրող մարդկանց համար դժվար է ինտերնետային կայքից տեղեկություններ ստանալը, այդ իսկ պատճառով «Շիրակ կենտրոն»-ը նախաձեռնել է տեղեկագրի հրատարակումը: «Բազմաթիվ խնդիրներ են լինում, որոնց մասին մարդիկ ուշ են իմանում: Ժամանակին տեղեկացված լինելու պարագայում ավելի շուտ կարձագանքեն և կստանան իրենց հուզող հարցերի պատասխանները», - ասաց Վ. Թումասյանը:

Սկզբնական շրջանում «Օթևան»-ը կտպագրվի ամիսը մեկ անգամ պարբերականությամբ, սակայն առաջիկայում, կախված բնակարանների բաշխման

գործընթացում տեղի ունեցող իրադարձությունների ծավալից, այն լույս կտեսնի առավել հաճախ:

Տեղեկագրում տեղ կգտնեն ինչպես աղետի գոտու բնակչությանը հուզող անօթևանությանն ու բնակարանների բաշխման գործընթացին վերաբերող նյութեր, այնպես էլ բնակարանների բաշխման վիճակահանությունների անցկացման մասին հայտարարություններ եւ վիճակահանություններին մասնակցող ընտանիքների ցուցակները: «Օթևան» ամենամյա տեղեկատուն կտարածվի նաև էլեկտրոնային տարբերակով:

***Почему процесс распределения квартир в Армении
будет выложен в Интернете?***

15 июля 2011г.
www.profi-forex.org

Новости Армении, Гюмри. Как сообщает общественная организация «Ширак Кентрон», **процесс распределения квартир для пострадавших в зоне бедствия в городе Гюмри, будет полностью заснят на видеоносители, и выложен в сети Интернет.** Это связано с многочисленными нареканиями на непрозрачность процесса распределения жилья для нуждающихся, в частности, в микрорайонах «Ани» и «Муш-2».

Ранее, как сообщает источник в организации, от жильцов новостроек были получены жалобы о том, что жилье в квартирах, которым отдавалось предпочтение, а именно на 2 и 3 этажах южной стороны домов, получили «избранные», при этом намекалось на признаки коррупции в данном вопросе. Кроме того, далеко не всем жильцам удалось получить жилье, и многие семьи по-прежнему остались без собственных квартир.

В связи с этим, дабы не возникало сомнений в прозрачности распределения, и было принято решение о том, что **видеозапись лотереи будет выложена по адресу www.shirakcentre.org.** Как сообщается, в текущем году будет распределено 1756 квартир от 1-й до 4-й комнат в каждой.

Текст: Ростислав Белый

Министерство градостроения Армении согласилось с предложением о видеозаписи процесса распределения квартир в городе Гюмри

Август 10, 2011
www.news.am

В прошлом месяце общественная организация «Ширак центр» представила заявление-предложение министру градостроения Армении о том, что в городе Гюмри с целью обеспечения прозрачности процесса необходимо проведение видеозаписи предстоящего в ближайшие два месяца процесса распределения 1756 квартир среди семей, не имеющих жилье с первых дней землетрясения и по сей день.

Как сообщили [Новости Армении - NEWS.am](http://www.news.am) в общественной организации «Ширак кентрон», в заявлении – предложении было отмечено, что «Учитывая опыт распределения квартир в зоне землетрясения в прошлые годы, можно сказать, что и этот этап содержит не меньшие коррупционные риски. Причина ясна и абсолютно понятна. Любая семья предпочла бы проживать в желанной квартире на 2-ом или 3-ем этаже с окнами на юг.

Даже в 2010 году, когда квартиры были предоставлены в порядке публичной жеребьевки, многочисленные семьи, не имеющие крова, не были уверены в справедливости этого процесса. Они подозревали, что не все квартиры были распределены по жеребьевке. Можно понять озабоченность семей, не имеющих жилье – проживающих 22 года подряд в вагончиках, в крайне тяжелых условиях, они на своей коже чувствуют многочисленные проявления несправедливости и, как говорят, «Боятся того, что видели».

Подобные подозрения есть у жителей, которым предстоит получить квартиры и на этом этапе, потому как, в отличие от прошлых лет в этом году дома для семей, не имеющих квартиры, в Гюмри построили в двух разных микрорайонах Муш-2 и Ани.

А большинство бенефициариев стремится получить квартиры в микрорайоне Ани, потому как это более старый и уже состоявшийся район, сравнительно ближе находящийся к городу и имеет условия жизнеобеспечения.

«Ширак центр» выражает готовность содействия и предоставления своих технических и финансовых средств для видеозаписи процесса, а также размещения его на сайте (www.shirakcentre.org) для того, чтобы процесс жеребьевки распределения квартир прошел прозрачно, а также видеозапись всех процессов жеребьевок распределения квартир за 2011 год в Гюмри».

Сегодня получен ответ Министерства градостроения Армении, в котором сказано: «Видеозапись всего процесса жеребьевки приветствуется, и это сделает процесс жеребьевки более прозрачным, а также поднимет степень доверия общественности к прозрачности процесса».

ЛЮДИ НЕ МОГУТ СОБРАТЬ БУМАГИ

18.10.2011 г.

www.golosarmenii.am

С 2009г. в Гюмри по правительственной программе идет широкомасштабное строительство жилья. Согласно договору, строительная организация "Глендейл-Хиллз" в декабре этого же года должна была сдать в эксплуатацию 1056 квартир, однако это произошло лишь через полгода: за это время по распоряжению президента РА Сержа Саргсяна строители устранили свои недоделки, заново произвели отделочные работы кухонь и ванных комнат, оборудовали их более современными установками.

ЗАДЕРЖКА НА ПЕРВОМ ЭТАПЕ ПРОГРАММЫ БЫЛА МОТИВИРОВАНА ЕЩЕ ОДНИМ ОБСТОЯТЕЛЬСТВОМ: чтобы раздать квартиры 1056 семьям, лишившимся во время землетрясения жилья, правительственной комиссии пришлось изучить комплекты документации 2500 очередников - остальным было отказано по причине отсутствия необходимых справок и документов. Близится к завершению второй этап программы. По оценке специалистов, строительные работы соответствуют нормативным требованиям, контроль над стройобъектами осуществляется не только службами Министерства градостроительства РА, но и Ширакским марзпетараном и Гюмрийской мэрией. Казалось, на этот раз задержки не будет, однако, как выяснилось на днях, воз и ныне там: 300 бездомных гюмрийских семей все еще не представили государственной комиссии требуемый комплект документов, а в папках 1100 очередников по-прежнему не достают необходимые документы и справки. Как быть?

В 2009г. вслед за разработкой правительственной программы была создана и государственная комиссия по распределению жилья, которую возглавил министр градостроительства Вардан Варданян. Тогда в эту авторитетную комиссию были включены не только члены правительства, губернаторы областей и мэры городов зоны бедствия, но и два независимых журналиста и председатель ОО "Центр Ширак" Ваан Тумасян. Если журналисты самоустранились от дел, то организация В.Тумасяна все эти годы работала с наивысшей активностью.

Необходимо отметить, что благодаря деятельности комиссии процесс распределения жилья стал предельно объективным и прозрачным. До этого в Гюмри бытовало мнение, что квартиры часто получали "ловкачи", которые не гнушались ничем - умели подмазать кого надо, доставали справки об инвалидности, временно обзаводились чужими детьми и т.д., а самые незащитные и социально необеспеченные гюмрийцы вот уже 23 года живут в лачугах-временках.

ПОЖАЛУЙ, В ДАННОМ УТВЕРЖДЕНИИ ЕСТЬ ОПРЕДЕЛЕННАЯ ДОЛЯ ИСТИНЫ. По ходатайству ОО "Центр Ширак" семье Олечки Григорян будут предоставлены две двухкомнатные квартиры. Во временке 158/325 проживают 11 человек, трое из них - сироты (их опекун О.Григорян), а один из них ребенок - инвалид с детства. Спрашивается: кто виноват в том, что эта семья, очередь которой прошла давно, только сегодня должна получить квартиру?

И таких - 1400 семей. Я обошел некоторые из них в надежде выяснить причины задержки в получении недостающих справок. Оказалось, что в одной временке

пенсионеры-инвалиды еле передвигали ноги, в другой - не до квартиры им: "... и без нее проживем, главное - откуда достать деньги, чтобы купить хлеба, прокормить хотя бы детей"; в третьей даже не знали, что уже подошла их очередь на квартиру... Помимо чувства боли за этих людей были и немаловажные наблюдения: крайне низок культурный и образовательный ценз обитателей времянок, в жилищах не было даже телевизоров...

15 сентября премьер-министр Тигран Саркисян установил окончательный срок сдачи пакетов документов - 1 ноября текущего года. Председателю комиссии, министру градостроительства В.Варданяну предписывается при распределении жилья руководствоваться правительственным решением за N 432 от 10 июня 1999г. (согласно данному решению, квартиры предоставляются лишь тем семьям, которые представили государственной комиссии полный набор требуемых документов и справок).

Итак, в течение лишь одного месяца 1400 гюмрийским семьям, пребывающим в настоящее время в крайне тяжелых социальных и бытовых условиях, имеющим серьезные проблемы со здоровьем, члены которых все еще не определились, на чье имя необходимо получить ордер и т.д., обязаны сделать то, что не было сделано ими в течение долгих лет...

По данному поводу В.Тумасян пригласил к себе представителей СМИ, общественных и политических организаций и обратился к ним с просьбой помочь семьям в получении требуемых справок и разрешении внутренних разногласий.

Обращение В.Тумасяна встретило горячее одобрение, многие из присутствующих загорелись желанием помочь бездомным семьям, но наверняка вскоре иные из них поостынут и забудут о существовании этих 1400 семей. Вот почему думается, что проблема эта должна быть решена на государственном уровне: к этим очередникам комиссия должна применить индивидуальный подход.

Юрий АРУТЮНЯН

Հարուստը կուտե երբ կուզե, աղքատը՝ երբ կունենա

2011 նոյեմբերի 3
Hetq.am

Կանգնած ենք տուն կոչված, ապրելու համար մի կերպ հարմարեցված անդուռ, անլուսամուտ քարաշեն մի կացարանի մոտ: Երեք մետր լայնք ունեցող բացվածքը ծածկված է բրեզենտե կտորով ու մի հին կարպետով:

Շորե դռան ու քարե պատի արանքից երևում է վառարանի խողովակը, կարպետի վրա դրած մի քանի խոշոր քարերից եզրակացնում ենք, որ տանտիրուհին տանը չէ: «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի ղեկավար Վահան Թումասյանն ասում է, որ ժամը 17-ից հետո Մուսաննա Եղտիարյանը սովորաբար վերադառնում է կացարան: Նույն բանը հաստատում է դիմացի տանը ապրող հարեւանուհին:

«Բարեգործական ճաշարան կերթա 58 թաղամաս, ընտեղ հաց կուտե ու տուն գուկա,- ասում է Թամարա Եղոյանը,- 2 տարին լրացավ, օր խեղճ կնիկն ուլիցն է ըսպես: Օր գուզեք ճիշտն իմանաք, էս կողքի պատկից տունն իրա հոր տունն է, քուրը մարդուց բաժնվավ, եկավ իրանց հետ ապրավ, մորը տարավ գցեց ծերանոց, Մուսանին էլ հանեց դուրս գցեց, չթողեց իրանց հետ ապրի: Մուսանն էլ ըդպես թափառական, կերթար վազգալի մեջը կքներ, փողոցները կմնար, հետո էլ էկավ ըստեղ, մենք իրա քեռու հարսին ըսինք, թե մեղք է, գոնե էս ձեր կիսակառույցը տվեք, մեջը պատսպարվի: Արդեն տարիմ կեղնի, օր ըստեղ կապրի»:

Մրտացավ հարեւաններն ինչով կարողացել օգնել են հարազատ արյունակցի կողմից փողոց շարտված կնոջը՝ մեկը հին բազմոցն է տվել, որ վրան քնի, մյուսը՝ չօգտագործվող երկաթե վառարանը, հագուստ, որոշ կենցաղային իրեր, իսկ շորե դուռն ու անապակի պատուհանը պոլիէթիլենով փակելն էլ թաղի երեխաների ձեռքի գործն է: Խղճում են, չեն նեղացնում, ինքն էլ բոլորի հետ հարգալից է ու քաղաքավարի:

Մինչ մենք գրուցում ենք հարեւանուհու հետ, ծառի ճյուղը հետեւից քարշ տալով՝ փողոցի անկյունից հայտնվում է Մուսաննա Եղտիարյանը: Ամառային բարակ դեղին գույնի տաբատ է հագին, հավանաբար դեռ ամառվանից ինչ-որ մեկի տված կիսակոշիկներ է ոտքերին, ձեռքի պարկերից մեկում աթարի կտորներ են, մյուսում՝ փողոցից հավաքած անպետք իրեր: «Վառելիք կհավաքեի, ըդուր համար ուշացա», - պատասխանելով հարեւանուհու «Փա ի՞նչ էղար, Մուսան, էս ու՞ր էիր» հարցին՝ արդարացավ 62-ամյա կինը: Վահան Թումասյանին տեսնելով՝ Մուսաննայի աչքերը ջերմանում են, դեմքին ժպիտ է հայտնվում:

«Տունս կեղնի՞», - հարցնում է ու, հայթայթած վառելիքը ձեռքին, կանգնում փողոցի մեջտեղում: «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի ղեկավարը, ով արդեն 2 ամիս է՝ զբաղվում է անօթեւան կնոջը բնակարանի շահառու ճանաչելու համար անհրաժեշտ փաստաթղթերը հավաքելով, մեղավոր ժպտում է. «Ձեզ առաջարկում են հանրակացարան, որ երեք ամիս մնաք, մինչեւ հաջորդ տարի գարնանը բնակբաշխումը լինի, ձեր բնակարանը ձեզ տան», - բացատրում է ուղեկիցս: Կնոջ աչքերը նեղանում են. «Ի՞նչ հանրակացարան, եսիմ ինչ տեղ է, ըբբ օր ընտեղ ընձի

նեղեցնե՞ն, չի՞ եղնի եղ տունը տան»,- Սուսանայի հայացքը գրեթե աղաչական է դառնում:

Մեկ տարի Սուսանան պատսպարվել է Գյումրիի երկաթուղային կայարանի սպասարահում ու բնակելի շենքերի մուտքերում: Հիմնականում կնոջն արգելել են գիշերել: «Չէին թողնի պատեզդները քնեի, կըսեին՝ կարող է դու վտանգավոր մարդ ես, սումկեկս սաղ կստուգեին ու անձրեւ օրին դուրս կենեին: Կայարանի միլիցեքն էլ իրանց հերթին չէին թողնի ընտեղ մնայի, կըսեին՝ կարողա քեզի մե բանմ եղնի, մեռնիս վրեքս մնաս, ել, ել գնա ստեղից, գնա քաղաքապետարան: Ընտեղ էլ գնացի, Պապիկյան Անուշավանն ելավ, դուրս երավ ընձի, կըսե՛ իմ գործս չէ, ընձի մի դիմե՛», - անտարբեր ձայնով պատմում է Սուսանան: Բարձրագուն կրթությամբ, երկար տարիներ Ստեփանավանի կարի գործարանում ինժեներ աշխատած կնոջ ձեռքերին մանր վերքեր են նկատում, երբ փորձում է բլուզի օձիքով փակել բերանը, մատները սեւացած են մրից, ցրտից ճաքճքած:

Սուսանա Եղտիարյանի ընտանիքը երկրաշարժին կորցրել է 2 սենյականոց բնակարան, սակայն որդու եւ քրոջ մահից հետո միայնակ կնոջը հաշվառել են մեկ սենյականոց բնակարանների հերթացուցակում: Սուսանայի համարը 812-ն է, անցած տարվա բնակբաշխումից նրան բնակարան չի հատկացվել՝ չի կարողացել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնել: 15 օր առաջ «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի ղեկավարի շնորհիվ տիկին Սուսանան ճանաչվել է բնակարանի շահառու, միայն թե այդ բաղձալի տանիքը նա կունենա 2012 թ. մարտ ամսին նախատեսված վիճակահանությունից հետո, իսկ մինչ այդ սպասվող ցրտերին պիտի դիմակայի իր անդուռ, անլուսամուտ կացարանում:

Տեսնելով Սուսանայի կենցաղի անմարդկային պայմանները՝ Վահան Թումասյանը ՀՀ քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանին հոկտեմբերի 17-ին միջնորդագիր է ուղարկել, որով խնդրել է անօթեւան կնոջը բացառության կարգով բնակարան հատկացնել նախորդ տարի շահագործման հանձնված Մուշ-2 թաղամասի ազատ մնացած 5 հատ մեկ սենյականոցներից:

«10-15 օր է անցել, բայց դեռ պատասխան չեմ ստացել, ես հոկտեմբերի 20-ին դիմել եմ նաեւ Գյումրու քաղաքապետին, որպեսզի ժամանակավոր կացարան տրամադրեն, բայց դեռ արձագանք չկա,- ասում է **Վահան Թումասյանը**, - շատ կարեւոր է, որ այսօրվա դրությամբ մի փոքր ձկուն մոտեցում ցուցաբերվի: Ի վերջո, կան այդ ազատ բնակարանները, ինչու՞ ուրեմն դրանցից մեկն ու մեկը չտրամադրել Սուսանային: Ես չեմ կարծում, թե այս կինը կդիմանա այս կացարանում ձմռան ցրտին առանց վառելիք, առանց սնունդ: Հիմա 7 բնակարան հետ են վերցրել, որովհետեւ շահառուները ստացան, չհասցրեցին սեփականաշնորհել, մահացան, թողնենք, որ այս կինն էլ այստեղ մահանա, ո՞րն է ճիշտը: Հանձնաժողովի հոկտեմբերի 19-ի նիստի ժամանակ քաղաքապետարանի բնակբաշխման բաժնի պետ Անուշավան Պապիկյանն ելավ, մեծ-մեծ խոսեց, թե մենք Սուսանային կացարան կտանք, կօգնենք իրերը տեղափոխել, մինչեւ բնակարան ստանա, բայց փաստացի ոչ մի բան չեն արել»:

Քաղաքաշինության նախարարի տարօրինակ մոտեցումը Սուսանայի համար դժվար ընկալելի է: Նա ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե ապահովված պետական պաշտոնյաները, որ չունեն ոչ տանիքի, ոչ տաք կերակուրի, ոչ տաք

հագուստի խնդիր, ինչու՞ չեն ուզում բացառություն անել: Խնդրում եմ ցույց տալ կացարան կոչվածը: Սուսաննան կարպետի վրա դրած քարերից երկուսը մի կողմ է տանում ու կիսաբացում շորե դուռը: Անավաղ պատեր, քարե հատակ:

Պատի տակ դրված բազմոցի վրա կուտակած հագուստ եմ նկատում, որ Սուսաննան հավանաբար անկողնու տեղ է ծառայեցնում: «Մաղ գիշեր ցրտից կողոցնեմ, գիտե՞ս ինչիս կփչե եղ լուսամուտից», - կնոջ ձայնը դողում է: Վառարանի բաց դռնից ծառի ճյուղեր են երևում, անկյունում՝ պլաստմասե շշեր: «Բարեգործական ճաշարան օրը քանի՞ անգամ ես գնում», - հարցնում եմ Սուսաննային: «Մեկ անգամ, ցերեկը ժամը մեկին կերթամ ճաշ կուտեմ, հետո ոտով մինչեւ 58 թաղամասից վառելիք հավաքելով գուկամ քաղաքի կենտրոն, կեղնի ժամը 5-ը, - ասում է Սուսաննան:

«Տեսնես քաղաքաշինության նախարարը, որ հանձնաժողովի նիստին բանավոր մերժել է Վահան Թումասյանի միջնորդությունը, այս պայմաններում քանի՞ օր կդիմանար, լավ, օր չէ, քանի՞ ժամ», - մարող արեւի վերջին շողերի հետ սա էլ վերջին միտքն է, որ առկայծում է գլխումս, երբ հրաժեշտ եմ տալիս Սուսաննային՝ խոստանալով կրկին այցելել, տաք շոր ու կոշիկ բերել:

Երանուհի Սողոյան

10. Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն
2. ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948թ. դեկտեմբերի 10)
3. Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա (Ստրասբուրգ, 1996թ. մայիսի 3)
4. ՀՀ Կառավարության որոշումներ (18 մայիսի 2006 թ. N 912-Ն, փոփոխություններով և լրացումներով, 11 սեպտեմբերի 2008 թ. N 1024-Ն, 17.04.03թ. 470-Ն)
5. ՀՀ օրենքը Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին (փոփոխություններով և լրացումներով)
6. ՀՀ Հողային օրենսգիրք
7. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք
8. «Իմացիր և գործիր» ձեռնարկ – Երևան 2007, «Միլենիում» կրթական հետազոտական ասոցիացիա
9. «Սեփականության և աշխատանքային իրավունքների պաշտպանության ուղեցույց» - Երևան 2008, «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ
10. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին (13 Նոյեմբեր 2008, 1328 – Ն)
11. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ» դասագիրք, Երևան, 2009թ.



ԳՅՈՒՄՐԻ, 2011